ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-4** (1674) Ապրիլ 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Պատմությունը կրկնվում է (էջ 1-4)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Երևանի և Բաքվի գաղտնի պայմանավորվածությունները (էջ 5-7)

3- Հայ դատ

Արմեն Ց. Մարությյան
Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության ծրագիրը, փուլերը, մեխանիզմներն ու հետևանքները (էջ 8-17)

Անի Մելքոնյան
«Մեկ հայը՝ մեկ ոսկի». հայ որբերի փրկության ազգային գերնպատակից մինչև շրջափակված Արցախի «մոռացված» մանուկներ (էջ 18-20)

4- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
Միջուկային զսպման քաղաքականությունը ԱՄՆ ռազմավարական փաստաթղթերում (էջ 21-24)

5- Սփյուռք

Վազրիկ Բազիլ
Սփիւռքից դէպի սփռում ու վերադարձ (էջ 25-29)

6- Դաշնակցական բեմ

Կարեն Խանլարի Խանլարյան
Հայ քաղաքական միտքը և հայ հեղափոխական շարժումը 19-րդ դարի վերջին, 20-րդ դարասկզբին (էջ 30-34)

7- ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Վերընթերցենք Համաստեղին Համաստեղն ապրիլի 24-ի մասին (էջ 35-37)

8- Դեմքեր և դեպքեր

ԱՒՕ ԳԱԹՐՃԵԱՆ
Քեռի Թադո (փեթարցի Թադո)։ Յեղափոխութեան հաւատարիմն ու անձնուրաց մարտիկը (էջ 38-42)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Համակարգը, որ կ'ուզենք կերտել (էջ 43-44)

Պատմությունը կրկնվում է

Անքննելի ճշմարտություն էր թվում այն բանաձումը, թե «Պատմությունը չի կրկնվում»: Ոչ հեռավոր անցյալում անհնար էր երևակայելը, որ թուրքական հայաջինջ աքցանը կրկին իր մեջ կառնի հայոց հայրենիքը՝ նորօրյա սերունդների մոտ արթնացնելով պետականությունն ու ինքնիշխանությունը կորցնելու զգացողությունը: Արցախյան շարժման և Հայաստանի անկախացման շրջանում Հայաստանում իշխանության եկավ քաղաքական այն հոսանքը, որը վերաքննության հարց դարձրեց հայոց ցեղասպանության պատճառահետևանքային կապերը՝ մեղավորության մեկ բաժինը բարդելով ժամանակի իշխող հայ քաղաքական ուժի, ազգային ազատագրական պայքարի, կամավորական շարժման և ներհայկական այլ գործոնների վրա: Ժամանակակից Թուրքիան ներկայացվում էր միանգամայն փոխված՝ եվրոպական արժեքներով և ձգտումներով ապրող պետություն: Սրանից էլ հետևություն էր արվում վերանայել իրողությունների ու հարևան պետության նկատմամբ ավանդական մոտեցումները, պատմական խնդիրներից զատվել և նոր, բարդրացիական, փոխշահավետ փոխհարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ ելնելով այն սկզբունքից, որ չկան մշտական թշնամիներ, այլ կան մշտական շահեր:

Տեղի ունեցան կիսահրապարակային կամ չհրապարակվող հանդիպումներ բարձր մակարդակի տարբեր պաշտոնյաների միջև և եթե հաշտության հասնելու նորանկախության ակունքներում կանգնած ուժի երազանքները չիրականացան պատճառն այն էր, որ պատմական բնույթի նախապայմաններից հրաժարվելու հայկական կողմի պատրաստակամության դիմաց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար թուրքական կողմը առաջադրում էր իր հստակ նախապայմանները՝ հրաժարվել ցեղասպանության հարցից և միջազգային ասպարեզում դրա հետապնդումից, ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը (նույնն է, թե հայ-թուրքական առկա սահմանը), հրաժարվել արցախյան պահանջատիրությունից: 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի պատմության վերանայման, վերջինիս առնչվող հասարակական, մշակութային, գիտակրթական, քարոզչական նախաձեռնություններից հրաժարման փորձերը, ըստ էության թուրքական նախապայմանների կատարմանն ուղղված քայլեր էին: Իհարկե սրանց թվում օրախնդիրը Արցախյան հարցն էր, որի ուղղությամբ ավելի ու ավելի որոշակիորեն էր Հայաստանի ղեկավարությունը առաջ քաշում «ամեն գնով Ադրբեջանի հետ խաղաղության հասնելու» թեզը: Այն օրերի խորհրդահայ սերունդները, որոնք օժտված էին մեծ հայրենասիրությամբ և ազգային ոգով, ունեին կրթական բարձր ցենզ և արժանապատվության զգացում չհանդուրժեցին ազգային շարժմանը և նպատակներին դավաճանած իշխանության գոյությունը: Հաջորդող երկու իշխանությունների օրոք շարունակվեցին հայ-թուրքական հաշտությանն ուղղված փորձերը, ինչն ակնհայտորեն Արևմուտքի ճնշման հետևանք էր: Այստեղ Արևմուտքի և թուրք-ադրբեջանական դաշինքի շահերը համընկնում էին մեկ գլխավոր հարցում՝ հայ-թուրքադրբեջանական հաշտության և սահմանների բացման պարագայում անիմաստ էր դառնում հայ-թուրքական սահմանի վերահսկողությունը ռուսական զինված ուժերի կողմից, իսկ հայկական կողմը մնացել էր Անդրկովկասում ռուսական ուժի վերջին խարիսխը: Նախագահ Քոչարյանի օրոք հայ-թուրքական հաշտության բանակցությունները կրում էին ձևական բնույթ, նախագահ Սարգսյանը փորձեց այդ բանակցությունները հասցնել հայկական կողմի համար ոչ վնասակար հանգուցալուծման, սակայն զգալով գործընթացի ողջ վտանգավորությունը նախաձեռնեց քայլեր, որոնք անիմաստ դարձրեցին բանակցությունների շարունակումը: Իհարկե այս հարցում մեծ դեր խաղաց ազգային ընդդիմության ծավալած համազգային ընդդիմադիր ալիքը, որից էլ օգտվեց իշխանությունը: Արտաքին քաղաքականության և Արցախի հարցում հարաբերականորեն բարենպաստ 20 տարիների ընթացքում թուրք-արևմտյան դաշինքը հայոց ամրացող բերդը ներսից քանդելու ծրագիր իրականացրեց՝ այստեղ աճեցնելով իր հինգերորդ շարասյունը: Ոչ պատահականորեն այդ շարասյունը գլխավորեց նա ով քաղաքականապես ձևավորվել էր ՀՀՇ-ի խանձարուրում և ոչ մեկ անգամ հրապարակայնորեն արտահայտել էր Արցախի հայկականության, արցախցիների, հայ ժողովրդի անցյալի, հայ ժողովրդի նախորդող սերունդների նկատմամբ իր արգահատանքն ու մերժողական վերաբերմունքը: Վերջինիս առաջնորդությամբ այս ուժի իշխանության գալու առաջին օրերից դրսևորվեց քաղաքականության արմատական փոփոխությունը՝ վերադարձը հիշական իշխանության որդեգրած հակաարցախ և պրոթուրք վարդապետությանը: Վախի, քաղաքական շփոթի շրջապտույտում ամբոխի վերածված զանգվածները ողջ այս ընթացքում սնուցվում են երկու հիմնական և կեղծ թեզերով «այսօրվա բոլոր պարտությունների ու ձախողությունների պատճառը նախկիններն են» և

«մենք խաղաղություն ենք բերում, եթե չլինենք մենք՝ գալու են նախկինները, ովքեր կբերեն նոր պատերազմ»:

Իրականում լկտիացած թշնամու ագրեսիվ քաղաքականության նկատմամբ հայկական կողմի դիմադրության իսպառ բացակայությունը ավելի ու ավելի է սրում ադրբեջանական նորանոր ռազմական և այլ սադրանքների, առաջխաղացումների, հնարավոր լայնածավալ բախումների հավանականությունը:

168.am կայքէջի սույն թվականի ապրիլի 11-ի թողարկման մեջ խոսվում է ամերիկյան «Ստրատֆոր» վերլուծական կենտրոնի փորձագետների ուսումնասիրության մասին, ըստ որի Ադրբեջանը Հայաստանի սահմաններին ռազմական լայնածավալ գործողությունների չի գնա, քանի որ իր նպատակներին հասնում է փոքր քայլերով: «Քանի դեռ բանակցությունները կանգ են առել, ավելի հավանական է, որ Ադրբեջանը կդիմի հրադադարի փոքր մասշտաբի խախտումների՝ Լեռնային Ղարաբաղում մարտավարական շահավետ դիրքեր գրավելու կամ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով նմանատիպ գործողություններ կատարելու համար»,- նշվել է զեկույցում: Այնուհետև ասվում է. «Ամեն անգամ, երբ ադրբեջանական ուժերն առաջընթաց են ունենում, դա բարելավում է նրանց մարտավարական դիրքերը, նույնիսկ, եթե տարածքային այդ առաջխաղացումը մի քանի մետր է: Այդ մանյովրները նաև մեծացնում են Ադրեջանի կառավարության բանակցային հնարավորությունները»: «Ստրատֆորի» վերլուծաբանները նշել են, որ այդ ռազմավարությունը Ադրբեջանին թույլ է տալիս շարունակել ամրապնդել իր դիրքերն ու նպատակներին հասնելու քայլերը՝ առանց միջազգային հանրության կողմից դատապարտվելու, հավանական է՝ նաև պատժամիջոցների տակ ընկնելու ռիսկերի: Ըստ վերլուծաբանների չնայած Հայաստանի իշխանությունները ջանքեր են գործադրում արտաքին ուժերի միջնորդությամբ հասնելու գործընթացների և հարաբերությունների բարելավման Երևանը հազիվ թե կարողանա ձեռք բերել մի այնպիսի արտաքին գործընկերություն, որը լրջորեն կխանգարի Ադրբեջանին հասնելու իր նպատակներին:

2020 թվականի խայտառակ պարտության և դրանից հետո չդադարող Ադրբեջանի նվաճողական քաղաքականության պայմաններում Հայաստանի իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկում բանակի հզորացման, սահմանների ամրապնդման ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանը շարունակում է իր ստախոսությունը աննախադեպ ռազմական ծախսերի, ռազմական տեխնիկայի ձեռքբերումների մասին, բայց ակնառու փաստ է, որ հայկական ռազմական ուժը, մեղմ ասած, գտնվում է հակառակորդի նկատմամբ միանգամայն անպատրաստ վիճակում: Ասվածի ապացույցը այն նահանջներն ու կորուստներն են, որ մենք ունեցել ենք 2020 թվականից այս կողմ՝ ինչի մասին խոսում են նաև «Ստարտֆորի» վերլուծաբանները: Իր անվերջանալի հռետորաբանության ընթացքում երկրի վայ ղեկավարը մեղադրում է բոլորին, (նախկին իշխանություններից սկսած մինչև ներկա ընդդիմություն, զինվորականություն, անվտանգության համակարգ, մինչև Ռուսաստան և այլն) իսկ ինքը և երկրի մյուս բարձրագույն պաշտոնյաները խոսում են Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու հարցում միմիայն արտաքին ուժերի միջամտության, նրանց կողմից Հայաստանի սահմանները պաշտպանելու մասին և երբեք չի ասվում, թե մենք կուժեղացնենք մեր բանակը և կկարողանանք ինքներս մեզ պաշտպանել: Այնինչ աշխարհում այդպիսի բան չի եղել և չի լինի, երբ որևէ երկրի իշխանություն երկրի անվտանգությունն ապահովելու իր թիվ մեկ պարտականությունը չկատարի և ուրիշները գան կռվեն նրա փոխարեն: Ի դեպ այստեղ նաև բնականորեն խնդիր է ծագում, թե անկախ անցած ընտրությունների արդյունքներից կարելի է իր անմիջական և գլխավոր պարտականությունը չիրականացնող և այդ պարտականության կատարումը արտաքին ուժերից հայցող իշխանությանը համարել լեգիտիմ: Իսկ եթե նման իշխանությունը համարվի լեգիտիմ, այդ պարագայում հարց է դառնում, թե որքանով կարելի է տվյալ երկիրը համարել ինքնիշխան: Այս ամոթալի ու խայտառակ քաղաքականության վկայություններից է սույն թվականի մարտի 13-ին անցկացրած մամուլի ասուլիսում (մարտ ամսվա «Առաջնորդողում» խոստացել էինք անդրադառնալ այս ասուլիսի և դրան նախորդող գերմանահայերի հետ հանդիպման ժամանակ վարչապետի հնչեցրած արտաքին քաղաքական և անվտանգային խնդիրներին) Փաշինյանը մի քանի անգամ կրկնում է թե Հայաստանում որևէ ծրագիր իրականացնելու համար ֆինանսական խնդիր չկա և միևնույն ժամանակ ասում է, թե. «Առաջնագծի կահավորման հետ կապված կան պրոբլեմներ, բայց դրանք ֆինանսական չեն, էդ պրոբլեմները կազմակերպչական են, էդ պրոբլեմները ինժեներական են....» և այդպես շարունակ: Այսինքն այն վիճակը, երբ սահմանների անպաշտպան լինելու պատճառով թշնամին խախտելով մեր պետության սահմանները, սպանելով մեր զինվորներին գրավում և սեփականում է Հայաստանի տարածքը, ըստ երկրի ղեկավարի կազմակերպչական հարցերի հետ է կապված: Այստեղ էլ բնականորեն ծագում է այն հարցը, թե երկրի պաշտպանությանն ուղղված տարրական միջոցառումների չիրականացումը ինչով պետք է բացատրել՝ անկարողությամբ, թե՞ ինչ-ինչ պատճառներով այդ խնդիրների լուծումից հրաժարվելով: Նույնն, ի դեպ, վերաբերում է նաև պարտությունից հետո զանազան պատճառաբանություններով բանակը չվերազինելու իրողությանը: Պատերազմի հետևանքով, ինչպես և առանց պատերազմի, հայկական տարածքների մեկ քառորդը զիջելուց հետո Հայաստանի ղեկավարը Արցախի իշխանություններին մղում է բանակցելու Ադրբեջանի հետ, հրաշալի իմանալով, որ նման բանակցություններում Արցախը ինքնուրույն չի կարող ինքնիշխանության հարց պաշտպանել: Փաշինյանն ըստ էության հանձնում է Արցախը՝ բանակցությունների արդյունքում ամրագրված Արցախի կարգավիճակի հարցից հրաժարվելով և, ի զարմանս նաև արտաքին ուժերի, միջազգային հարթակներում քննարկման հարց դարձնելով արցախցիների անվտանգության և հումանիտար բնույթի այլ խնդիրները՝ բնականաբար ադրբեջանական գերիշխանության ներքո: Իհարկե

երեսուն տարուց ավելի անկախ ապրած Արցախի հիմնահարցն այս մակարդակի իջեցնելը նշանակում է առհասարակ թաղել այն քանի որ անգամ Փաշինյանի համար ակնհայտ է նման պարագայում Արցախի հայաթափման, եթե ոչ ցեղասպանության՝ հեռանկարը:

Վերջին օրերին Փաշինյանը նաև հայտարարում է, թե. «Մենք պատրաստ ենք ՀՀ-Ադրբեջան 1991-ի սահմանային գծի ողջ երկայնքով զորքերը հետ քաշել ապահով հեռավորության վրա»: Այսինքն սա էլ նշանակում է, որ վայ ղեկավարը պատրաստակամ է հանձնելու բոլոր անկլավները և իհարկե ոչ մի բառ չկա, թե այդ ամենի դիմաց հայկական կողմը պետք է ստանա ինչ որ բան:

Նիկոլ Փաշինյանը հաճախ ասում է, թե Ադրբեջանը չի պահպանում պայմանավորվածությունները, խաղաղություն չի ուզում, որ ինքը չգիտի թե մինչև ինչքան է Ադրբեջանի ուզածը: Նաև բոլորից լավ հենց նա գիտի, որ Ադրբեջանը խախտում է 2020 թվականին կնքած հայտարարության բոլոր կետերը: Սրանով հանդերձ Փաշինյանը ցանկանում է հավատացնել հայ ժողովրդին, թե խաղաղության պայմանագիր կնքելու դեպքում բոլոր խնդիրները վերջնականապես կլուծվեն: Ի դեպ մի՞թե 20 թվականի հայտարարությունը խաղաղություն հաստատելու համար չէ՞ր: Իհարկե Փաշինյանը հրաշալի գիտի, որ Ադրբեջանը ցանկացածը ստանալուց հետո շարունակելու է առաջ գալ, ամեն օր Հայաստանի ագրեսիվ գործողությունների մասին նոր սուտ հորինելով, բայց քանի որ Հայաստանի ղեկավարի հիմնական խնդիր իր աթոռը պահպանելն է և դրա դիմաց նա պատրաստ է երկրի տարածքների անվերջ զիջումների ով չի ցանկանա օգտվել պատմական այդպիսի հնարավորությունից: Փաշինյանը քայլ-քայլ հրաժարվում է նաև հայ-ռուսական ռազմական համագործակցությունից, ինչը նշանակում է, որ ոչ հեռավոր ապագայում Հայաստան-Թուրքիա սահմանները դառնալու են անպաշտպան կամ դրանք կհսկեն խորհրդանշական թվով հայ զինվորներ: Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունից Հայաստանի հրաժարվելու անհրաժեշտության մասին այսօր բացահայտորեն խոսում են Արևմտյան դիվանագետները միաժամանակ բացառելով, թե իրենց որևէ մեկ զինվորը կգա Հայաստանը պաշտպանելու: Փաշինյանին հուզողն իհարկե ոչ թե Հայաստանի, այլ իր պաշտպանության հարցն է: Կատարելով Արևմուտքի թելադրանքը նա կստանա վերջինիս լոյալ վերաբերմունքը ներքին բիրտ ու անօրինական քաղաքականության իրականացման հարցում: Աշխարհի անտարբեր աչքի առջև ներքին ճնշումներով պաշտպանելով աթոռը, Անդրկովկասից դուրս մղելով Փաշինյան-Ալիև-Էրդողան դաշինքին խանգարող Ռուսաստանին Հայաստանի ղեկավարը կկարողանա երկարաձգել իր իշխանությունը վերածվելով թուրք-ադրբեջանական դաշինքին վաճառված Հայաստանի մարզպանի: Եւ սա ոչ չափազանցություն է ոչ հերյուրանք, այլ մի ծրագիր, որը հենց այժմ իրականացվում է:

Պատահական չէ, որ 2023 թվականի մարտի 3-ին Գերմանիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ Փաշինյանն ասում է. «Իմ կարծիքով հային ոչինչ չի սպառնում, բայց Հայաստանի պետությանը սպառնում ա»: 2022 թ. հեռուստատեսային մի հարցազրույցի ժամանակ Փաշինյանն ասում էր, թե դրսում կասկածում են արդյոք Հայաստանի պես երկիրը կարող է անկախ պետություն լինել: 2023 թվականի ապրիլին, արդեն Հայաստանի խորհրդարանում Փաշինյանն ասում է.«Ոգևորված 2020 թվականին տարած հաղթանակով Ալիևը ցանկանում է Հայաստանից տարածքներ գրավել որքան կարելի է շատ, իսկ եթե հնարավոր լինի նաև ամբողջը»: Կարելի՞ է պատկերացնել, որևէ այլ երկիր, որի ղեկավարը նման արտահայտություններ է թույլ տալիս իրեն և այն էլ ոչ թե համազգային համախմբում առաջ բերելու, պետության պաշտպանության համար ամենաարտակարգ միջոցառումների ձեռնամուխ լինելու համար, այլ որպես ի գիտություն: Այլ խոսքով՝ հայ ժողովուրդ իմացիր, որ այսպիսի բան էլ կարող է պատահել:

Ազգային մեծ ողբերգության ամսին հայոց պետականության և հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ իրականացվող անհավասարակշիռ ու արկածախնդրական խաղերը հուշում են, որ նման նոր ողբերգությունը մեզնից հեռու չէ և ոչ թե կործանումն է գալիս, այլ մենք ենք գնում նրան ընդառաջ: Խաղաղության այսօրվա միակողմանի ձգտումները հայության տարբեր շրջանակների երազանքն են եղել 1915 թվականին, պետության ղեկին տիրացած բոլշևիկների համար 1920-21 թվականներին, ինչպես և 100 տարի անց հիշականների համար: Բոլոր այս ուժերի բարի ցանկություններին և զիջումներին թուրքական կողմերը պատասխանել են նոր ջարդերով, թալանով ու զավթումներով:

Հիշենք, թե ինչ էր ասել Վեհիբ փաշան հայ պատվիրակներին 1918 թվականին տեղի ունեցած Բաթումիի բանակցությունների ժամանակ. «Դուք կը տեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արևմուտքէն արևելք: Մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաև Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արևելք, հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու մեր լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի, մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան և Ատրպէյճան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք և մեզի ճամբայ տաք: Ահա թէ ո՛ւր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ, միւսը կ՚երթայ Շարուր-Նախիջևան Զանգեզուրով Կուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն՝ Նոր-Պայազիտի (այժմ՝ Կամօ) և Էջմիածնի շուրջը»:

Չգիտի՞ չի՞ ենթադրում Փաշինյանը, որ բոլորովին տարբեր են մեր և թուրքական երկու պետությունների

պատկերացումները խաղաղության մասին: Վստահ եմ, որ դրանք իր և իր թիմակիցների համար ակնառու են դառնում հայ ժողովրդի թիկունքում տեղի ունեցող բանակցությունների ժամանակ: Ակնառու է, որ Զանգեզուրի Թուրանական միջանցքով Ադրբեջանից ավելի շահագրգռված է Թուրքիան, որը որոշ պահից սկսած հրաժարվեց այդ հարցը հրապարակայնորեն արծարծելուց, որպեսզի չցուցադրի ի շահ պանթուրքիստական ծրագրերի ինքնիշխան երկրի տարածքի նկատմամբ անօրինական հավակնությունները: Կասկած չկա, սակայն որ այս և ուրիշ հարցեր թուրքերը բանակցությունների սեղան են բերում Հայաստանի պարտվողական իշխանության ներկայացուցիչների հետ առանձին հանդիպումների ժամանակ:

Եթե ՀՀՇ-ի ժամանակներում դեռ կարելի էր տեսական վեճի հարց դարձնել՝ փոխվել է Թուրքիան, իր ցեղասպանական հավակնություններով հանդերձ, ապա արդյո՞ք պատասխանը ակնհայտ չդարձավ 2020 թվականի պատերազմի ժամանակ: Ակնհայտ չէր՞, արդյոք, Թուրքիայի առանցքային դերակատարությունը արցախահայության նկատմամբ ցեղասպանական ծրագրի ղեկավարման, հակառակորդ ուժի ռազմական տեխնիկայի ապահովման հարցերում և անգամ վերջինիս սահմանափակ զորամիավորումների մասնակցությունը ռազմական գործողություններին: Ակնհայտ չէ, որ ողջ այս ընթացքում տարածաշրջանում իրավիճակի փոփոխության հարցում Ադրբեջանի թիկունքում հենց Թուրքիան է գործում: Մի՞թե ակնհայտ չէ՞ նաև, որ բոլոր հարևանների հետ, ինչպես և Միջին Ասիայում, Աֆրիկայում Բալկաններում, և հենց Ռուսաստանի դեմ վերջին տասնամյակներին Թուրքիան վարում է խիստ ագրեսիվ, իրենց իսկ բնորոշմամբ նեօօսմանական քաղաքականություն: Հայտնի խոսք է, որ խելոքը սովորում է ուրիշների, իսկ անխելքը սեփական սխալների վրա: Իսկ ինչ ասել նրանց ովքեր սեփական ողբերգությունից անգամ դասեր չեն առնում: Խոսքս Նիկոլի և նիկոլականների մասին չէ, նրանք շատ լավ գիտեն, թե ինչ են անում: Խոսքը այս իշխանությանն այսօր հենարան ծառայող հայերի մասին է: Եթե նրանք կարծում են, թե պետությունը, հողը, կինը, պատիվն ու ինչքը զիջելով ֆիզիկական ապահովություն կստանան թուրքից չարաչար սխալվում են: Թող դարձյալ հայացք նետեն այսօրվա, երեկվա ու հարյուր տարի առաջվա իրադարձությունների վրա: Դժբախտաբար պատմությունը կրկնվում է:

Հ.Գ.

2023 թ. ապրիլի 18-ին, կառավարության հաշվետվությունը ներկայացնելու ժամանակ, Նիկոլ Փաշինյանը կրկին անդրադարձավ արտաքին խնդիրներին և հայտարարեց, որ եթե արտաքին ուժերը երաշխավորեն Հայաստանի համար խորհրդային ժամանակի սահմանները, ինքը պատրաստ է խաղաղության պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ: Հայաստանի ղեկավարի ուղերձը ճիշտ ընկալեց Ալիևը և նույն օրը հայտարարեց, թե Փաշինյանը պետք է ավելի հստակորեն հայտարարի, որ Ղարաբաղի հետ կապված Հայաստանը որևէ պահանջ չունի: Մեկ օր լռելուց հետո Ռուսաստանից հնչեց, այսպես ասած, ոչ պաշտոնական արձագանքը: Օգտագործելով լրագրողների հետ շփվելու առիթը Ռուսաստանի նախագահի օգնական Դմիտրի Պեսկովը ասաց հետևյալը. «Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև ձեռք բերված եռակողմ պայմանավորվածությունները (ղարաբաղյան խնդրի և հայ - ադրբեջանական հարաբերությունների) կարգավորման միակ իրական և իրատեսական հիմքն են», «Կարծում ենք, որ այդ բոլոր պայմանավորվածությունների կյանքի կոչումը այլընտրանք չունի և անհրաժեշտ է բոլոր կողմերին», «Մենք պատրաստ ենք ողջունել կողմերի ցանկացած քայլը, որ ի վիճակի է նպաստել լարվածության թուլացմանն ու ռուս-հայ-ադրբեջանական եռակողմ համաձայնագրերի կատարմանը»:

Եթե ասվածը վերծանենք ոչ դիվանագիտական լեզվով, ապա պարզ է դառնում, որ Ռուսաստանը զգուշացնում է, թե իրեն շրջանցելով երկկողմ կամ որևէ այլ ձևաչափով Անդրկովկասի քաղաքական պատկերը փոխելու փորձերը անիմաստ են: Որ նման պայմանավորվածությունները չեն կարող լինել վերջնական և լուծել առկա խնդիրները:

Մենք գոնե սրանից պետք է անենք այն հետևությունը, որ Արցախից հրաժարվելու, Հայաստանի ինքնիշխանությունը վտանգելու հաշվին Ռուսաստանին լծակներից զրկելու և Անդրկովկասից դուրս մղելու թուրքարևմտյան ծրագրի իրականացումը, որի համար իշխանության է բերվել փաշինյանական գործակալական ցանցը, դատապարտված է ձախողման: Մեր խնդիրը իհարկե ռուսները չեն և ոչ էլ Անդրկովկասի համար գերուժերի մրցակցությունը, որը վստահաբար թեժանալու է այն բանից հետո, երբ Ռուսաստանը հարցերը կլուծի Ուկրաինական ճակատում: Մեր խնդիրը Հայաստանի և Արցախի փրկությունն ու հետագա հզորացումն են, ինչը հնարավոր է միայն ազգային շահերով առաջնորդվող իշխանությունների ձևավորման դեպքում: Այն իշխանության, որը առաջնահերթ կհամարի տարածաշրջանում հայկական գործոնի վերականգնումն ու հզորացումը և, Քրիստափոր Միքայելյանի բանաձևի համաձայն, օտարների շահի մեջ կտեսնի ու կհետապնդի հայոց շահը: Անդրկովկասը նոր պատերազմական օջախի վերածելու փորձերը մեզ համար չեն: Նոր ապրիլի 24 մենք մեր գլխին բերել չենք կարող՝ այս մեկը, եթե լինի, կլինի մեր վերջին փորձությունը: Հետևաբար մեր պայքարը ևս այլընտրանք չունի:

Հղումներ

1- Ալ.Խատիսեան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, Պէյրութ, բ. տպագրութիւն 1968 թ. էջ 86

Երևանի և Բաքվի գաղտնի պայմանավորվածությունները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Հայ-ադրբեջանական հարաբերություններում զարգացումները նոր փուլ են թևակոխել: Պաշտոնական հայտարարություններում այս փաստը դեռևս տեսանելի չէ, սակայն գետնի վրա տեղի ունեցող զարգացումները վկայում են իրավիճակ փոխող ակտիվ գործընթացների մասին: Այսպես՝ մարտի 25-ին Շուշի-Լիսագոր հատվածում Ադրբեջանի զինված ուժերը խախտել են 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված շփման գիծը և որոշակի դիրքային առաջխաղացում ապահովել Արցախի Հանրապետության տարածքում[1]: Մի քանի օր անց ադրբեջանական կողմը նոր դիրքեր է տեղադրել նաև ՀՀ տարածքում՝ Սյունիքի մարզի Տեղ գյուղի հողերում[2]:

Ադրբեջանի այս ագրեսիվ գործողություններին հայկական կողմը համարժեք պատասխան չի տվել: Ավելին, ըստ Երևանից հնչող հայտարարությունների՝ հայկական կողմն իրավիճակին մոտենում է էսկալացիա թույլ չտալու տրամաբանությամբ: Բնականաբար, Ադրբեջանն օգտվում է Հայաստանի այս մոտեցումից և ամեն հաջորդ շրջափուլին նոր, ավելի հանդուգն քայլեր է կատարում հայկական երկու պետությունների հետ հարաբերություններում:

Մյուս կողմից՝ գնալով ավելի ու ավելի հիմնավոր են դառնում կասկածներն այն մասին, որ Ալիևն ու Փաշինյանը կրկին սկսել են սինխրոն գործել: Մեկ կողմի ակտիվության լույսի ներքո մյուսի տոտալ անգործունեությունն այլ բան չի կարող նշանակել: Դա է պատճառը, որ մենք դառնում ենք Հայաստանի և Ադրբեջանի միջև իրականացվող սահմանագծման և սահմանազատման գործընթացի ականատես: Ընդ որում, ինչպես դրա մասին բազմիցս նշել է Իլհամ Ալիևը, այդ գործընթացն անց է կացվում Ադրբեջանի պայմաններով. վերջիններս ստրատեգիական նշանակության բնագծեր են գրավում ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի ուղղություններով:

Կարծում եմ՝ շատերն են արդեն հասկացել Ալիև-Փաշինյան զույգի գործելաոճը: Նստում, միմյանց հետ գաղտնի պայմանավորվածություններ են ձեռք բերում, հետո դրանք կյանքի կոչելու պատասխանատվությունը դնում են միջին և ցածր օղակների վրա: Որքան ցածր, այնքան լավ: Արդյունքում այնպիսի վիճակ է ստեղծվում, որ, օրինակ, բանակային կորպուսների կամ նույնիսկ գնդերի հրամանատարները ադրբեջանցիների հետ են «բանակցում» ու փաստացի սահմանազատում իրականացնում: Իսկ երբ որևէ բան ընթանում է ոչ այնպես, ինչպես «պետք է», հենց իրենք էլ պատասխանատվության են ենթարկվում:

Սա ձեռք բերված պայմանավորվածությունները գաղտնի կյանքի կոչելու քաղաքականություն է: Հայաստանի հանրությունը գրեթե տեղյակ չէ, թե ինչ է կատարվում սահմանում: Նույնիսկ սահմանամերձ շրջանների բնակիչներն են անտեղյակ: Այս կամ այն իրադարձությանը նրանք արձագանքում են միայն այն բանից հետո, երբ իրենց աչքով տեսնում են իրենց վարելահողերի վրա մարտական դիրք տեղադրող թշնամուն: Իսկ պետությունը, ինչպես նշեցինք, ամեն ինչ անում է, որպեսզի հանրությունը շարունակի անտեղյակ լինել գետնի վրա տեղի ունեցող զարգացումներից: Այսպես՝ Տեղ գյուղում թշնամու կողմից ՀՀ տարածքներ ներխուժելու փաստի հայտնի դառնալու հաջորդ օրը՝ ապրիլի 1-ին, ՀՀ ԱԱԾ-ն նոր հայտարարություն տարածեց, որտեղ նշվում էր. «Տեղ-Կոռնիձոր հատվածում հանդիպում է տեղի ունեցել ՀՀ և ԱՀ ներկայացուցիչների միջև, իրականացվել են սահմանի ճշգրտման աշխատանքներ, որոնց շնորհիվ տվյալ հատվածում իրավիճակը էականորեն բարելավվել է»[3]: Ահա այդ «էականորեն բարելավված» իրավիճակում էլ ապրիլի 11-ին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները կրակ են բացել Տեղ համայնքի հատվածում ինժեներական աշխատանքներ իրականացնող ՀՀ ԶՈՒ զինծառայողների ուղղությամբ[4]: Բախումների հետևանքով 4 հայ զինվոր է զոհվել…

Արդեն հիշատակված գաղտնի պայմանավորվածություններով է բացատրվում նաև այն փաստը, որ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների և արտաքին գործերի նախարարության մակարդակով հայտարարությունները բավական զգուշավոր են:

Ավելին, պաշտոնական Երևանն ու Բաքուն ամեն ինչ անում են, որպեսզի միջնորդ երկրները հնարավորինս քիչ միջամտեն իրենց հարաբերություններին: Փաշինյանի ու Ալիևի ջանքերով զգալիորեն պասիվացել են ոչ միայն Մոսկվայի, այլև Բրյուսելի և Վաշինգտոնի միջնորդական ջանքերը: Արդեն քանի ամիս է վերջիններիս չի հաջողվում Հայաստանի և Ադրբեջանի ո՛չ արտգործնախարարների, ո՛չ էլ առավել ևս ղեկավարների հանդիպում կազմակերպել:

Ստեղծված վիճակն, իհարկե, ձեռնտու է ադրբեջանական կողմին: Ինչպես արդեն նշեցինք, Ադրբեջան-Արցախ և Ադրբեջան-Հայաստան հարաբերություններում ամեն ինչ այս ամիսներին փոխվում է հօգուտ Ադրբեջանի: Ըստ այդմ՝ հարց է առաջանում. Փաշինյան-Ալիև պայմանավորվածություններում կա՞ն արդյոք Ադրբեջանի համար սահմանված լիմիտներ: Այսինքն՝ ո՞րն է հայկական կողմի զիջումների այն սահմանը, որից անդին Ալիևը ստիպված կլինի զսպել իր ախորժակը: Եվ եթե կա նման սահման, ինչը հուսով ենք, որ այդպես է, ապա ո՞վ է գծել այդ սահմանը:

Վերջին ամիսներին հայ-ադրբեջանական սահմանում տեղի ունեցող իրադարձությունները բավական մեծ արձագանք են գտնում հարևան Իրանում: Պաշտոնական Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ Հարավային Կովկասի քաղաքական քարտեզի փոփոխությունն իր համար անընդունելի է: Ավելի համոզիչ լինելու համար իրանական կողմը պարբերաբար զորավարժություններ է անցկացնում Հայաստանի և Ադրբեջանի հետ սահմանում՝ հընթացս ուղիղ սպառնալիքներ հղելով ադրբեջանցիներին: Այդ երկու երկրների հարաբերություններն աննախադեպ լարվածության փուլում են: Փորձագետները նույնիսկ չեն բացառում Ադրբեջանի և Իրանի միջև ռազմական բախման հնարավորությունը: Պատճառը մեկն է՝ ՀՀ տարածքով դեպի Նախիջևան տանող միջանցք ունենալու Ադրբեջանի ցանկությունը: Իրանում թուրք-ադրբեջանական դաշինքի այդ ծրագիրը երկրի անվտանգությանը սպառնացող լուրջ մարտահրավեր են ընկալում:

Թվում է՝ այս փուլում Իրանն առաջինն է որոշակի կարմիր գծեր գծել Ադրբեջանի համար և ամեն ինչ անում է, որպեսզի Ալիևի վարչակազմն այդ գծերը չխախտի: Սակայն խնդիրն այն է, որ Թեհրանի ու Երևանի հարաբերությունները շատ հեռու են վրստահելի լինելուց: Պատճառը ՀՀ իշխանությունների խիստ արևմտամետ քաղաքականությունն է: Հատկապես այն բանից հետո, երբ Հայաստանն Ադրբեջանի հետ սահմանում եվրոպացի դիտորդներ տեղակայեց, հայ-իրանական հարաբերություններն էլ ավելի լարվեցին: Իրանի՝ տասնամյակներ շարունակ իրականացվող քաղաքականության հիմնական նպատակներից մեկն իր սահմաններում արևմտյան ուժերի ներկայության բացառումն է եղել: Իսկ հիմա իրենց համար ռազմավարական առանձնահատուկ կարևորություն ունեցող Հարավային Կովկասում եվրոպացի դիտորդներ են տեղակայվել, որոնք, ըստ մամուլում հայտնվող տեղեկությունների, նաև հետախուզական գործառույթներ են իրականացնում:

Իրանում այս փաստը միանշանակ գնահատականի է արժանացել: Ընդ որում, եվրոպացի դիտորդների պատճառով լարվել են ոչ միայն հայ-իրանական, այլև ռուս-իրանական հարաբերությունները: Խնդիրն այն է, որ Հարավային Կովկասը Թեհրանում ընկալվում էր որպես ռուսական պատասխանատվության գոտի, և հիմա իրանական կողմը մեղադրում է Ռուսաստանին մեր տարածաշրջանում իրավիճակը վերահսկողությունից դուրս թողնելու մեջ:

Ելնելով այս ամենից՝ Իրանում որոշել են ինքնուրույն զբաղվել Հարավային Կովկասի խնդիրներով: Իսկ դա նշանակում է, որ կարմիր գծեր են գծվել ոչ միայն Ադրբեջանի, այլև Հայաստանի համար: Թեհրանում չեն բացառում մեր տարածաշրջանում իրենց շահերը պաշտպանելու նույնիսկ ռազմական միջոցները: Սա, իհարկե, ծայրահեղ սցենար է, բայց այն քննարկվում է: Դրանով հանդերձ, սակայն, Իրանը դեռևս սպառված չի համարում Հայաստանի և Ռուսաստանի հետ անվտանգության հարցերում համագործակցության հնարավորությունը: Պարզապես իրանական կողմը ցանկանում է, որ այս երկու երկրներն ավելի հետևողական լինեն տարածաշրջանում թուրքական գործոնի ուժեղացման դեմ պայքարում և թույլ չտան այլ երկրների մուտք գործել Հարավային Կովկաս:

Հայաստանում և Արցախում Ադրբեջանի հնարավորությունները սահմանափակելու հարցում պետք է հետաքրքրված լինի նաև Ռուսաստանը: Կարծում ենք՝ այդպես էլ կա, սակայն ավելի երկարաժամկետ հեռանկարում: Մեր օրերում Ռուսաստանը միայն մեկ խնդիր ունի՝ Ուկրաինան: Մոսկվայում համարում են, որ Ուկրաինայում իրենք պատերազմում են ամբողջ

Արևմուտքի դեմ և վստահ են, որ այդ պատերազմում հաղթելուց հետո կկարողանան շատ արագ շտկել իրավիճակը նաև այլ տարածաշրջաններում: Թուրքիայի աջակցությունը շատ կարևոր է Ռուսաստանի համար: Այդ իսկ պատճառով Մոսկվան չի ցանկանում որևէ այնպիսի քայլ անել, որը խնդիրներ կառաջացնի Անկարայի հետ հարաբերություններում: Հուրախություն Ռուսաստանի՝ Հայաստանի իշխանությունները գործնականում ոչինչ չեն անում, որպեսզի ռուս-թուրքական համագործակցությունը չլինի ի հաշիվ հայկական շահի: Անշուշտ դա ցանկալի չէ նաև Ռուսաստանի համար, բայց, ինչպես արդեն նշեցինք, ժամանակավոր լուծում է, որն օգնում է ռուսական կողմին խնդիրներ լուծել Ուկրաինայում:

Այս ամենը ցույց է տալիս, որ իրավիճակը Հարավային Կովկասում բավական անորոշ է: Այստեղ առկա է ամեն ինչ՝ և՛ թուրք-ադրբեջանական դաշինքի էքսպանսիա, և՛ Ռուսաստանի հարմարվողականություն, և՛ Իրանի դիմադրություն, և՛ Հայաստանի զիջողականություն…

Մինչդեռ հայկական երկու պետությունների շահը պահանջում է բացառապես մեկ բան՝ դիմադրություն: Դրա քաղաքական ռեսուրսը Հայաստանն ունի: Ճիշտ կառավարման պարագայում կարող է ունենալ նաև տնտեսական և ռազմական ռեսուրսներ: Պաշտոնական Երևանը պարզապես պարտավոր է անվտանգության հարցերում համագործակցել Իրանի և Ռուսաստանի հետ՝ իր ճիշտ վարքագծով պարտադրելով այս երկու հզոր երկրներին Թուրքիային և Ադրբեջանին զսպելու քաղաքականություն իրականացնել: Փոխարենը, ինչպես արդեն նշեցինք, Փաշինյանի կառավարությունը գնում է Ալիևի հետ գաղտնի պայմանավորվածությունների և Արևմուտքի հետ համագործակցելով՝ Ռուսաստանի ու Իրանի ազդեցությունը Հարավային Կովկասում նվազեցնելու ճանապարհով: Փաշինյանի այս քաղաքականությունն ամեն օր ծանր հետևանքներ է առաջացնում Հայաստանի և Արցախի համար: Իսկ հայ հանրությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով շարունակում է հանդուրժել Նիկոլ Փաշինյանի իշխանությունը: ■

Տեղ գյուղը

Հղումներ

1. Ադրբեջանը խախտել է եռակողմ հայտարարությամբ ամրագրված շփման գիծը և որոշակի դիրքային առաջխաղացում ապահովել, 25.03.2023 թ., https://armenpress.am/arm/news/1107223.html:

2. ՀՀ ԱԱԾ հաղորդագրություն, 30.03.2023 թ., https://www.sns.am/hy/news/view/830:

3. ՀՀ ԱԱԾ հաղորդագրություն, 01.04.2023 թ., https://www.sns.am/hy/news/view/834:

4. ՀՀ պաշտպանության նախարարություն, 11.04.2023 թ., https://mil.am/hy/news/11402:

Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության ծրագիրը, փուլերը, մեխանիզմներն ու հետևանքները

Արմեն Ց. Մարուքյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Օսմանյան կայսրությունում հայերին բնաջնջելու ծրագիրն առաջին անգամ քննարկվել է 1911 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 9-ը տեղի ունեցած «Միություն և առաջադիմություն» կուսակցության 4-րդ համագումարի նիստերի ընթացքում: Համագումարի փակ նիստում հավանության է արժանացել Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին հայերի և հույների բռնի թուրքացման ծրագիրը, որով ի թիվս այլ միջոցների՝ նախատեսվում էր նաև այդ բնակչության տեղահանությունը և ոչնչացումը ճանապարհին կամ վերաբնակեցման վայրերում[1]:

Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո, 1915 թ. հունվարի կեսերին Թալեաթի նախագահությամբ և երիտթուրք պարագլուխներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի, Էնվերի, Ջավիդի, Հասան Ֆեհմիի և մյուսների մասնակցությամբ հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն, որի ընթացքում վերահաստատվում է հայերին բնաջնջելու՝ իշխող կուսակցության Սալոնիկի ժողովում ընդունված որոշումը, և նախատեսվում են կոնկրետ գործողություններ: Ընդունվում են, այսպես կոչված, «10 պատվիրանները», որոնցով հայերի դեմ նախատեսվում էին հետևյալ գործողությունները՝ բոլոր պետական պաշտոններից նրանց հեռացում, հայկական բոլոր միությունների փակում, բանակում գտնվող բոլոր հայերի ոչնչացում, հայերի մոտ եղած զենքերի բռնագրավում, մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, ինչպես նաև հոգևորականների և ուսուցիչների ոչնչացում, աղջիկների և երեխաների կրոնափոխում, հայերին կոտորելու գործում մահմեդական բնակչության ներգրավում, հայերի ընտանիքների փրկված անդամների տեղահանում[2]: Սույն հրահանգները պետք է պահվեին հույժ գաղտնի, իսկ նշված գործողություններն ամենուրեք պետք է սկսվեին միաժամանակ՝ հայերին որևէ կերպ պաշտպանվելու կամ դիմադրելու հնարավորություն չընձեռելով:

Իրեն հասանելի դարձած թուրքական արխիվային վավերագրերից թուրք պատմաբան Աքչամը փորձել է առանձնացնել ոչ մահմեդական բնակչության, առաջին հերթին հայերի զանգվածային տեղահանության հետևյալ պատճառները՝ սպառնալիքի զգացում, ռազմական պատճառներ, քաղաքական մտահոգություններ, մահմեդական գաղթականների վերաբնակեցում և այլն[3]: Դժվար չէ նկատել, որ թվարկված «պատճառներն» իրականում թուրքական իշխանությունների հանցավոր գործողությունները «հիմնավորող» արդարացումներ են: Կայսրության տեղաբնիկ ժողովուրդներին, առաջին հերթին հայերին իրենց բնակավայրերից բռնի տեղահանելով ու հետագայում բնաջնջելով՝ թուրքական իշխանությունները նախևառաջ առաջնորդվում էին Արևմտյան Հայաստանը հայաթափելու և այդ կերպ տեղաբնիկ ժողովրդի հայրենիքին վերջնականապես տիրանալու շարժառիթով: Աքչամի կողմից մատնանշած «պատճառներն» ընդամենը մասնավոր դեպքեր են, որոնք որևէ կերպ չեն կարող համեմատվել կամ նույն հարթության վրա դրվել թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության գլխավոր ու հիմնական պատճառների հետ, որպիսիք են պանթուրքիզմի գաղափարախոսության կենսագործումն ու Արևմտյան Հայաստանը հայաթափելու միջոցով հայերի հայրենիքին վերջնականապես տիրանալու մղումը[4]: Այս առումով պատահական չէ, որ հայերի զանգվածային բնաջնջմանը զուգահեռ թուրքական իշխանությունները նախաձեռնել էին Արևմտյան Հայաստանի տեղանունների թուրքացման գործընթաց, ինչը լրացուցիչ կերպով փաստում է այն իրողությունը, որ ցեղասպանության գլխավոր նպատակը և շարժառիթը հայերի հայրենիքին՝ Արևմտյան Հայաստանին, վերջնականապես տիրանալն էր: Այսպես՝ 1916 թ. հունվարի 5-ին կառավարության նոր կանոնագրքի 1-ին հոդվածում նշվում է, որ որոշվել է օսմանյան տիրապետության տակ գտնվող ոչ իսլամական՝ հայկական, հունական և բուլղարական անուններ ունեցող բոլոր նահանգների, գավառների, գյուղերի, լեռների, գետերի և այլ վայրերի անունները փոխել թուրքականի[5]:

Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես թուրքական իշխանություններն անցան հայերի ցեղասպանության նախապես ծրագրված հանցավոր քաղաքականության իրականացմանը: Առաջին հերթին

իշխանությունները գործուն քայլեր ձեռնարկեցին հայերին արտաքին աշխարհից կտրելու ուղղությամբ:

Արդեն 1914 թ. օգոստոսի 28-ին Սամսունի գավառապետին ուղղված գաղտնի հեռագրով կարգադրվում է պատրաստ լինել Սև ծովի առափնյա շրջաններից կանանց և երեխաներին երկրի խորքերը տեղահանելուն և հանձնարարվում է նախապատրաստական աշխատանքներ կատարել, որպեսզի դա հուզումների հնարավորություններ չընտեղծի[6]: Բնականաբար, խոսքը ոչ թե մահմեդական, այլ քրիստոնյա հույն և հայ կանանց ու երեխաների տեղահանման մասին էր, ինչը, թուրքական իշխանությունների կարծիքով, կարող էր հուզումներ առաջացնել:

1914 թ. հոկտեմբերից հայկական պատրիարքարանի, ինչպես նաև հայ հասարակական-քաղաքական գործիչների ու մտավորականների նկատմամբ արդեն իսկ խիստ հսկողություն էր սահմանվել[7]: Ներքին գործերի նախարարությունը հետևում էր նաև հայերի և հույների նախապատերազմական շրջանի տեղաշարժերին[8]: Իշխանությունները հրահանգել էին փակել կայսրության արևելյան նահանգներում մեծաթիվ այն բոլոր օտար հաստատությունները, որոնք շփումների մեջ էին հայերի հետ կամ զբաղվում էին հայերի կրթությամբ: Առաջնահերթ փակման ենթակա էին օտարերկրյա միսիոներական և բարեգործական կազմակերպությունները: Ներքին գործերի նախարարության 1914 թ. նոյեմբերի 17-ի գաղտնի հեռագրով անգամ կարգադրվել էր Վանի հայկական դպրոցից առգրավել ռադիոհաղորդիչ հեռագրական սարքը, որպեսզի հայերը զրկված լինեն միմյանց, ինչպես նաև արտասահմանի հետ հաղորդակցվելու հնարավորությունից[9]:

1914 թ. դեկտեմբերի 27-ին Թալեաթը Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգապետերին կարգադրում է աշխատանքից ազատել այնտեղ պետական պաշտոններում աշխատող բոլոր հայ գործիչներին՝ ստիպելով նրանց հրաժարական տալ, առգրավել նրանց բոլոր փաստաթղթերը և ուղարկել հեռավոր վայրեր[10]: Այս որոշման իմաստն այն էր, որ տեղի հայ պաշտոնյաները հնարավորություն չունենային

Երիտթուրք ղեկավարությունը

իրենց ազգակիցներին տեղեկացնելու սպասվող արհավիրքի մասին և որևէ կերպ չխոչընդոտեին հայության բնաջնջման ծրագրի իրականացմանը:

Բերված փաստերը վկայում են, որ երիտթուրք պարագլուխները վաղուց կողմնորոշված էին հայերի նկատմամբ իրենց քաղաքականության հարցում և պատերազմի մեջ մտնելու նախօրյակին նախապատրաստական վերջին աշխատանքներն էին կատարել՝ պատերազմի ընթացքում հայերին բնաջնջելու բուն ծրագրի կենսագործմանն անցնելու համար: Այս լույսի ներքո տարակուսելի է Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող Աքչամի այն մեկնաբանությունը, թե տվյալ փուլում «...երիտթուրք ղեկավարներն արդեն գտնվում էին օսմանյան հայերի նկատմամբ ներկա և ապագա քաղաքականությունը որոշելու գործընթացում»[11]: Աքչամը գրում է, որ ինչպես Հոլոքոստի, այնպես էլ Հայոց ցեղասպանության պարագայում այդ հանցավոր քաղաքականությունը սկսելու համար եղել է ոչ թե մեկ «վերջնական որոշում», այլ այն հետզհետե ավելի արմատական դարձրած մի շարք որոշումներ, այսինքն՝ դրանց ընդունելու գործընթացի հետևանք է եղել[12]: Հայոց ցեղասպանության շարժառիթի շարունակական կամ դիպվածային լինելու մասին արհեստական քննարկում առաջ բերելով՝ Աքչամն, ի վերջո, հակվում է շարունակականության գաղափարին՝ կրկնելով անվանի հայ մասնագետ Վ. Տատրյանի այն մոտեցումը, որ սկզբում կայացվել է 1910 թ., իսկ այնուհետև՝ 1913 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարների որոշումը[13]:

Հայերի զանգվածային բնաջնջումը դյուրացնելու նպատակով օսմանյան բանակ զորակոչվելու պատրվակով մեկուսացվեց, ապա ոչնչացվեց հայ տղամարդկանց մեծ մասը: Սկզբնական շրջանում օսմանյան բանակ զորակոչվեցին 18-45 տարեկան ավելի քան 60 հազար հայեր[14]: Պատերազմի առաջին ամիսներին նրանք տարբեր ռազմաճակատներում մասնակցեցին մարտական գործողություններին և անգամ արժանացան թուրքական հրամանատարության դրվատանքին: Նույնիսկ շնորհակալական հեռագիր է հղվում Վանի նահանգապետ Ջևդեթ բեյին նահանգից զորակոչված հայերի սխրագործությունների համար[15]: Չնայած այդ ամենին՝ թուրքական գլխավոր հրամանատարության 1915 թ. փետրվարի 25-ի հրամանով արգելվում է հայ զինծառայողներին նշանակել հրամանատարական պաշտոններում[16], ինչը հիմք է դառնում նաև օսմանյան բանակում ծառայող հայ զինվորների զինաթափման համար: ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն նույնպես հաստատում է, որ հայ զինվորների զինաթափումը սկսվել է 1915 թ. սկզբներին[17]: Զինաթափված հայ զինվորներից կազմում են բանվորական գումարտակներ՝ ստիպելով ծանր, անմարդկային պայմաններում բեռներ տեղափոխել, ճանապարհներ և կամուրջներ կառուցել, խրամատներ փորել և այլն[18]: Բոլոր գավառներից լուրեր էին ստացվում այն մասին, որ բանվորական գումարտակներում

հարկադիր աշխատանք կատարող հայ տղամարդիկ սպանվում էին մահմեդական զինակիցների կողմից: Սպաների հրամանով զինվորները և զինվորական ժանդարմները հայ տղամարդկանց 80-100 մարդուց բաղկացած խմբերով հեռացնում էին խուլ վայրեր և գնդակահարում[19]:

Մեծ եղեռնի առաջին փուլում հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով ու ոչնչացնելով՝ երիտթուրքական իշխանություններն այդպիսով փորձում էին հայերին զրկել ինքնապաշտպանվելու ուժից ու հնարավորությունից, որպեսզի ավելի հեշտությամբ իրականացնեն հայկական բնակավայրերում անպաշտպան մնացած բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը: Սակայն պետք է նշել, որ հայերին, այդուհանդերձ, հաջողվեց դիմել ինքնապաշտպանության այն բնակավայրերում, որոնց բնակչությունը, կանխազգալով հայ տղամարդկանց օսմանյան բանակ տանելու՝ իշխանությունների իրական նպատակների մասին, հրաժարվեց զորակոչվել:

Հաջորդ փուլում երիտթուրքական իշխանությունները սկսում են հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները: Դեռ 1914 թ. նոյեմբերի 4-ին ներքին գործերի նախարարությունն ու բանտերի գլխավոր վարչությունը բոլոր նահանգներ ընդհանուր կարգադրություն էր ուղարկել՝ հրահանգելով համաներում հայտարարել և բանտերից ու կալանավայրերից ազատել դատապարտյալներին[20]: Այդ օրենքի հիման վրա բանակ ուղարկելու պատրվակով, օրինակ, բանտից ազատվեցին Ռուբեն Սևակի և նրա ուղեկիցների սպանությունը կազմակերպելու և իրականացնելու համար ազատազրկված քուրդ ցեղապետ Ալոն և երիտթուրքական կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզը*: Ժամանակավոր

Դեպի աքսոր

օրենքի ընդունման իմաստն այն էր, որ նախ նախկին հանցագործներն իրենց ազատվելու դիմաց հայերին բնաջնջելու գործում պետք է ծառայություն մատուցեին իշխանություններին, բացի այդ՝ բանտերն ու կալանավայրերը ազատվում էին՝ դրանք ազդեցիկ հայ գործիչներով լցնելու նպատակով: Ժամանակավոր օրենքի կիրառությունը զգացվեց ամիսներ անց, երբ 1915 թ. ապրիլի 23-24-ին Կ. Պոլսում երևելի հայերին ձերբակալելուց և Այաշ ու Չանքիրի աքսորելուց հետո հրահանգվեց ոչնչացնել նրանց աքսորի ճանապարհին: Ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում և հայաբնակ այլ բնակավայրերում վաղօրոք կազմված ցուցակների համաձայն՝ ոստիկանությունը ձերբակալեց 800-ից ավելի[21], իսկ թուրքական աղբյուրի համաձայն՝ 2.345 երևելի հայերի[22]: Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սերենկյուլյանը, Արշակ Վռամյանը, բանաստեղծներ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը (Չիլինկիրյան), Արտաշես Հարությունյանը, գրողներ, հրապարակախոսներ և լրագրողներ Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), Ռուբեն Զարդարյանը, Սմբատ Բյուրատը, Թլկատինցին (Հովհաննես Հարությունյան), Գեղամ Բարսեղյանը, երգահան Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան), դերասան Եսովք Շահենը, նկարիչ Հրանտ Աստվածատրյանը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, գիտնականներ Տիրան Քելեքյանը, Գագիկ Օզանյանը և շատ ու շատ ուրիշներ: Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվում է տարագրության ճանապարհին: Աքսորվածներից քչերին հաջողվեց փրկվել, նրանցից էին նկարիչ Արամ Անտոնյանը, հրատարակիչ Թեոդիկը, երգիծաբան Երվանդ Օտյանը և ուրիշներ: Նշանավոր երգահան Կոմիտասը բռնագաղթի ժամանակ ականատես լինելով հայության դժոխային տառապանքներին՝ կորցրեց բանականությունը:

Մեծ եղեռնի երկրորդ փուլում հայ մտավորականներին ձերբակալելու ու ոչնչացնելու միջոցով երիտթուրքական իշխանությունները հայերին զրկեցին ազգային ընտրանուց՝ վախենալով, որ վերջինս կարող է ձախողել հայերին բնաջնջելու կառավարության հանցավոր ծրագիրը:

Հայ բնակչության առաջին տեղահանությունները սկսվեցին 1915 թ. փետրվարին Դյորթյոլից, ինչից հետո մարտի 26-ից փուլ առ փուլ սկսվում է Զեյթունի և համանուն գավառակի հայության բռնագաղթը, ինչի հետևանքով ավելի քան 30 հազար հայ տարագրվեց[23]:

Ամբողջ կայսրությունով արդեն իսկ ընթացող հայերի զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին «օրինական» տեսք տալու նպատակով ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի նախաձեռնությամբ երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. մայիսի 30-ին ընդունեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը[24]:

Հալեպի և Ուրֆայի հայերի տեղահանությունը

դեռ չէր էլ սկսվել, բայց 1915 թ. հունիսի 22-ին մայրաքաղաքից Դամասկոս հեռագիր է ուղարկվում՝ իրազեկելով, որ նահանգում գտնվող մահմեդական գաղթականները պետք է վերաբնակեցվեն Հալեպի, Ադանայի և Ուրֆայի շրջակա բնակավայրերում, որպեսզի անհրաժեշտություն չլինի պետության միջոցներով նրանց համար տներ կառուցելու[25]: Ինքնին հասկանալի է, որ գաղթական մահմեդականները վերաբնակեցվելու էին ոչ թե տեղի մահմեդականների, այլ քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի տներում, ինչը նշանակում էր, որ նրանց ճակատագիրն արդեն իսկ կանխորոշված էր:

Ասվածը հաստատվում է մայրաքաղաքից ավելի ուշ Ադանա ուղարկված մեկ այլ հեռագրով, որով պահանջվում էր տեղեկություններ տրամադրել հայերից ազատված բնակավայրերի, ինչպես նաև մինչև տեղահանությունն այնտեղ ապրած հայերի թվաքանակի վերաբերյալ՝ նույն քանակի մահմեդական գաղթականներ նույն տեղն ուղարկելու նպատակով[26]:

Տվյալների ճշտմանն ի հետևանք՝ ներքին գործերի նախարարությունը 1915 թ. հունիսի 30-ի ծածկագիր հեռագրով Կոնիայի նահանգապետին հրահանգում է 64 ալբանացի և 181 բոսնիացի ընտանիքներ վերաբնակեցնել Դիարբեքիրի և Սեբաստիայի հայերի լքված գյուղերում, 78 թուրք ընտանիք էլ ուղարկել Ադանայի նահանգ[27]: Այսպիսով՝ մահմեդական գաղթականների նյութական կարիքները թուրքական իշխանությունները փորձում էին հոգալ հայերի բռնի տեղահանությունից հետո լքված գույքի, պարենամթերքի, հագուստեղենի և այլ ունեցվածքի հաշվին: 1915 թ. մինչև 1916 թ. փետրվար ռուսական բանակի առաջխաղացման ընթացքում կայսրության տարբեր տարածքներից փախել էր 702.900 մահմեդական, որոնց թուրքական իշխանությունները վերաբնակեցնում էին բռնի տեղահանության հետևանքով դատարկված Արևմտյան Հայաստանի կամ կայսրության հայաբնակ տարածքներում[28]:

Վանի ինքնապաշտպանության մարտիկները

Հարազատ բնակավայրից մի քանի կիլոմետր հեռանալուց հետո հայերի մոտ եղած թանկարժեք իրերն ու դրամն անմիջապես կողոպտվում էր քարավանն ուղեկցող ժանդարմների կողմից: Հայերի տների, խանութների, արհեստանոցների շարժական գույքն էլ նրանց հեռանալուց հետո թալանվում էր տեղի մահմեդական բնակչության կողմից, իսկ անշարժ գույքը, ինչն իբրև ի պահ էր հանձնվում իշխանություններին, գործնականում բռնազավթվում էր թուրքական պետության կողմից[29]:

Իրենց հայրենի բնակավայրերից տեղահանվող հայերի քարավանների տեղափոխման կազմակերպումը դրված էր ժանդարմերիայի տեղի ստորաբաժանումների վրա, որոնք տվյալ նահանգի սահմանին փոխանցում էին մյուս նահանգի պահակախմբին[30]: Հայ աքսորականների քարավանների տեղահանության երթուղիներն ընտրված էին այնպես, որ նրանք անցնեին թշնամաբար տրամադրված մահմեդականներով բնակեցված բնակավայրերով: Հենց այդ բնակավայրերի մոտ էլ գիշերային կանգառներ էին արվում, ինչից հետո մահմեդականներին հարձակման ազդանշան էր տրվում, որոնք հարձակվում էին հայերի վրա՝ նրանց ենթարկելով սպանդի, բռնությունների ու թալանի: Հայերի քարավաններն ուղեկցող և նրանց անվտանգությունն իբր թե ապահովող ժանդարմները լավագույն դեպքում հանգիստ հետևում էին, իսկ երբեմն էլ միանում էին հարձակվողներին, քանզի նրանց առջև իրականում խնդիր էր դրված ոչ թե պաշտպանել, այլ ոչնչացնել տեղահանվողներին[31]:

Տեղահանության գործընթացն ամբողջությամբ վերահսկվում էր ներքին գործերի նախարարության կողմից, որը տեղական իշխանության մարմիններից պարբերաբար տեղեկություններ էր պահանջում և ստանում հայերի քարավանների տեղաշարժերի, նրանց քանակի և բնակավայրերում դեռևս մնացած հայերի թվաքանակի մասին: 1915 թ. հուլիսի 20-ի հեռագրով Թալեաթը նահանգապետերին և գավառապետերին կարգադրում է մեկ ամսվա ընթացքում ամբողջական և մանրամասն քարտեզ պատրաստել, որում պետք է զետեղված լինեին կայսրության տարբեր վարչական միավորներում բնակվող ազգությունների տվյալները՝ նախկին և ներկա թվաքանակի համամասնությամբ[32]: Այս կերպ Թալեաթը, թերևս, ցանկանում էր ստացված տվյալների համադրության միջոցով հասկանալ կայսրության տարբեր նահանգներում ոչ մահմեդականների և առաջին հերթին հայերի տեղահանության և բնաջնջման քաղաքականության ընթացքը: Դեռևս չտեղահանված հայերին դասակարգում էին ըստ հետևյալ խմբերի՝ ա) կաթոլիկ կամ բողոքական հայեր, բ) զինվորի ընտանիքի անդամ, գ) իսլամ ընդունած հայեր, դ) հատուկ կարգադրություններով չտեղահանվածներ: Նախարարությունը նահանգապետերից պահանջում էր հստակ թվային հաշվետվություն ներկայացնել, թե նշված խմբերից յուրաքանչյուրում որքան է դեռևս

չտեղահանված հայերի թիվը[33]:

1916 թ. ապրիլին նախարարությունը ճշգրիտ տեղեկություններ էր պահանջում ոչ միայն դեռևս չտեղահանված, այլև տեղահանության հետևանքով այլ նահանգներից ժամանակավոր եկած հայերի թվաքանակի վերաբերյալ[34]: Ստացված տվյալների հիման վրա հայերի զանգվածային տեղահանության պետական քաղաքականությունը որոշակի փոփոխությունների էր ենթարկվում: Հայերի քարավանների ճանապարհին բոլոր կանգառները* իշխանությունների ուշադրության կենտրոնում էին, որպեսզի նրանցից ոչ ոք միջանկյալ կանգառներում մնալու հնարավորություն չունենար և տեղահանվողները հասցվեին մինչև վերջին կայանը՝ Սիրիայի և Միջագետքի անապատները:

Թուրքական իշխանությունների համար խիստ անցանկալի էր հայերի «մահվան քարավանների» միմյանց հանդիպելու հնարավորությունը, ինչը կարող էր անկառավարելի դարձնել տեղահանության հետագա ընթացքը, այդ իսկ պատճառով նրանց տեղահանության երթուղիները երբեմն փոխվում էին[35]: Կանգառներում և բաշխման ժամանակավոր կանգառներում կացարանների և սննդի բացակայությունը, բնակլիմայական դաժան պայմանները, ինչպես նաև համաճարակները հանգեցնում էին բռնի տեղահանվածների զանգվածային մահացությունների:

Օսմանյան արխիվային փաստաթղթերով հաստատվում է Թալեաթի կողմից նահանգապետերին տրված այն հրամանի իսկությունը, որով կարգադրվում էր անհապաղ ճանապարհներից հեռացնել տեղահանության ընթացքում մահացած և սպանված հայերի դիակները և զգուշացվում էր, որ չկատարողները խստագույնս կպատժվեն[36]: Այս կերպ թուրքական իշխանությունները փորձում էին թաքցնել կատարված զանգվածային հանցագործությունների հետքերը:

Հատկանշական է, որ Սիրիայի և Միջագետքի անապատներում վերաբնակեցված հայերին բնաջնջելու երկրորդ ալիքն իրականացնելու Թալեաթի որոշումը նույնիսկ վերաճեց տեղական իշխանությունների և 6-րդ բանակի հրամանատարության դիմակայության: Բանն այն է, որ թուրքական 6-րդ բանակը պատրաստվում էր կասեցնել անգլիացիների առաջխաղացումը Միջագետքում և այդ նպատակով ինժեներական աշխատանքներում փորձում էր ներգրավել Դեր Զորում գտնվող մոտ 600 հայ տղամարդկանց, սակայն պարզվեց, որ նրանցից շատերը նահանգապետ Սալիհ Զեքիի հրամանով արդեն ձերբակալվել, տեղահանվել, և ոմանք նույնիսկ սպանվել էին, ինչն արժանացավ ռազմական հրամանատարության լուրջ դժգոհությանը[37]: Քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև այս դիմակայությունը հարթվեց միայն Թալեաթի անձնական միջամտությամբ և որոշվեց, որ Դեր Զորի հայերից բանակի համար արհեստավորներ ընտրելը պետք է համաձայնեցվի տեղական իշխանությունների հետ[38]: Այս փաստը լրացուցիչ ապացույց է այն իրողության, որ հայերի բռնի տեղահանությունները պայմանավորված չեն եղել պատերազմով կամ ռազմական սպառնալիքներով, ինչպես դա փորձում է ներկայացնել թուրքական քարոզչամեքենան:

Որպես հայերի բռնի տեղահանության ու բնաջնջման երկրորդ ալիքն սկսելու գլխավոր շարժառիթ՝ Թ. Աքչամը նշում է ռուսական զորքերի կողմից 1916 թ. փետրվարին Էրզրումի գրավումը: Թուրք պատմաբանի կողմից առաջ է քաշվում այն տեսակետը, որ եթե Օսմանյան կայսրության կողմից պատերազմը տանուլ տրվեր, ապա իրենց բնակավայրեր վերադարձող դեռևս ողջ մնացած հայերը կարող էին Արևմտյան Հայաստանում հայկական ապագա վարչակազմի հիմքը դառնալ, ինչը թուրքական իշխանությունները պարզապես չէին կարող թույլ տալ[39]: Այս պնդումով Աքչամը փաստորեն հերքում է իր կողմից նախապես առաջ քաշված այն վարկածը, թե տեղահանության քաղաքականության միջոցով թուրքական իշխանություններն իբր նպատակ են հետապնդել հայերին տարրալուծել մահմեդական բնակչության մեջ՝ կայսրության տարբեր բնակավայրերում նրանց վերաբնակեցնելով «5-10%-ի սկզբունքի» համաձայն, ինչն արդեն որևէ վտանգ չէր կարող ներկայացնել: Նման հակասական մոտեցումներով Աքչամը ոչ միայն չի կարողանում հիմնավորել հայերին մահմեդականների շրջանում «5-10%-ի սկզբունքով» վերաբնակեցնելու թուրքական իշխանությունների «մարդասիրական» մղումները, այլև անուղղակիորեն փաստում է այդ ամենի քարոզչական հնարք լինելու հանգամանքը, որն ընդամենը հայերի զանգվածային բնաջնջման իրական նպատակները քողարկելու միտում ուներ:

Տեղահանության վայրերում հայերի բնաջնջման երկրորդ ալիքից հետո որոշվեց արգելել Սիրիայի և Միջագետքի շրջաններ կառավարության վստահությունը չվայելող օտարերկրացիների և ոչ մահմեդական վաճառականների մուտքը[40]: Այս որոշումն արդեն իսկ վկայում էր այնտեղ տեղակայված հայերին վերջնականապես ոչնչացնելու թուրքական իշխանությունների հանցավոր մտադրության մասին: 1916 թ. հուլիսի 20-ի հեռագրերից մեկում ներքին գործերի նախարարությանը տեղեկացվում է, որ կայսրության արևելյան նահանգներից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից, հայերի տեղահանությունները հիմնականում ավարտված են[41]:

Ներքին գործերի նախարարության շրջանառվող փաստաթղթերից պարզ է դառնում, որ հայերը պետք է վերաբնակեցվեին կամ եղած գյուղերում ու բնակավայրերում, կամ իրենց «վերաբնակեցման» համար նախատեսված ամայի տարածքներում: Կարևոր է նշել, որ թուրքական իշխանությունները հայերի վերաբնակեցման բնակավայրերի միջև նվազագույն հեռավորություն էին սահմանել: Այսպես՝ Բաղդադի երկաթուղու տարածքում հայերով

բնակեցվող գյուղերի և նոր հիմնվելիք նրանց բնակավայրերի միջև պետք է պահպանվեր առնվազն 25 կմ հեռավորություն[42]: Նման սահմանափակումների նպատակն այդ տարածքում առանձին հայկական փոքր «կղզյակներ» ստեղծելն էր՝ բացառելով այնտեղ հայկական հոծ բնակչության առաջացման հնարավորությունը:

Զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին զուգահեռ ընթանում էր նաև հայերի մահմեդականացման գործընթացը: Հատկանշական է, որ երիտթուրքերը թույլ են տվել հայերին կրոնափոխվել հիմնականում այն վայրերում, որտեղ վերջիններիս տարրալուծումը մահմեդական մեծամասնության մեջ հնարավոր են համարել, իսկ մյուս դեպքերում հրաժարվել են կրոնափոխությունից և դիմել ֆիզիկական ոչնչացման[43]: Աքչամի նման դատողություններից այն թյուր տպավորությունն է ստեղծվում, թե կրոնափոխությունը բնաջնջվելուն այլընտրանք էր, որն իբր հայերին ողջ մնալու հնարավորություն էր ընձեռում: Ակնհայտ է, սակայն, որ իսլամացումն անխուսափելիորեն հանգեցնում էր հայերի ձուլմանը և ազգային ինքնագիտակցության կորստին, ուստի այն ոչ թե բնաջնջման այլընտրանք, այլ դրան զուգահեռ Արևմտյան Հայաստանը հայաթափելու լրացուցիչ միջոց էր: Այս լույսի ներքո տպավորություն ստեղծելը, թե երիտթուրքերն իբր «մարդասիրաբար» հայերին կրոնափոխվելու կամ բնաջնջվելու ընտրության հնարավորություն են տվել, լոկ պատրանք է, քանզի իսլամացված հայերի ֆիզիկապես ողջ մնալու հանգամանքից անկախ, հայ ժողովրդի համար դրա վերջնարդյունքը նույնն էր. Արևմտյան Հայաստանում հայկական տարրի վերացումը:

Կրոնափոխված հայերին, եթե անգամ չէին տեղահանում, ապա թույլ չէին տալիս մնալ իրենց բնակավայրերում: Սամսունի գավառապետը զեկուցում էր, որ 1915 թ. հունիսի 22-ին հատուկ հրամանի համաձայն՝ կրոնափոխված նախկին քրիստոնյաները վերաբաշխվում էին իրենց բնակավայրի հարևան շրջաններում սահմանափակ թվով, իսկ նրանց տները բնակեցվում էին մահմեդական գաղթականներով[44]: Մահմեդական բնակավայրերում վերաբաշխված հայ բնակչությունը զրկված էր դպրոցներ բացելու հնարավորությունից, որպեսզի երեխաները հարկադրված հաճախեին թուրքական պետական դպրոցներ[45]: Այս փաստը վկայում է, որ կրոնափոխված հայերի նկատմամբ հստակ վարվում էր ձուլման քաղաքականություն:

1915 թ. հուլիսի 1-ի հեռագրով Թալեաթն հրամայում է կասեցնել հայերի կրոնափոխության գործընթացը, քանի որ իսլամ ընդունելու նրանց ցանկությունը կեղծ էր համարում[46]: Հետևաբար, հավատափոխությունը որպես հայերի բնաջնջման այլընտրանք ներկայացնելու Աքչամի ջանքերը չեզոքացվում են հենց իր իսկ կողմից մեջբերվող ներքին գործերի նախարարության գաղտնի հեռագրերով:

Կրոնափոխության միջոցով հայերի տեղահանության հետաձգումը տեղական թուրք պաշտոնյաների շրջանում դարձել էր կաշառակերությամբ զբաղվելու միջոց, երբ ունևոր հայերից կաշառք ստանալով՝ մահմեդական էին դարձնում վերջիններիս և ընդամենը որոշ ժամանակով հետաձգում նրանց տեղահանությունը[47]: Ակնհայտ է, սակայն, որ կաշառք տալու միջոցները սպառվելուց կամ ներքին գործերի նախարարության ավելի խիստ պահանջից հետո անգամ ունևոր հայերն, ի վերջո, ենթարկվելու էին տեղահանության:

Չորս ամիս անց, կրոնափոխությունը կրկին արտոնելուց հետո թույլտվություններն արդեն անձամբ Թալեաթն էր տալիս՝ տեղահանությունից ազատելով միայն իսլամ ընդունած հայ աղջիկներին, որոնց կարգադրվում էր անմիջապես ամուսնացնել մահմեդականների հետ: Արգելվում էր այն հայ կանանց հավատափոխության ճանաչումը, որոնց ամուսինները դեռևս ողջ էին և ծառայում էին բանակում[48]: Կրոնափոխության մերժման այս հիմնավորումից ենթադրելի է, որ թույլտվությունը կարող էր տրվել միայն նրանց ամուսինների մահվան դեպքում, որպեսզի հնարավորություն ստեղծվեր այդ այրիներին նույնպես ամուսնացնելու մահմեդականների հետ:

Մանկահասակ հայ աղջիկներն ու տղաները մահմեդականացվում էին, այնուհետև տեղավորվում մահմեդական որբանոցներում կամ բաշխվում մահմեդական ընտանիքների վրա, ինչն ամենևին չէր նշանակում, որ մանկահասակ հայ երեխաներն ընդհանրապես չէին ոչնչացվում[49]:

Հայ կանայք և մանկահասակ աղջիկները ենթարկվում էին սեռական բռնությունների, տարածված էր բարձրաստիճան պաշտոնյաներին հայ աղջիկներին որպես «նվեր» մատուցելը: Նույնիսկ ստեղծվել էին հասարակաց տներ, որտեղ պաշտոնյաներին և զինվորականներին մատուցում էին գեղեցիկ հայ աղջիկներ, ինչի մասին օսմանյան խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստի ընթացքում բարձրաձայնել է Հալեպից ընտրված հայ պատգամավոր Արթին Պոշկեզենյանը[50]: Այս փաստերը հնչեցվել են նաև թուրքական ռազմական տրիբունալներում և դրանց հիման վրա որոշ նախկին կուսակցական գործիչների մեղադրանք է ներակայացվել, օրինակ՝ Տրապիզոնի դատավարության ընթացքում նման մեղադրանք ներկայացվեց նահանգապետ Ջեմալ Ազմիին[51]:

Տեղահանվող հայերի քարավանների կայանատեղիները ժանդարմների թողտվությամբ վերածվում էին երեխաներին և հասուն աղջիկներին ստրկության վաճառելու շուկաների՝ միայն մահմեդականներին թույլատրելով գնել նրանց[52]: Հայ որբ երեխաների համար որբանոցներ բացելու գործով զբաղվում էր կրթության նախարարությունը[53], ինչը վկայում է այն մասին, որ հայերի բնաջնջման ու ձուլման ծրագրված քաղաքականությանն իրենց գործառույթների շրջանակներում մասնակցել են պետական բոլոր կա-

ռույցները:

Հատկանշական է, որ ներքին գործերի նախարարության հեռագրերից մեկում ասվում էր, քանի որ հայերի տեղահանությունից հետո նրանց երեխաներն առանց խնամակալի են մնացել, ուստի խնդիր էր դրվում նրանց վերաբաշխել մահմեդական ընտանիքների միջև[54]: Նման հիմնավորումներն առավել քան խոսուն ձևով վկայում են, որ տեղահանվող հայերի ֆիզիկական ոչնչացումն արդեն իսկ կանխորոշված էր, ուստի հարկավոր էր զբաղվել նրանց որբացած երեխաների հարցերով:

Հայ որբերի ձուլման գործընթացը կազմակերպվել է՝ հաշվի առնելով երեխաների տարիքային խմբերը: Մահմեդական ընտանիքներում բաշխվել են տարիքով փոքր երեխաները, իսկ մյուսները տեղավորվել են թուրքական պետական որբանոցներում: Նման բաժանումը պայմանավորված էր նրանով, որ մեծահասակ երեխաների մոտ արդեն իսկ ձևավորված էր հայկական ինքնությունը, և մահմեդական ընտանիքները հազիվ թե կարողանային հաղթահարել նրանց ձուլման գործընթացը: Արգելվում էր մահմեդականների հետ ամուսնացած հայ կանանց կամ որդեգրված հայ երեխաներին քաղաքներ և հատկապես՝ մայրաքաղաք տեղափոխելը՝ մտավախություն ունենալով, որ այնտեղից նրանք կարող էին փախչել, ինչը կարող էր ձախողել ձուլման քաղաքականությունը[55]:

Երրորդ բանակի հրամանատարը հատուկ զգուշացնում էր մահմեդականներին, որ եթե իրենց ընտանիքներում հայտնաբերվեն թաքնված հայեր, չորդեգրված հայ երեխաներ, պաշտոնապես չամուսնացած հայ աղջիկներ կամ կանայք, ապա նրանց թաքցնողները մահապատժի կենթարկվեն[56]:

Այս առումով հարկ է նշել, որ Աքչամն իր դատողություններով հասնում է նրան, որ «բարեգութ» վերաբերմունք է համարում որբացած հայ երեխաներին մահմեդականների կողմից որդեգրելը՝ դա արդարացնելով նաև տնտեսական առումով, քանի որ մահմեդական ընտանիքների կողմից իսլամացված հայ տղաները՝ որպես էժան աշխատուժ, շահագործվում էին գյուղատնտեսական աշխատանքներում: Թուրք պատմաբանը նաև ընդգծում է, որ հայ երեխաներին մահմեդականներին «նվիրելով»՝ իշխանություններն այդ կերպ գնում էին վերջիններիս հավատարմությունը[57]:

ԱՄՆ-ի սենատին գեներալ Ջ. Հարբորդի ներկայացրած զեկույցում հայ որբերի թիվը նշվում է մոտ 50 հազար, ինչը հաստատվում է նաև Ք. Կարաբեքիրի կողմից, իսկ մահմեդականների գերության մեջ գտնվող որբերի և երիտասարդ հայ կանանց ու աղջիկների թիվը՝ 63.000 մարդ[58]: Ընդհուպ մինչև 1918 թ. թուրքական իշխանությունները վերահսկում էին կրոնափոխված հայերի զբաղմունքը և տեղաշարժերը[59]: Թեև դաշնակից հաղթանակած տերությունների ճնշման տակ թուրքական նոր կառավարությունը նրանց ազատ արձակելու որոշում կայացրեց, սակայն գործնականում գերեվարված հայ կանանց ու որբերի հայկական միջավայր վերադառնալու հարցում բազում արհեստական խոչընդոտներ էին ստեղծվում:

Հայերի ցեղասպանության քաղաքականության կարևոր բաղադրիչներից էր նրանց անշարժ գույքի և ողջ ունեցվածքի բռնազավթումը, որն իրականացվում էր զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին զուգահեռ: «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքից հետո, 1915 թ. հունիսի 10-ին թուրքական իշխանություններն ընդունեցին նաև «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքը, որով տեղահանված հայերի ամբողջ ունեցվածքը համարվում էր «լքյալ» և կալանք էր դրվում դրա վրա[60]: Հայերի ունեցվածքը «լքյալ» որակելը բացարձակ անօրինականություն էր, քանզի նույն «Տեղահանության մասին» օրենքից ելնելով՝ ակնհայտ էր, որ հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերն ու ունեցվածքը: Այսինքն՝ նրանք չէին հրաժարվել դրա նկատմամբ իրենց իրավունքներից, ուստի այդ գույքերի նկատմամբ ցանկացած գործողություն չէր կարող օրինական համարվել, անգամ եթե դա կատարվում էր պետական մարմինների կողմից[61]: Ժամանակավոր օրենքի համաձայն՝ տեղահանված հայերի անշարժ ու շարժական գույքն իբրև թե ի պահ էր հանձնվում իշխանություններին և պետք է վերադարձվեր, երբ նրանք վերադառնային իրենց բնակավայրերը, սակայն քանի որ նրանց ճակատագիրը վճռված էր, ապա ակնհայտ է, որ այս օրենքով ընդամենը «օրինականացվում» էր հայերի ունեցվածքի զանգվածային բռնազավթման տեղի ունեցող գործընթացը: Ստեղծվել էին «Լքյալ գույքի» հանձնաժողովներ, որոնք, կեղծ աճուրդներ կազմակերպելով, հայերի անշարժ ու շարժական գույքը նվիրաբերում կամ չնչին գումարներով փոխանցում էին մահմեդականներին:

Նահանգներ ուղարկվող հույժ գաղտնի հեռագրերում կարգադրվում էր նախապես պատրաստված հարցաշարերով խիստ գաղտնի կերպով տեղեկություններ հավաքել քրիստոնյաների ձեռնարկությունների, շարժական ու անշարժ գույքի, կրթության, հասարակական կարգավիճակի և իրենց համայնքների նշանավոր կամ ազդեցիկ անդամների մասին և ուղարկել նախարարություն[62]: Այսպիսով՝ հայերի մասին հավաքված մանրամասն տեղեկատվությունը հետագայում օգտագործվեց տեղահանության ու զանգվածային կոտորածների համար բավարար ուժեր կենտրոնացնելու, ինչպես նաև «Լքյալ գույքի հանձնաժողովների» միջոցով հայերի ունեցվածքի զանգվածային թալանը կազմակերպելու համար[63]: «Լքյալ գույքի» հանձնաժողովները, որոնք իբր ստեղծվել էին տեղահանված հայերի թողած գույքը պահպանելու և պաշտպանելու նպատակով, գործնականում հայերի շարժական գույքի վաճառքի և անշարժ գույքի օտարման միջոցով զբաղվում էին

մահմեդական վերաբնակիչների կարիքները հոգալու գործով[64]:

Մահմեդականների շրջանում հայ աղջիկներին կնության առնելու և հայ որբերին իրենց ընտանիքներ վերցնելու գործընթացը խրախուսելու համար «Լքյալ գույքի» հանձնաժողովների նախագահների միջոցով լուրեր էին տարածում, թե քանի որ կտակարարները մահացել են, ապա այրիացած հայ կանանց, որբացած աղջիկների և որբերի ժառանգությունը կփոխանցվի նրանց նոր ամուսիններին և որդեգրողներին[65]: Սա չափազանց ազդեցիկ միջոց էր, ինչը մահմեդականների շրջանում մեծ իրարանցում առաջացրեց հայ ընտանիքների որբացած երեխաների և այրիացած կանանց ժառանգությանը տիրանալու հարցում:

Հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավումն ու տիրապետումը հստակ ցույց է տալիս, որ երիտթուրքերի կառավարության քաղաքականության նպատակը եղել է հայերին իրենց գոյությունը շարունակելու բոլոր հնարավորություններից զրկելը: Թուրքական իշխանությունները «Լքյալ գույքի մասին» օրենքների ընդունումը որպես ապացույց են փորձում ներկայացնել, թե իբր հայերին բնաջնջելու մտադրություն չեն ունեցել[66], այլ ձգտել են պահպանել նրանց գույքը, սակայն իշխանություններն ի վիճակի չեն եղել կանխել չարաշահումների ու թալանի բոլոր դեպքերը, որոնք կազմակերպված բնույթ չեն ունեցել[67]: Իրականում այդ օրենքներն ընդունվեցին այն պատճառով, որ թուրքական իշխանությունները քաջ գիտակցում էին հայերին բնաջնջելու իրենց հետապնդած նպատակը, ուստի պետությունը փորձում էր իր վերահսկողության տակ վերցնել տեղահանված և բնաջնջման ենթակա հայերի ունեցվածքի տնօրինման և կառավարման գործընթացը՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով տեղի իշխանությունների ու մահմեդական բնակչության համար բացվող թալանի հնարավորությունները: Պատահական չէ, որ 1917 թ. հուլիսի 29-ի հեռագրում Թալեաթը վերապրած հայերի թվաքանակից բացի՝ նահանգապետերից տվյալներ է պահանջում նաև նրանց պատկանած ապրանքների, դրանց արժեքի և արդեն մահմեդականներին բաշխված քանակի մասին[68]:

Հատկանշական է, որ թուրքական իշխանություններն ընդունեցին 15 հոդվածներից բաղկացած «Պատերազմի թելադրանքով և քաղաքական արտակարգ անհրաժեշտությունից ելնելով՝ այլ վայրեր տեղափոխված հայերի տեղավորման ու մատակարարման կանոնակարգը», որի 4-րդ հոդվածում նշվում է, որ տեղահանված հայերը պետք է բնակեցվեին տեղական իշխանությունների կողմից որոշված վայրերում՝ իրենց համար տներ կառուցելով եղած գյուղերում ու քաղաքներում կամ էլ նոր բնակավայրեր հիմնելով ամայի տարածքներում[69]: Կանոնադրության հոդվածներից պարզ է դառնում, որ «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների դրույթների հիման վրա «Լքյալ գույքի հանձնաժողովների» միջոցով տեղահանված հայերի անշարժ գույքն ու ողջ ունեցվածքը բռնազավթած թուրքական իշխանությունները հրաժարվում էին տեղահանված հայերի կենցաղային պայմանների ապահովման պարտավորությունից՝ դա թողնելով վերջիններիս վրա: Անհասկանալի էր, սակայն, թե իրենց ունեցվածքից զրկված և տեղահանված հայերն ինչպե՞ս պետք է իրենց համար տներ կառուցեին, առավել ևս՝ ի՞նչ միջոցներով պետք է ամայի տարածքներում նոր բնակավայրեր հիմնեին:

Երիտթուրքական կառավարության հրամանի համաձայն՝ հայ տարագիրների «մահվան քարավանները» քշվում էին դեպի Միջագետքի և Սիրիայի Ռասուլ-Այնի, Դեյր էլ-Զորի, Մեսքենեի, Ինթիլիի, Ռաքքայի և այլ համակենտրոնացման ճամբարներ: Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունն այս ճամբարներում պետք է ավարտեր բնությունը: Այս անապատները թուրքական իշխանությունների կողմից պատահական չէին ընտրված: Ականատեսների վկայությամբ՝ հրաշքով ողջ մնացած հայերն այստեղ դանդաղ և տանջալից մահանում էին շիկացած ավազուտներում՝ առանց սննդի և ջրի, համաճարակային հիվանդությունների պայմաններում[70]: 1915 թ. աշնանից մինչև 1916 թ. ձմեռ 850.000 տեղահանված հայերից ավելի քան 300.000-ը մահացավ Սիրիայի և Միջագետքի ճանապարհներին կամ համակենտրոնացման ճամբարներում[71]: Դեր Զորի ճամբարից հետո հայ նահատակների քանակով երկրորդը Ռասուլ-Այնի ճամբարն էր, որտեղ ոչնչացվեց մոտ 70.000 մարդ, երրորդը՝ Մեսքենեն էր, որտեղ նահատակվեց շուրջ 55.000 հայ, հաջորդը Ինթիլին էր, որտեղ սպանվեց 40-50.000 մարդ[72]:

Համակենտրոնացման ճամբարներում հայերի ոչնչացման «բնական» տեմպերը չէին գոհացնում երիտթուրքերին. նրանց հարկավոր էր մինչև պատերազմի վերջը ավարտին հասցնել իրենց հանցավոր քաղաքականությունը և անապատներում թաքցնել դրա հետքերը: Օսմանյան կառավարության հրամանով տեղի մահմեդական բնակչությունից կազմավորվեցին հրոսակախմբեր, որոնց վստահվեց նշված ճամբարներում դեռևս ողջ մնացած հայերի ոչնչացման գործը:

Թուրքական իշխանություններին, սակայն, ոչ բոլոր բնակավայրերում հաջողվեց անխափան իրագործել հայերին բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագիրը: Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ մի շարք վայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք և քուրդ ջարդարարներին: Առաջին կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վանի նահանգի հայկական բնակավայրերում: 1915 թ. ապրիլի 7-ից շուրջ մեկ ամիս Վանում կենտրոնացած հայ քաղաքական-կուսակցական գործիչներին՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ, հաջողվեց կազմակերպած դիմադրություն ցույց տալ գերակշռող ուժեր ունեցող հակառակորդին մինչև մայիսի 6-ը,

երբ թուրքերը նահանջեցին՝ տեղեկանալով, որ ռուսական զորքն ու հայ կամավորականները մոտենում են քաղաքին: Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունը պսակվեց փառահեղ հաղթանակով՝ կոտորածից փրկելով բազմահազար վանեցիների:

1915 թ. օգոստոսի 7-ին սկսված Մուսա լեռան անհավասար հերոսամարտը տևեց մինչև սեպտեմբերի 10-ը[73], երբ ֆրանսիական ռազմանավերով ըսկսվեց կանանց, երեխաների և ծերերի տեղափոխումը, մինչդեռ տղամարդիկ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով նրանց անվտանգ տարհանումը: Ընդհանուր առմամբ՝ փրկվեցին 4058 սուետիահայեր, որոնք տեղափոխվեցին Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը[74]:

Վանում, Մուսա լեռում, ինչպես նաև Շապին Գարահիսարում[75], Ուրֆայում[76] և այլ բնակավայրերում հայերի իրարից անջատ կազմակերպված ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ որոշակիորեն հաջողվեց ձախողել Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում բնակվող հայությանն իսպառ բնաջնջելու՝ թուրքական իշխանությունների ծրագրերը:

Առաջին աշխարհամարտի ավարտի և Օսմանյան կայսրության պարտության հետևանքով վերջինիս տրոհման գործընթացից հետո թվում էր, թե Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչները պատասխանատվության կենթարկվեն հայ ժողովրդի նկատմամբ կատարած ոճրագործության համար: Երիտթուրք պարագլուխների՝ երկրից հեռանալուց հետո թուրքական նոր իշխանությունները ստեղծեցին ռազմական դատարաններ, որոնք իբր պետք է պատասխանատվության ենթարկեին պատերազմի ընթացքում հանցագործություններ կատարած պաշտոնյաներին: Երկրից հեռացած Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները մահվան դատապարտվեցին հեռակա կարգով, իսկ ներկա գտնվող մեղադրյալների նկատմամբ հիմնականում կիրառվեցին բավական մեղմ վճիռներ: Թուրքական ռազմական տրիբունալում երիտթուրքերի դատավարության ժամանակ Բողազլյանի կառավարիչ Քեմալն այն եզակի մեղադրյալներից էր, որի նկատմամբ Թալեաթի հեռագրի հիման վրա մահապատիժ կիրառվեց* և նրան կախեցին Ստամբուլի Բայազետ հրապարակում[77]: Ռազմական տրիբունալի որոշմամբ՝ մահապատժի ենթարկվածների թվում էր նաև օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենկյուլյանի սպանությունների կազմակերպման գործում ակտիվ դերակատարում ունեցած Չերքեզ Ահմեդը[78]: Արդարադատությունից խուսափած գլխավոր հանցագործներին պատասխանատվության ենթարկելու գործն իրականացվեց «Նեմեսիս» գործողության շրջանակներում, որի ընթացքում հայ վրիժառուները հայտնաբերեցին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներին և ի կատար ածեցին օրինական ուժի մեջ մտած մահվան վճիռները:

Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները կարելի է բաժանել հետևյալ պայմանական խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեբանական բարդույթներ: Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի կրած կորուստները հաճախ նույնականացվում են այդ հանցագործության հետևանքների հետ, մինչդեռ ի տարբերություն կորուստների, դրանց հետևանքները անցյալում չեն մնացել: Հայ ժողովուրդն արդեն մեկ դար Հայաստանում և Սփյուռքում շարունակում է իր ուսերի վրա կրել Հայոց ցեղասպանությամբ հասցրած կորուստների հետևանքների ծանր բեռը: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետևանքները, գործ ենք ունենալու շարունակվող ցեղասպանության հետ:

Ամփոփելով՝ նշենք, որ չնայած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ կատարված հսկայական աշխատանքին՝ դեռևս շատ անելիքներ կան: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված աշխատանքները պետք է կատարվեն միասնաբար ու հետևողականորեն՝ ճիշտ օգտագործելով եղած ռեսուրսներն ու հաշվենկատորեն օգտվելով ընձեռված միջազգային իրավական ու քաղաքական հնարավորություններից: Անշուշտ, ճանապարհը դյուրին չի լինելու, կան լուրջ խոչընդոտներ ու դժվարություններ, սակայն դրանք հաղթահարելի կլինեն, եթե մեր արդար դատը մինչև վերջ տանելու կամք և վճռականություն ունենանք:

Հղումներ

1. Տես Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Е., 1999, с. 15-16:
2. Տես Dadrian V.N., The Secret Young-Turk Ittihadist conference and yhe decision for the Vorld War I Genocide of the Armenians, “Holocaust and Genocide Stadies”, 1993, Vol. 7, N 2, pp. 174-175:
3. Տես Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015, էջ 75-79:
4. Տես Марукян А.Ц., Проблема Геноцида армян в современной геноцидологии, Ер., 2010, с. 21-23:
5. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 68:
6. Նույն տեղում, էջ 190:
7. Նույն տեղում, էջ 192:
8. Տես նույն տեղում, էջ 43-44:
9. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 193:
10. Նույն տեղում, էջ 194:
11. Նույն տեղում, էջ 193:
12. Նույն տեղում, էջ 161:
13. Նույն տեղում, էջ 159:
14. Տես Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Ե., 1995, էջ 23:
15. Տես Ussher C.D., Knapp G.H. An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, էջ 217:
16. Տես Yavuz E., Armenian Claims in the Light of the Historical Documents, “Turkish Review”, Ankara, Spring 1986, Vol. 1, № 3, p. 26:
17. Տես Morgenthau H., Ambassador Morgenthau’s Story, N.Y., 1918, p. 302:
18. Տես Զուիցերիացի հայասէր Յագուպ Քիւնցլեր. իր հայանպաստ գործունէութեան 40-ամեակին առթիւ, Պէյրութ-Հալէպ, 1946, էջ 63:
19. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմ. Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, խմբ. Մ.Գ. Ներսիսյան), Ե., 1991, էջ 470:
20. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 276:

** Ռուբեն Սևակը (Չիլինկիրյան) 1915 թ. հունիսին ձերբակալվել և տեղափոխվել է Չանկիրի, օգոստոսին նրան և ընկերներին ներում շնորհվեցուց հետո նրանք պետք է վերադառնային Ստամբուլ, սակայն Ջեմալ Օղուզի հրահանգով Անկարայի մոտ քուրդ Ալոյի հրոսակախումբը դարանակալում և սպանում է նրանց: Տես նույն տեղում, էջ 270-276:

21. Տես Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., նշվ. աշխ., էջ 24:
22. Տես Beylerian A., Les Grandes Puissances, L’ Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises, 1914–1918, Paris, 1983, p. 21:
23. Տես Պողոսյան Հ.Մ., Ջեյթունի պատմություն, Եր., 1969, էջ 402:
24. Տես Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Ե., 1990, էջ 119-120:
25. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 72:
26. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 73:
27. Նույն տեղում, էջ 70-71:
28. Նույն տեղում, էջ 76:
29. Աստոյան Ա., Դարի Կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Եր., 2013, էջ 36-37:
30. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 286:
31. Авакян А., նշվ. աշխ., էջ 91:
32. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 45:
33. Նույն տեղում, էջ 290-292:
34. Նույն տեղում, էջ 292:

** 1915 թ. հոկտեմբերի 7-ի նախարարության հեռագրով տեղահանության կանգառները դասակարգվում էին հետևյալ տեսակների՝ հանգստի կանգառներ, բաշխման ժամանակավոր վայրեր և վերջնական բնակեցման վայրեր: Դասակարգումից եկնելով՝ որպես հանգստի կանգառ, օրինակ, նշվում էր Մեսքենեն, բաշխման ժամանակավոր վայր՝ Հալեպը, Ռաս-ուլ-Այնը, իսկ վերջնական բնակեցման վայր՝ Ռաքքան, Դեր Զորը և այլն: Տես Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 329:

35. Տես Марукян А.Ц., նշվ.աշխ., էջ 35:
36. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 250:
37. Տես նույն տեղում, էջ 347-350:
38. Նույն տեղում, էջ 351:
39. Նույն տեղում, էջ 351-352:
40. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 344:
41. Նույն տեղում, էջ 282-283:
42. Նույն տեղում, էջ 328-329:
43. Նույն տեղում, էջ 359:
44. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 362-364:
45. Տես նույն տեղում, էջ 371-372:
46. Տես նույն տեղում, էջ 365-366:
47. Նույն տեղում, էջ 367:
48. Տես նույն տեղում, էջ 367-368:
49. Նույն տեղում, էջ 384:
50. Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներում, Ուտրդաուն, «Պայքար»,1995, էջ 94:
51. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 386:
52. Նույն տեղում, էջ 388:
53. Նույն տեղում, էջ 390:
54. Նույն տեղում, էջ 391:
55. Տես նույն տեղում, էջ 398-400:
56. Տես նույն տեղում, էջ 403-404:
57. Տես Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 417-419:
58. Նույն տեղում, էջ 408-409:
59. Նույն տեղում:
60. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999, էջ 5:
61. Տես Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015, էջ 17-18:
62. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 44:
63. Տես Ղազարեան Հ., Հայոց լքեալ գոյքերու և կալուածքներու թալանը թուրքերու կողմէ, «Հայրենիք» թիվ 6-7, Պոսթըն, 1964; Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970; Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010:
64. Տես Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7: Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պա-տասխանատվությունը, Երևան, 1999, էջ 5:
65. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 393:
66. Նույն տեղում, էջ 433:
67. Տես նույն տեղում, էջ 420-421:
68. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 301:
69. Նույն տեղում, էջ 329:
70. Гамелен А., Брон Ж-М., Восстановленная память, Е., 1995, с. 34:
71. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 335-336:
72. Տես Авакян А., նշվ. աշխ., 94-95:
73. Տես Գասպարյան Ռ. Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Ե., 2005, էջ 126:
74. Տես Lepsius Joh., Deutschland und Armenien 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam 1919, p. 467:
75. Տես Տէր-Հարությունեան Հ., Շապին-Գարահիսարի ապստամբութիւնը, Թիֆլիս, 1917:
76. Տես Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պէյրութ, 1955:

** Հատկանշական է, որ թուրքական ռազմական տրիբունալների մահվան տասնհինգ դատավճիռներից միայն երեքն ի կատար ածվեցին, ընդ որում, դրանք վերաբերում էին տեղական պաշտոնյաներին՝ Էրզրումի ժանդարմերիայի պետ Աբդուլլա Ավնիին, Բայբուրդի գավառապետ Բեհրամզադե Նուսրեթին և Բողազլյանի գավառապետ Մեհմեդ Քեմալին: Այդուհանդերձ, չափազանց կարևոր էր, որ ռազմական տրիբունալը նրանց մահվան դատապարտեց օսմանյան քրեական օրենսգրքի 170-րդ և զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածների հատկանիշներով: Օսմանյան քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը մահապատիժ էր նախատեսում կանխամտածված սպանության կատարման համար: Տես Dadrian V., Histoire du genocide armenien, Stock, 1996, p. 518:

77. Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 265:
78. Տես նույն տեղում, էջ 485-486:

«Մեկ հայը՝ մեկ ոսկի». հայ որբերի փրկության ազգային գերնպատակից մինչև շրջափակված Արցախի «մոռացված» մանուկներ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայոց պատմության ամենաողբերգական, ցեղասպանության ամիսն է ապրիլը, և ավանդույթի ուժով շատ է խոսվելու հայոց ցեղասպանության մասին: Այս համատեքստում խոսվել է նաև հայ որբերի փրկության, այլ կերպ ասած՝ «որբահավաք» գործունեության մասին:

Ավելի քան մեկ դար առաջ այս օրերին, երբ «մարդկության խիղճը քար էր կտրել»[1], հայությունը ստիպված էր մտածել արևմտահայության բեկորների, մասնավորապես՝ հայ որբերի փրկության մասին: «1915 թվականի հայոց ցեղասպանությունից հետո մեծ հայդուկ Սեբաստացի Մուրադը և այլք Արևմտյան Հայաստանից մինչև արաբական անապատների տարածքներում փորձում էին հայ մանուկներ փրկել: Կարգախոսն էլ հատկանշական էր՝ մեկ հայը՝ մեկ ոսկի»[2]: Որբահավաք ծրագիրը իրականացնում էին այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին զորավար Սեպուհը, Մարզպետը, Սեմի Չավուշը, Անդրանիկը, Սողոմոն Թեհլիրյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը. ֆիդայիներ, որոնք մահմեդականներից ոսկու դիմաց գնում էին ցեղասպանության հետևանքով նրանց ձեռքում հայտնված հայ որբերին՝ մեկ հայի դիմաց վճարելով մեկ ոսկի:

Աշխարհի տարբեր ծայրերում հայութունը դրամահավաքներ կազմակերպեց ի նպաստ այս ծրագրի, որի շնորհիվ «1916 թ. օգոստոս-նոյեմբերին, «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդին հանգանակվեց շուրջ 200.000 ռուբլի, որով փրկագնվեց 11.000 մարդ»[3]:

Առանց թվային մանրամասնություններ ներկայացնելու՝ փաստենք. «Հայոց ցեղասպանության տարիներին սկիզբ առած որբահավաք առաքելությունը՝ «մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսով, արդեն 1916 թվականի մի քանի ամիսների ընթացքում տվեց զգալի արդյունք. ռուսական զորքերի վերահսկողության տակ գտնվող շրջաններում՝ Էրզրումում, Բիթլիսում, Տրապիզոնում, Վանում, մահմեդական գերությունից ազատագրվեցին տասնյակ հազարավոր հայեր, որոնց մեջ գերակշիռ թիվ էին կազմում հայ երեխաները և հարեմներին վաճառված երիտասարդ կանայք»[4]:

Որբահավաք աշխատանքները ղեկավարում էին հայ քաղաքական կուսակցությունները և Հայ բարեգործական ընդհանուր միությունը. «մեկ հայը՝ մեկ ոսկի» ծրագրի իրականացման գործում մեծ դեր խաղաց նաև այն օրերին «Հայ կարմիր խաչ» անունը կրող Հայ օգնության միությունը (Դաշնակցության քույր կառույցը), որը «ձեռնարկեց «մեկ որբ՝ մեկ ոսկի» նշանաբանով առաքելություն՝ փրկելու արաբական անապատներում ապաստանած հայ որբերին»[5]:



Այս ծրագրի և հայ որբախույզների[6] շնորհիվ փրկագնվեցին տասնյակ հազարավոր հայ որբեր և հարեմներում գտնվող հայ աղջիկներ ու թեև «.... հասարակարգում մարդկանց առքուվաճառքը երբևէ չի խրախուսվել, դեռ ավելին՝ մեր հասարակության համար խորթ են ստրկատիրական հասարակարգին բնորոշ դրսևորումները, այնուամենայնիվ ցեղասպանության տարիներին հայ հասարակության մեջ քաջալերվում էր մահմեդական ստրկությունից իրենց հայրենակցին փրկագնով ազատագրելը»[7]:

Ահա այսպես ավելի քան մեկ դար առաջ հայ հասարակության գերնպատակը արևմտահայության բեկորների փրկությունն էր, և հայ հասարակական-քաղաքական շրջանակները, ինչպես նաև աշխարհասփյուռ հայությունը կիրառում էին տարբեր մեթոդներ՝ ազատագրումից մինչև փրկագնում, քանզի մեծ ողբերգության օրերին ապահով վայրում ապրող հայի համար իր հայրենակցի վտանգված կյանքը մեծագույն արժեք էր:

Իսկ ի՞նչ է կատարվում այսօր հայկական երկու պետություններում, ի՞նչ արժեք ունի հայ մարդու կյանքը հայաստանյան կառավարող շրջանակների համար: Ինչպե՞ս եղավ, որ ավելի քան մեկ դար առաջ պետականություն չունեցող ու ցեղասպանվող ժողովուրդը գաղափարապես շատ ավելի միասնական էր, քան այսօր, երբ հայ ժողովրդի արցախյան հատ-

վածը փաստորեն միայնակ է դիմագրավում թշնամու ցեղասպանական քաղաքականությանը:

Հայաստանի անկախության վերականգնումից ու արցախյան պատերազմում տարած հաղթանակից հետո թվում էր, թե հայ ժողովուրդը այլևս չպետք է կանգնի ցեղասպանվելու վտանգի առջև և չնայած բազմաթիվ շրջանակների թուրքամետ գործունեությանը՝ հայ ժողովրդի գիտակցության մեջ թուրքը թշնամի էր: 1915 թ. թուրքն ու ժամանակակից թուրքը նույնն էին, մեկ տարբերությամբ՝ 1915-ի թուրքը հայությանը ցեղասպանած ու Հայաստանը հայաթափած թուրքն էր, ժամանակակից թուրքը՝ պարտություն կրած և հայկական Արցախից դուրս շպրտված թուրքը:

Սակայն 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո հայ հասարակության հոգեբանության ու մտածողության մեջ ամեն բան կտրուկ փոխվեց. նախկին հաղթող, թշնամուն դիմակայելու և Արցախի համար մշտապես պայքարելու պատրաստ ժողովուրդը դարձավ զիջող, կրավորական ու անտարբեր իր հայրենիքի բոլոր հատվածների ճակատագրի նկատմամբ, և այդ անտարբերության պատը չկարողացավ խարխլել անգամ 2022 թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանցի «բնապահպանների» կողմից Բերձորի միջանցքի փակումը[8], ու թեև ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերը միջազգային տարբեր հարթակներում բարձրաձայնում են. «12 դեկտեմբեր 2022-էն ի վեր, Ատրպէյճանն արգելափակած է «Լաչինի միջանցքը», միակ ճանապարհը, որ կը կապէ Արցախի Հանրապետութիւնը Հայաստանին հետ՝ պատճառ դառնալով աւելի քան օրական 400 թոն սննդամթերքի, դեղորայքի և այլ կարևոր ապրանքներու փոխադրութեան դադրեցման, փորձութեան տակ դնելով Արցախի սննդամատակարարման ապահովութիւնը: Բացայայտ կը դառնայ, որ Արցախի 120.000 բնակիչները զրկուած կը մնան ապահով և արժանավայել կենցաղի ամէնէն տարրական իրաւունքներէն, սնունդէն, առողջապահական խնամքէն, կրթութենէն և երթևեկութեան ազատութենէն»[9]: Հայաստանի իշխող շրջանակներում որդեգրել են «թղթե շերեփի» ու «աղերսագրերի» քաղաքականությունը՝ միաժամանակ փորձելով ամբողջ մեղքն ու պատասխանատվությունը բարդել ռուսական կողմի վրա և հայ հասարակության մեջ տպավորություն ստեղծել, թե իշխանությունն աշխատում է Արցախի շրջափակումը դադարեցնելու ուղղությամբ, մինչդեռ իրականությունը միանգամայն հակառակն է, և ՀՀ-ում իշխողների անտարբերությունն ու Արցախից (նաև Սյունիքի, Վարդենիսի, Վայոց ձորի ու Տավուշի հայկական գյուղերից) «ձեռքերը լվանալու» տրամադրությունը փոխանցվել է նաև հայ հասարակության մի զգալի հատվածին՝ զիջողական ու պարտվողական հոգեբանության վերածվելու շատ վտանգավոր միտումով, քանզի, ինչպես իրավացիորեն նշել է Գարեգին

Նժդեհը. «Չի եղել ավելի զարհուրելի թույն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ վարակիչ է: Եսակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչվողները: Ծո՞ույլ է մտավորապես՝ հոգևոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: Անհայրենապաշտ է՝ հակահայրենիք հրեշներ են վխտում նրա շուրջը: Իսկ անարի է՝ զգալիորեն երկչոտ են դառնում նրա իշխանությունը վայելողները»[10]: Ահա այստեղ է վերջին երեք տարիների «ինչո՞ւ»-ի պատասխանը. պետք է փոխվեն ազգային գաղափարախոսություն և հոգեբանություն ձևավորող ղեկավարները, որոնք կամա, թե ակամա օրինակ են դառնում իրենց իշխանության ներքո գտնվողների համար:

«Մեկ հայը՝ մեկ ոսկի» գերնպատակով առաջնորդվող առաջնորդներին հետևող ժողովրդի համար ամենաողբերգական պահերին իր մեկ այլ հայրենակցի կյանքը թանկ է ոսկուց, և նա պատրաստ է «զոհաբերել» իր մեկ, թե տասնմեկ ոսկին՝ փրկելով հայրենակցի կյանքը: Իսկ եթե «ազգային իշխանությունը»՝ պետության կառավարողները, առաջնորդվում են մեկ գյուղ՝ իշխանության դիմաց և ինչ ուզում են, տանք, որպեսզի խաղաղություն լինի կործանարար սկզբունքով և այդ սկզբունքը դարձնում պետական քաղաքականություն, ապա նույն պարտվողական տրամադրություններով վարակվում է նաև այդ իշխանության գործունեությանը հետևող ժողովուրդը:

Ի՞նչ անել իրավիճակը փոխելու և անտարբերության պատը ճեղքելու համար:

Առաջին հերթին պետք է փոխել նրանց, ովքեր Հայաստանում պետական քաղաքականություն են

մշակում, այսինքն՝ իշխանության աթոռին հայտնված-ներին, այնուհետև մշակել հստակ պետական-ազգա-յին, քաղաքական ծրագիր-գաղափարախոսություն, ինչպիսին օրինակ՝ ՀՅԴ-ի «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան»-ի գաղափարն է: Այդ գաղա-փարախոսությամբ առաջնորդվող իշխանությունը այն օրակարգային կդարձնի նաև ժողովրդի համար: Երկար ու բարակ, հոգնեցնող ճառերի փոխարեն, հստակ գործողություններով անհրաժեշտ է հասա-րակությանը ցույց տալ հայկական պետության քա-ղաքական առաջնահերթությունները կամ էլ թույլ տալ, որ ապաշնորհության, անկարողության պատ-ճառով կամ դավաճանությունից դրդված՝ հայ հասա-րակությանը խեղճի, թույլի, պարտվածի ու վախկոտի հոգեբանություն ներշնչողներն ի վերջո հասնեն իրենց նպատակին:

Կարևոր գերխնդիր է հասկանալ, որ «...հայրենիք փրկել, այսօր արդեն նշանակում է փրկել հայի կյանքեր: Հակառակ դեպքում ազգովի երգելու ենք «Հայ եմ փնտրում, հայ, հայը՝ մեկ ոսկի»»[11]: Հայ հա-սարակական-քաղաքական շրջանակները, մտավո-ականներն ու զինվորականները պետք է հստակ ձևակերպեն իրենց անելիքն ու նպատակները. հեր-թական կապիտուլյացիայից ու հայրենազրկումից հետո անպաշտպան մնացած կանանց ու որբերի հավաքման գործո՞վ զբաղվել, թե՞ թույլ չտալ, որ Արցախում, Սյունիքում, Վայոց ձորում, Գե-ղարքունիքում, Տավուշում հերթական 1915 թ. տեղի ունենա, ո՞րն է հայությանն առաջնորդող շրջանակների ընտրությունը. այն պետք է ձևակերպել հնարավորինս արագ, քանի դեռ մի փոքր շնչելու ժամանակ կա մինչև մոտալուտ լայնածավալ պատերազմը (հավանաբար, տարածաշրջանային կամ համաշխարհային):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն., Եր., 1993., էջ 12:
2.https://yerkirmedia.am/hy/telecast/4/3369:
3. Խանումյան Գ., Հայոց ցեղասպանության տարիներին «մեկ հայ՝ մեկ ոսկի» փրկության առաքելության ձևավորման հարցերի շուրջ., https://agmipublications.asnet.am/wp-content/uploads/2020/05/Tseghaspanagitakan-handes-5-2.2017-36-48.pdf :
4. Նույն տեղում, էջ 44:
5. http://arsarmenia.org/wp-content/uploads/2015/04/HOM_TERT_2.pdf:
6. Սեպուհ., Էջեր իմ յուշերէն., Պոսթոն 1925., էջ 296:
7. Խանումյան Գ., նշվ., աշխ., էջ 46:
8. https://armenpress.am/arm/news/1099372.html:
9. https://horizonweekly.ca/en/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D5%BE-%D5%A4%D5%AB%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4%D5%9D-%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%BD/:
10. https://hraparak.am/post/5b4da1b01b95c206c5c66e26:
11. https://mamul.am/am/news/227820:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Խանումյան Գ., Հայոց ցեղասպանության տարիներին «մեկ հայ՝ մեկ ոսկի» փրկության առաքելության ձևավորման հարցերի շուրջ., https://agmipublications.asnet.am/wp-content/uploads/2020/05/Tseghaspanagitakan-handes-5-2.2017-36-48.pdf :
2. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն., Եր., 1993:
3. Սեպուհ., Էջեր իմ յուշերէն., Պոսթոն 1925:

բ) Համացանցային նյութեր

1. https://yerkirmedia.am/hy/telecast/4/3369:
2. http://arsarmenia.org/wp-content/uploads/2015/04/HOM_TERT_2.pdf:
3. https://armenpress.am/arm/news/1099372.html:
4. https://horizonweekly.ca/en/:
5. https://hraparak.am/post/5b4da1b01b95c206c5c66e26:
6. https://mamul.am/am/news/227820:

Միջուկային զսպման քաղաքականությունը ԱՄՆ ռազմավարական փաստաթղթերում

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական անկայուն զարգացումները, միջպետական, միջտարածաշրջանային հակասությունների սրումը և հակամարտությունների աճը հանգեցրել են ռազմական ուժի կիրառմանը:

Միջուկային տերությունները շարունակում են ընդլայնել, դիվերսիֆիկացնել իրենց միջուկային հնարավորությունները՝ ներառելով նոր և ապակայունացնող համակարգեր, ինչպես նաև ոչ միջուկային հնարավորություններ, որոնք կարող են օգտագործվել ռազմավարական հարձակումներ իրականացնելու համար:

Աշխարհում աճում է միջուկային զենքի կիրառման սպառնալիքը:

2022-ի հոկտեմբերի 27-ին ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտը հրապարակել է ռազմավարական երեք փաստաթղթերի հրապարակային տարբերակները՝ ազգային պաշտպանության ռազմավարությունը /NDS/, միջուկային դիրքի վերանայումը /NPR[1]/ և հակահրթիռային պաշտպանության վերանայումը /MDR/:

ԱՄՆ միջուկային դիրքորոշման վերանայումը (NPR) նկարագրում է Միացյալ Նահանգների միջուկային ռազմավարությունը, քաղաքականությունը, դիրքորոշումը և ուժերը, որոնք աջակցում են ազգային անվտանգության ռազմավարությանը (NSS) և ազգային պաշտպանության ռազմավարությանը (NDS):

ԱՄՆ 2022-ի միջուկային փաստաթղթում առանձնակի նշվում է, որ մինչև 2030-ական թվականները Միացյալ Նահանգներն իր պատմության մեջ առաջին անգամ կհանդիպի երկու խոշոր միջուկային տերությունների՝ որպես ռազմավարական մրցակիցների և պոտենցիալ հակառակորդների: Սա նոր շեշտադրումներ կստեղծի կայունության նկատմամբ և նոր մարտահրավերներ՝ զսպման, սպառազինությունների վերահսկման և ռիսկերի նվազեցման համար[2]:

Համաձայն փաստաթղթի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ) Միացյալ Նահանգների պաշտպանական պլանավորման ընդհանուր արագընթաց մարտահրավերն է և ԱՄՆ միջուկային զսպող ուժը գնահատելու աճող գործոնը: ՉԺՀ-ն ձեռնամուխ է իր միջուկային ուժերի հավակնոտ ընդլայնմանը, արդիականացմանն ու դիվերսիֆիկացմանը և նոր միջուկային եռյակի ստեղծմանը: ՉԺՀ-ն, հավանաբար, մտադիր է մինչև տասնամյակի վերջ ունենալ առնվազն 1000 մարտագլխիկ:

Փաստաթղթում առանձնահատուկ նշվում է, որ Ռուսաստանն Ուկրաինայի դեմ ագրեսիա իրականացրել է միջուկային ստվերի ներքո, որը բնութագրվում է անպատասխանատու հարվածներով, միջուկային զորավարժություններով և զանգվածային ոչնչացման զենքի (WMD) հնարավոր կիրառմամբ:

Ռուսաստանն իր ռազմավարության մեջ շարունակում է շեշտը դնել միջուկային զենքի վրա, արդիականացնել և ընդլայնել միջուկային ուժերը:

Ռուսաստանը հաստատակամ մնում է ԱՄՆ-ի մրցակիցը՝ ամենակարող և բազմազան միջուկային ուժերով: Այսօր այն եզակի է իր կողմից ներկայացված ռազմավարական միջուկային ուժերի համակցությամբ:

Փաստաթղթում առանձնահատուկ ընդգծվում է Ռուսաստանի Դաշնության ժամանակակից միջուկային զինանոցը՝ որպես կայուն սպառնալիք Միացյալ Նահանգների, նրա դաշնակիցների ու գործընկերների համար:

Ավելի քան քսան տարի Ռուսաստանը հետապնդում է ռազմական արդիականացման լայնածավալ ծրագիր, որը ներառում է ժառանգված ռազմավարական միջուկային համակարգերի փոխարինումը և միջուկային համակարգերի կայուն ընդլայնումն ու դիվերսիֆիկացումը, որոնք ուղղակի վտանգ են ներկայացնում ՆԱՏՕ-ի և հարևան երկրների համար[3]:

Համաձայն ԱՄՆ-ի միջուկային փաստաթղթային տվյալների՝ ՌԴ միջուկային համակարգերը ներառում են մինչև 1550 տեղակայված միջուկային մարտագլխիկներ ռազմավարական մեքենաների վրա, որոնք սահմանափակված են «New START» (ռազմավարական հարձակողական սպառազինության կրճատման պայմանագիր. սահմանում է միջուկա-

յին երկու գերտերությունների մարտագլխիկների թիվը) պայմանագրով, ինչպես նաև միջուկային ուժեր, որոնք թվային առումով սահմանափակված չեն սպառազինությունների վերահսկման որևէ պայմանագրով: Օրինակ՝ Ռուսաստանն ունի մինչև 2000 ոչ ռազմավարական միջուկային մարտագլխիկների ակտիվ պաշար, որը պայմանագրով սահմանափակված չէ:

Նմանապես Ռուսաստանը տիրապետում է մի քանի նոր միջուկային հզոր համակարգերի, որոնք նախատեսված են ԱՄՆ-ին, դաշնակիցներին և գործընկերներին վտանգի տակ պահելու համար, որոնցից մի քանիսը նույնպես հաշվառված չեն «New START»-ի շրջանակներում:

Հավելենք նաև, որ 2023 թվականի փետրվարի 21-ից Ռուսաստանը սառեցնում է իր մասնակցությունը «New START» պայմանագրում[4]: Ավելին, փաստաթղթում նաև նշվում է, որ ՉԺՀ-ն և Ռուսաստանը հավասարաբար ունեն նաև քիմիական և կենսաբանական պատերազմին առնչվող կարողություններ, որոնք վտանգ են ներկայացնում ԱՄՆ-ի, դաշնակիցների և գործընկեր ուժերի, ռազմական գործողությունների և քաղաքացիական բնակչության համար:

Թեև Հյուսիսային Կորեան ՉԺՀ-ի և Ռուսաստանի հետ նույն մասշտաբով մրցակից չէ, այնուամենայնիվ ներկայացնում է նաև զսպման երկընտրանքներ Միացյալ Նահանգների, նրա դաշնակիցների և գործընկերների համար:

Համաձայն միջուկային փաստաթղթի՝ Հյուսիսային Կորեան մշտական սպառնալիք և աճող վտանգ է ներկայացնում ԱՄՆ-ի և հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար, քանի որ այն ընդլայնում, դիվերսիֆիկացնում և բարելավում է իր միջուկային, բալիստիկ հրթիռների և ոչ միջուկային կարողությունները՝ ներառյալ քիմիական զենքի պաշարները: Կորեական թերակղզում ճգնաժամը կամ հակամարտությունը կարող է ներգրավել միջուկային զենք ունեցող մի շարք դերակատարների՝ բարձրացնելով ավելի լայն հակամարտությունների վտանգը[5]:

Հյուսիսային Կորեայի կողմից ԱՄՆ-ի կամ նրա դաշնակիցների ու գործընկերների դեմ ցանկացած միջուկային հարձակում անընդունելի է և կհանգեցնի այդ ռեժիմի կործանմանը: Չկա որևէ սցենար, որում Կիմ Չեն Ընի ռեժիմը կարող է միջուկային զենք կիրառել և գոյատևել: Միջուկային զենքի օգտագործման դեպքում Հյուսիսային Կորեան կարող է նաև արագ ռազմավարական հարձակումներ իրականացնել Արևելյան Ասիայում: Միացյալ Նահանգների միջուկային զենքերը շարունակում են դեր խաղալ նման հարձակումները կանխելու գործում: Ավելին, պատասխանատվության կենթարկեն ռեժիմին միջուկային զենքի տեխնոլոգիայի, նյութի կամ փորձաքննության ցանկացած փոխանցման համար[6]:

Ներկայում Իրանը միջուկային սպառնալիք չի ներկայացնում, սակայն շարունակում է զարգացնել կարողությունները, որոնք նրան հնարավորություն

կտան միջուկային զենք արտադրել: ԱՄՆ-ի հետևողական քաղաքականությունն է Իրանի կողմից տարածաշրջանային ագրեսիան զսպելու համար թույլ չտալ նրան միջուկային զենք ձեռք բերել:

Անդրադառնալով անվտանգության միջավայրի մի շարք մարտահրավերներին՝ Միացյալ Նահանգները հավատարիմ է քայլեր ձեռնարկելու հարցում՝ սպառազինությունների վերահսկման, միջուկային զենքի չտարածման և ռիսկերի նվազեցման ուղղությամբ: ԱՄՆ միջուկային քաղաքականությունը հնարավորություն է տալիս նվազեցնել միջուկային զենքի դերը գլոբալ մակարդակում, ուժեղացնել ռազմավարական կայունությունը, նվազեցնել պատերազմի կամ էսկալացիայի ռիսկերը՝ ապահովելով անվտանգ, արդյունավետ միջուկային զսպման մեխանիզմները:

ԱՄՆ զսպման քաղաքականությունը շարունակում է ձևավորել միջուկային զենքի դերը ԱՄՆ ռազմավարության մեջ.

1. Զսպել ռազմավարական հարձակումները:

Միացյալ Նահանգները հաստատում է, որ իր միջուկային ուժերը զսպում են ռազմավարական հարձակման բոլոր ձևերը: Դրանք ծառայում են կանխելու ցանկացած մասշտաբի միջուկային զենքի օգտագործումը, որն ուղղված է ԱՄՆ-ի, դաշնակիցների և գործընկերների տարածքների դեմ ցամաքում, օդում, ծովում կամ տիեզերքում:

Հակառակորդի կողմից միջուկային զենքի ցանկացած կիրառում, անկախ գտնվելու վայրից, հիմնովին կփոխի հակամարտության բնույթը, կստեղծի անվերահսկելի էսկալացիայի ներուժ և կունե-

նա ռազմավարական ազդեցություն: Ուստի պետք է զսպել ինչպես լայնածավալ, այնպես էլ սահմանափակ միջուկային հարձակումները մի շարք հակառակորդներից:

2. Վստահեցնել դաշնակիցներին և գործընկերներին:

ԱՄՆ ռազմավարական փաստաթղթերում / NSS և NDS / պահանջվում է ուժեղացնել անվտանգության կառուցվածքները առանցքային շրջաններում՝ դաշնակիցների և գործընկերների հնարավորությունները լիովին օգտագործելու համար, նաև հակառակորդի ագրեսիան զսպելու և անհրաժեշտության դեպքում տապալելու: ԱՄՆ գլոբալ դաշինքի և գործընկերության ցանցը ռազմական ծանրության կենտրոն է: ԱՄՆ-ի ընդլայնված միջուկային զսպումը հիմնարար է այս ցանցի համար:

Այսպիսով՝ դաշնակիցներին և գործընկերներին հավաստիացնելը, որ այդ պարտավորությունները վստահելի են, առանցքային է ԱՄՆ ազգային անվտանգության և պաշտպանության ռազմավարության համար:

Դաշնակիցները պետք է վստահ լինեն, որ Միացյալ Նահանգները պատրաստ է և ի վիճակի է զսպել իրենց առջև ծառացած ռազմավարական սպառնալիքների շրջանակը և մեղմել այն ռիսկերը, որոնք նրանք կստանձնեն ճգնաժամի կամ հակամարտության ժամանակ:

ԱՄՆ միջուկային ուժերի արդիականացումը առանցքային է դաշնակիցներին վստահեցնելու համար, որ Միացյալ Նահանգները հավատարիմ է և ի վիճակի է զսպել ԱՄՆ միջուկային ռազմավարության կողմից նշված սպառնալիքների շրջանակը:

3. Հասնել ԱՄՆ-ի նպատակներին, եթե զսպումը /կանխարգելումը/ ձախողվի:

ԱՄՆ-ն կպահպանի անվտանգ և արդյունավետ միջուկային զսպման կարողությունները իր նպատակներին հասնելու համար, եթե ԱՄՆ նախագահը եզրակացնի, որ միջուկային զենքի օգտագործումն անհրաժեշտ է: Նման իրավիճակում Միացյալ Նահանգները կձգտի վերջ դնել ցանկացած հակամարտության վաղասին նվազագույն մակարդակով, Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների ու գործընկերների համար լավագույն հասանելի պայմաններով[7]:

Քանի դեռ ԱՄՆ դաշնակիցները և գործընկերները բախվում են միջուկային սպառնալիքներին, ընդլայնված միջուկային զսպումը կմնա տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության հենասյունը:

4. Իրականացնել ուժեղ և վստահելի միջուկային զսպում եվրատլանտյան տարածաշրջանում:

Քանի դեռ գոյություն ունի միջուկային զենք, ՆԱՏՕ-ն կմնա միջուկային դաշինք: Հստակ միջուկային առաքելությամբ ամուր և համախմբված դաշինքը կարևոր է ագրեսիան զսպելու և եվրատլանտյան տարածքում խաղաղությունն ու կայունությունը խթանելու համար՝ հատկապես հաշվի առնելով Ռուսաստանի ագրեսիան իր հարևանների դեմ, ինչպես նաև միջուկային զենքի և այլ ռազմավարական կարողությունների կենտրոնական դերը ռուսական դոկտրինում:

Միացյալ Նահանգների ռազմավարական միջուկային ուժերը և առաջ շարժվող միջուկային զենքերը կարևոր քաղաքական և ռազմական կապ են ապահովում Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի միջև:

Ֆրանսիայի և Միացյալ Թագավորության անկախ միջուկային ուժերի և ՆԱՏՕ-ի միջուկային բեռի հետ համատեղ ԱՄՆ միջուկային ուժերը նշանակալի են Հյուսիսատլանտյան դաշինքի զսպման և պաշտպանական դիրքորոշման համար:

5. Իրականացնել ուժեղ և վստահելի միջուկային զսպում հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

ԱՄՆ անվտանգության պարտավորությունները հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում դաշնակիցների և գործընկերների հանդեպ հաստատուն են: ԱՄՆ-ն գիտակցում է աճող մտահոգությունները ՉԺՀ-ում, Հյուսիսային Կորեայում և Ռուսաստանում միջուկային և հրթիռային զարգացումների վերաբերյալ և հավատարիմ է զսպող ուժի ուժեղացմանը այնպիսի եղանակներով, որոնք արձագանքում են տարածաշրջանային անվտանգության միջավայրի փոփոխություններին: Այդ նպատակով ԱՄՆ-ն կաշխատի դաշնակիցների և գործընկերների հետ, որպեսզի ապահովի հնարավորությունների, հայեցակարգերի, տեղակայման զորավարժություններ ագրեսիան զսպելու և անհրաժեշտության դեպքում արձագանքելու համար[8]:

Միացյալ Նահանգները կշարունակի տեղակայել ճկուն միջուկային ուժեր, որոնք հարմար կլինեն տարածաշրջանային միջուկային հակամարտությունը զսպելու համար՝ ներառյալ ռազմավարական ռմբա-

կոծիչները, երկակի հզորությամբ կործանիչները և միջուկային զենքերը տարածաշրջանում և ամբողջ աշխարհում տեղակայելու հնարավորությունը:

ՉԺՀ-ն և Ռուսաստանը գտնվում են իրենց միջուկային զենքի մշակման տարբեր փուլերում, սակայն նրանցից յուրաքանչյուրը մեծ և աճող միջուկային սպառնալիք է Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների ու գործընկերների համար:

ՉԺՀ-ի դեմ զսպում իրականացնող ԱՄՆ-ի ճկունություն ապահովող ուժերը ներառում են W76-2 ցածր թողունակության սուզանավից արձակված բալիստիկ հրթիռների մարտագլխիկները, գլոբալ տեղակայման ենթակա ռմբակոծիչները, երկակի ունակությամբ կործանիչները և օդային արձակվող թևավոր հրթիռները:

Ռուսաստանի լայնածավալ հարձակումները կանխելու համար նախատեսվում է ժամանակակից, դիմացկուն միջուկային եռյակը՝ F-35A երկակի հզորությամբ կործանիչները (DCA), որոնք հագեցած են B61-12 ռումբով, W76-2 մարտագլխիկը, «Long-Range Standoff» (LRSO) զենքը: Այս ճկուն և հարմարեցված կարողություններն առանցքային են երաշխավորելու, որ Ռուսաստանի ղեկավարությունը սխալ չի հաշվարկի միջուկային զենքի օգտագործման հետևանքները որևէ մասշտաբով՝ դրանով իսկ նվազեցնելով նրանց վստահությունը ինչպես ՆԱՏՕ-ի դեմ սովորական պատերազմ սկսելու, այնպես էլ նման հակամարտությունում ոչ ռազմավարական միջուկային զենքի կիրառման հարցում[9]:

Համաձայն միջուկային փաստաթղթի՝ ԱՄՆ-ն կշարունակի ճնշում գործադրել Հյուսիսային Կորեայի վրա՝ կատարելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տարբեր բանաձևերով ստանձնած պարտավորությունները և վերադառնալու բանակցություններին:

Հյուսիսային Կորեայի սպառնալիքի նվազեցման կամ վերացման՝ ԱՄՆ-ի նպատակը մնում է Կորեական թերակղզու ամբողջական և ստուգելի ապամիջուկայնացումը:

ԱՄՆ միջուկային փաստաթուղթը ընդգծում է ԱՄՆ-ի գլոբալ առաջնորդության ռազմավարական նպատակները:

Սակայն նոր աշխարհակարգի ձևավորումը տեսանելի է դարձնում տնտեսապես ավելի հզոր ուժի առկայությունը՝ ի դեմս Չինաստանի: Ռուս-չինական ռազմավարական համակողմանի գործընկերությունը ԱՄՆ-ի համար դարձել է թե՛ տնտեսական և թե՛ ռազմական առումով հզոր սպառնալիք:

Բարձր է գնահատվում տարածաշրջանում Իրանի ազդեցությունը. Իրանի կողմից մի շարք զորավարժությունները, Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների զարգացումը նպաստում են Իրանին դառնալու լուրջ դերակատար ոչ միայն Հարավային Կովկասում, այլ նաև՝ Մերձավոր Արևելքում:

Աշխարհաքաղաքական ներկայիս զարգացումները, կարծում ենք, առերեսվելու են Արևմուտքի ագրեսիվ քաղաքականության հետ:

ԱՄՆ Պենտագոնի համալիրը

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1- DOD Releases National Defense Strategy, Missile Defense, Nuclear Posture Reviews, 2022 https://www.defense.gov/News/News-Stories/Article/Article/3202438/dod-releases-national-defense-strategy-missile-defense-nuclear-posture-reviews/ /26.03.2023թ./:

2- 2022 National Defense Strategy of The United States of America, Including the 2022 Nuclear Posture Review and the 2022 Missile Defense Review https://media.defense.gov/2022/Oct/27/2003103845/-1/-1/1/2022-NATIONAL-DEFENSE-STRATEGY-NPR-MDR.PDF /26.03.2023թ./:

3- Տես նույն տեղում:

4- Послание Президента Российской Федерации от 21.02.2023 г. б/н http://kremlin.ru/acts/bank/49010/page/1 /26.03.2023թ./:

5- Տես 2022 National Defense Strategy of The United States of America, Including the 2022 Nuclear Posture Review and the 2022 Missile Defense Review https://media.defense.gov/2022/Oct/27/2003103845/-1/-1/1/2022-NATIONAL-DEFENSE-STRATEGY-NPR-MDR.PDF /26.03.2023թ./:

6- Տես նույն տեղում:

7- Տես 2022 National Defense Strategy of The United States of America, Including the 2022 Nuclear Posture Review and the 2022 Missile Defense Review https://media.defense.gov/2022/Oct/27/2003103845/-1/-1/1/2022-NATIONAL-DEFENSE-STRATEGY-NPR-MDR.PDF /26.03.2023թ./:

8- Տես նույն տեղում:

9- Տես նույն տեղում:

Սփիւռքից դէպի սփռում ու վերադարձ

Վազրիկ Բազիլ
Դոկտոր, Գերմանիայի քաղաքական և տնտեսական ոլորտների հաղորդակցական հարցերի գծով խորհրդական, դասախոս, բանաստեղծ

Արամ Վեհափառը անցեալ տարին հռչակել էր Սփիւռքի տարի: Սա ընդհանուր անդրադարձման պատեհ ու հրատապ առիթ է նամանաւանդ Արցախի ողբերգական պատերազմից յետոյ, երբ թէ՛ Հայաստանը և թէ՛ Սփիւռքը անփառունակ վիճակում են գտնուում: Միջին Արևելքի վերջին տասնամեակների քաղաքական ու տնտեսական անկումը ջլատել ու նօսրացրել է հայկական դասական գաղութները՝ սատարելով արտագաղթը դէպի Արևմուտք կամ Հայաստան: Հայաստանի անկախութիւնն էլ իր հերթին կլանեց Սփիւռքի տնտեսական, մարդկային ու մտաւոր ոյժը, որը այս տասնամեակներում կեդրոնացած էր Հայաստանի բարգաւաճմանը նպաստելու վրայ: Այս երկու քաղաքական ազդակների հետևանքով տուժեց Սփիւռքը, մանաւանդ Միջին Արևելքի Սփիւռքը, որը մարդկային ոյժով տևականօրէն սնում էր արևմտեան Սփիւռքը: Այնտեղից արտագաղթողներն էին, որոնք կենսունակութիւն ու կայտառութիւն էին բերում այստեղի համայնքներին, որոնք առանց այդ հոսքի հոգեվարքի մէջ կ'ընկնէին: Այս տասնամեակների ընթացքին Սփիւռքը ինքն իր մէջ սփռուեց և այս սփռումից պէտք է կրկին դէպի Սփիւռք վերադառնայ:

Սա առաւել ևս անհրաժեշտ է, որովհետև այստեղ ծառացած է նաև արևմտահայութեան և արևմտահայերէնի հարցը: Հայաստանից դէպի Արևմուտք շարունակուող ու նոր թափ առած արտագաղթը ոչ միայն հիւծում է Հայաստանը, այլև աւելի է սրում արևմտահայերէնի գոյութենական տագնապը: Ամէն ինչ վերածում է արևելահայերէնի, և արևմտահայերէնը լուռ նահանջում է: Համայնքային վարչական հաղորդակցութիւնները վերածում են սովետական ուղղագրութեամբ գրուող արևելահայերէնի, էջմիածնական թեմերում հայաստանցի արևելահայ հոգևորականների գերակշիռ մեծամասնութիւնը խօսում է արևելահայերէն, և քչերն են հոգս արևմտահայերէնին ու փորձում սատարել արևմտահայերէնի ամրացմանը: Իրենք թերևս զգան տագնապը, թերևս կարեկցեն, բայց քչերն են այդ տագնապը իրենցը համարում և հակակշռում: Սփիւռքի հարցը այսօր էապէս արևմտահայութեան հարցն է: Բարեբախտաբար կան արևմտահայերէնի ուսուցման նախաձեռնութիւններ, հետաքրքրական նախաձեռնութիւններ, սակայն սրանք բաւարար չեն: Սփիւռքի հարցը համայնքային և ընտանեկան կեանքի հարց է և ոչ միայն ուսումնական ու մտաւոր:

Որո՞նք են Սփիւռքի հզօրացման ակունքները: Նախևառաջ Հայաստանում և Սփիւռքում յստակ պատկերացում չկայ Սփիւռքի մասին: «Սփիւռքը» միգամած մի հասկացություն է և նշանակում է մանաւանդ «արտասահմանեան կեցավայր»: Այս ըմբռնման պատճառով էլ սովետական աւանդութեան

համաձայն՝ խօսւում է «նոր Սփիւռքից» ու «հին Սփիւռքից» այնպէս, ինչպէս խօսւում է «հին ու նոր ուղղագրութիւնից» կամ «հին ու նոր հայ մշակոյթից»: Այս ածականները ոչ թէ ժամանակային ածականներ են, այլ գաղափարախօսական. հինը հնացածն է, մինչ նորը՝ թարմն ու դալարը: Ի դէպ, քրիստոնեաների համար միայն մէկ իրաւ նորութիւն կայ: Դա Քրիստոսի մարդեղութիւնն է: Եւ այս պատճառով էլ շարականները լեցուն են «նոր» ածականով (հին ու նոր Ադամ, հին ու նոր Եւա, նոր ժողովուրդ և այլն): Միւս «նորութիւնները» արդէն իսկ առկայի այլակերպ միացումն ու բաժանումներն են, լուծումն ու բաղադրումը: Սփիւռքը, սակայն, նախևառաջ «կեցավայր» չէ, այլ «կեցաձև»՝ իրեն իւրայատուկ ժամանակով: Սփիւռքը նաև ժամանակի հարց է և ոչ միայն վայրի: Հայաստանցին և սփիւռքահայը տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում ապրող մարդիկ են: Գերմանիա եկող հայաստանցիները «նոր» սփիւռքահայեր չեն, այլ «արտա-սահմանցի հայեր» են, որովհետև «արտա-սահմանում» են ապրում և սփիւռքեան կեցաձևի փորձառութիւն չունեն: Իսկ սփիւռքահայերը արտասահմանցիներ չեն, որովհետև Հայաստանը իրենց համար ոչ թէ իրական, այլ իրականութեան սահմանամերձ գաղափարական «ներսահման» է:

Սփիւռքի հզօրացման ակունքներից մէկը զգայարանքներն են: Հայկական շրջանակներում յաճախ խօսւում է «հայկական զգացումի» մասին, որ նա պակսում է երիտասարդութեան մէջ, որ առանց այդ զգացումի հիւծւում է «հայկական ինքնութիւնը», որ համայնքների առաջնահերթ պարտականութիւնն է «մատաղ սերնդին» փոխանցել այդ զգացումը: Հակիրճ ասած՝ «հայապահպանութիւնը» համարւում է զգացական հարց: Այս կարծիքն ինքնին սխալ չէ, բայց թերի է: Զգացականից բացի՝ կարևոր է զգայականը, իմա՝ մարմինը: «Հայապահպանութիւնը» մարմ-

նական հարց է: Զգայարանքները կամ մարմինը հայ մշակոյթի մէջ որբակեաց են, կարծես թէ երկրորդական լինեն, թերագնահատելի: Հաւանաբար քրիստոնէութեան թիւրըմբռնումն է, որ սատարում է նման նախապաշարումների տարածմանը: Ճիշտ է, որ քրիստոնէութեան մէջ արմատացած է մարմնի ու զգայարանքների հանդէպ քննադատական կեցուածքն այն աստիճան, որ Աստուծոյն մօտենալու և միանալու համար անհրաժեշտ է համարուում «սպանել» մարմինը և չէզոքացնել զգայարանքները: Սակայն սա իրաւ քրիստոնէական հայեցակէտ չէ, որովհետև նախ՝ մարմինը Աստծոյ արարչագործութեան մաս է կազմում ու «բարի» է և ապա՝ մարդու կենդանի մարմինը հոգեկանի և զգայականի անքակտելի ամբողջութիւնն է: Եւ ամբողջութիւնն աւելի է, քան մասերի սոսկ գումարը:

Սակայն անկախ աստուածաբանական այս մտքերից, մարդաբանութիւնը մեզ ուսուցանում է, որ ճանաչողութեան հիմքը զգայարանքներն են: Թովմաս Ակուինացիի (1225-1274) ասոյթը հանրածանօթ է. «Nihil est in intellectu, quod non fuerit in sensu», որը նշանակում է՝ «Բանականութեան մէջ ոչինչ կայ, որը նախօրօք չի եղել զգայարանքների մէջ»: Այն, ինչ որ ինձ այստեղ հետաքրքրում է, ոչ այնքան ճանաչողութեան հարցն է, որքան այս սկզբունքի գործնական հետևումները: Հիմնական հետևումը այն է, որ «հայկականութիւն» փոխանցելու համար պէտք է հիմնուել զգայարանքների վրայ: Այսօր զգայարանքներն ու մարմինը թերագնահատուում են նաև ուրիշ պատճառով: Դա թուայնացումն է: Մինչ իրականութիւնը եռածաւալ է, համակարգչային աշխարհը երկծաւալ է: Երեխաների կազմաւորման համար էական է իրական՝ եռածաւալ, և ոչ միայն թուայնացած՝ երկծաւալ, աշխարհը: Հոտոտելիքը, շօշափելիքն ու ճաշակելիքը նոյնքան կարևոր են, ինչքան տեսանելիքն ու լսելիքը: Առաւել ևս այս զգայարանքների միասնական ապրումը աւելի կարևոր է, քան մասնատուածը, մէկ կողմից՝ տեսանելիքն ու լսելիքը և միւս կողմից՝ հոտոտելիքը, շօշափելիքն ու ճաշակելիքը: Ժամանակի ու միջոցի ընկալումն էլ զօդուած է բոլոր զգայարանքների և մարմնի հետ: Նոյնիսկ համակարգչային աշխարհում տեսանելիքն ու լսելիքը տարբերուում են իրական ձայներից ու գոյներից: Երեխաների աշխարհը պիտի իրականը լինի և ոչ թուայնացածը, նոյնիսկ եթէ թուայնացումը մեծ հնարաւորութիւններ է մատուցում բոլորին: Ինքնութիւնն էլ՝ թէ՛ անհատականը և թէ՛ հաւաքականը, «online» չէ, այլ՝ «offline», ոչ թէ երկծաւալ, այլ՝ եռածաւալ:

Ցաւալի է, որ այս դաստիարակչական հարցերի մասին համայնքներում չի խօսուում: Բոլորը զմայլած համակարգիչի ընձեռած կարելիութիւններով՝ հեշտութեամբ մոռանում են նոյն այդ կարելիութիւնների վտանգները դաստիարակութեան ու առողջութեան համար: Հարցը միայն մոլութիւնը չէ, որի ապաքինման ծախսերը մասնաւորապես Գերմանիայում ապահովագրական ընկերութիւններն են ստանձնում, այլ նաև անշարժութեան ու առանձնութեան վտանգը, սերտելու ունակութեան տկարացումը և ուշադրութեան ճապաղումը: Զգայարանքների համապարփակ գործածութիւնն ու խնամքը կարևոր են թէ՛ դաստիարակութեան, թէ՛ համայնքային կեանքի և թէ՛ համայնքներում զգայարանքների միջոցով երեխաների անգիտակցութեան վրայ ազդելու համար:

Համայնքները փորձում են ամէն գնով առինքնել երիտասարդութիւնը, իրենց ներգրաւել համայնքային աշխատանքների մէջ, որպէսզի երբ հին սերունդը հրապարակից քաշուի, նոր սերունդը ստանձնի և շարունակի համայնքային կամ գաղութային աշխատանքները: Այս ջանքերում համայնքներն ու հովիւները կեդրոնանում են երիտասարդների վրայ և յաճախ մոռանում են մանուկներին և մանուկների ծնողներին: Մինչ բարդ է թափանցել երիտասարդների գիտակցութեան ու ներաշխարհի մէջ և աւելի ժամանակատար, եթէ նրանք արդէն իսկ արբունքի տարիքի մէջ են, աւելի դիւրընթաց է հասնել մանուկների անգիտակցին զգայարանքների միջոցով: Հինգ զգայարանքների միջոցով կարելի է մանուկներին ընտելացնել, մտերմացնել հայ մշակոյթի հետ, որպէսզի երբ երեխաները մեծանան, այդ մտերմութիւնը հանգի հարազատութեան ու համայնքային աշխուժութեան: Սակայն այս բոլոր նկրտումները ապարդիւն կը մնան, եթէ ծնողները չը գործակցեն և բոլոր պարտականութիւնները կործեն համայնքների և հոգևորականների ուսերին: Մինչ երիտասարդների պարագային ծնողների դերը սահմանափակ է, մանուկների պարագային դա էական է:

Ինչպէ՞ս է կարելի սնել զգայարանքները՝ տեսողականը, լսողականը, ճաշակելիքը, շօշափելիքը և հոտոտելիքը: Ահաւասիկ մի քանի օրինակներ, որոնք սպառիչ չեն, ոչ էլ վերջնական կամ հարկադրական: Կարևորը սկզբունքն է, իսկ օրինակները փոխարինելի են:

ա) Այբուբենը՝ ամէն գիր տպուած, գծագրուած կամ լուսանկարուած առանձին թուղթի վրայ, կախել մանուկի սենեակի պատերից կամ հայերէն

գիրք ու թերթ դնել գետնի վրայ, որպէսզի երեխան խաղալու ժամանակ անընդհատ այդ գրերը տեսնի: Երեխաների աչքն ու ձեռքը պիտի տեսնեն, շօշափեն այս առարկաները, քայլելու ժամանակ ակոկեն գրքին, առանց որ ծնողները երկար ու բարակ այբուբենի կամ հայերէն լեզուի մասին խօսեն կամ այդ գրերը դիտումնաւոր երեխաների ուշադրութեան յանձնեն: Իրենց առկայութիւնը երեխաների շրջապատում բաւարար է, որ անգիտակիցը ըմբռշխնի այդ բոլորը:

բ) Ամէն օր մէկ ժամ լսել Կոմիտասի երաժշտութիւնը: Երեխան թող խաղայ և ենթախորքում լսի Կոմիտասի երաժշտութիւնը՝ առանց բացատրութիւնների կամ պատմական ներբողների: Սա կարող է ժողովրդական կամ հոգևոր երաժշտութիւնը լինի՝ իրենց կշռոյթով ու մեղեդիներով:

գ) Կիրակնամուտին կամ տաղաւար տօներին թող ընտանիքները խունկ ծխեն կամ «Papier d'Armenie» վառեն, որպէսզի հոտառութիւնը շաղկապուի այս փոքր ծէսի հետ:

Այս երեք օրինակները կարելի է նաև իրար հետ բաղադրել: Էականը նման արարմունքների կանոնաւոր և տևական գործադրումն է, որպէսզի մանուկները կամաց-կամաց անգիտակցաբար մտերմանան հայ գրերի կամ հայկական դասական երաժշտութեան կամ սովորութիւնների հետ: Կարելի է նաև թէ՛ անչափահասների և թէ՛ չափահասների համար պատրաստել «Youtube»-եան մի շարք, որը պարունակի արևմտահայ գրականութեան ծաղկաքաղի ընթերցանութիւնը: Առանց վերլուծութեան կամ երկար բացատրութիւնների՝ ասմունքողը ընթերցում է, օրինակ, Շահան Շահնուրի մի քանի յօդուածները կամ Ռուբէն Զարդարեանի մի քանի պատմուածքները կամ Յակոբ Օշականի «Մնացորդացից» հատուածներ: Եւ ընտանիքները երեխաների ներկայութեամբ լսում են այս շարանը: Կարևոր չէ ամէն բառ ու դարձուածք հասկանալը: Կարևորը լեզուն է իր ամբողջականութեան մէջ՝ իր կշռոյթով ու շեշտով: Ով գրականութիւն կարդալու տրամադրութիւն չունի, կարող է գրականութիւն լսել: Նման մի շարքի պատրաստութիւնը ճկուն է և կարող է բազմաթիւ տարազումներ ունենալ:

Համայնքայինները կամ հոգևորականները թող նորածինների ծնողների հետ խօսեն, բացատրեն այս բոլորի նպատակն ու սկզբունքը և խրախուսեն, որ մասնակցեն: Սա առաջին քայլն է: Իսկ երկրորդը՝ նոյնքան կարևոր, այն է, որ մկրտող հոգևորականները կամ համայնքայինները պարբերաբար հանդիպեն ծնողներին և տեղեկանան, թէ արդեօք իրենք գործադրում են այս առաջարկները, և որոնք են իրենց փորձառութիւնները: Կարելի է նոյնիսկ նորածինների կամ մանուկների ծնողներին հաւաքել և միասնաբար խօսել այս հարցերի և իրենց ունեցած փորձառութիւնների մասին: Այս խօսակցութիւնն ու պարբերական յիշեցումը անհրաժեշտ է, որովհետև ծնողները նոյնքան ուղեցոյցի պէտք ունեն, ինչքան մանուկները:

Ինչքան լաւ կը լինէր, եթէ համայնքներում խօսուէր նաև այն հարցի մասին, որ թուայնացած այս ժամանակում հաղորդակցութեան նոր միջոցները պէտք է գիտակցաբար ու վերապահութեամբ գործածուեն, որ ծնողները պէտք է իրենց ընտանեկան կեանքում ժամեր վերապահեն մանաւանդ երեխաների ներկայութեամբ, որոնց ընթացքին իրենք ո՛չ բջիջային հեռաձայնը գործածեն, ո՛չ համացանցում դեգերեն և ո՛չ հեռատեսիլի մէջ թաղուեն, այլ երեխաների հետ խաղան, երգեն, պարեն, արտասանեն, այսինքն՝ բոլոր զգայարանքները բանեցնեն: Միայն համակարգիչով և ոչ ձեռքով գրելը նմանապէս վնասում է մտածելուն, որովհետև ձեռքը միայն իրեր բռնելու գործիք չէ, այլ նաև՝ ըմբռնելու միջոց: Այս պատճառով պէտք է ընտանիքները ուշադիր լինեն, որ երեխաները իրենց ձեռքերը համապարփակ օգտագործեն: Ձեռքը կապուած է մտքի հետ: Ինչքան լաւ կը լինէր, եթէ համայնքները և հոգևորականները նաև այն հարցի մասին խօսէին, որ երեխաների կեանքը պէտք է կշռոյթ ունենայ, ամենօրեայ կանոնաւոր կրկնութիւն: Այս առօրեայի կշռոյթը կոչւում է ծէս: Ծէսը և ծիսակատարութիւնը միայն կրօնական երևոյթներ չեն, այլ ընդհանուր մարդկային: Ընտանիքներն էլ պէտք է մշակեն իրենց ծէսերը՝ առօրեայ ու պարբերական կրկնութիւնները, որոնք երեխաներին կոփում են և վստահութիւն ներշնչում, ինքնավստահ դարձնում: Ծէսն էլ կրթութեան ու կրթանքի մաս է կազմում: Լաւ ընտանիքները ծէս ունեցող ընտանիքներն են: Սա նշմարել եմ ոչ միայն, բայց նամանաւանդ գերմանական ազնուական գերդաստանների մէջ, որոնք հարիւրաւոր տարիների պատմութիւն ունեն և իրենց ընտանեկան աւանդութիւնները սերնդից սերունդ փոխանցելով՝ կոփում են իրենց ընտանեկան ինքնութիւնը:

Այս գործնական հարցերի մասին կարելի է նաև

ուղեցոյց հակիրճ տեսանիւթ պատրաստել՝ օրինակներով ու բացատրութիւններով և ցրել համայնքներում:

Այս ընդհանուր նկատառումներից յետոյ անդրադառնանք արևմտահայերէնի հարցին:

Սփիւռքի հարցը հիմնականում արևմտահայութեան և արևմտահայերէնի հարցն է: Եթէ Հայաստանում արևելահայերէնը իմաստային տագնապի ու երերումների մէջ է, արևմտահայերէնը՝ գոյութենական տագնապի և հոգեվարքի: Այն գլխաւոր պատճառը, որը լեզուն վերածել է «ի միջի այլոց» հարցի, այն թիւրըմբռնումն է, որի համաձայն՝ «լեզուն հաղորդակցական միջոց է»: Ըստ այս ըմբռնումի՝ մարդը ընկալում, զգում և մտածում է և ապա մտածածը, զգացածը և ընկալածը «արտայայտելու» համար մի «միջոց» է փնտրում և քանի որ այդ միջոցը ո՛չ մուրճն է, ո՛չ աղը և ո՛չ էլ օճառը, դիմում է միւս «միջոցին»՝ գրին: Ուրեմն մարդը «գործածում» է գիրը, արտայայտում, արտայայտուելուց յետոյ այդ «միջոցը» պահարանի մէջ դնում և մինչև յաջորդ «գործածութիւնը» ապահով պահում: Նման մօտեցումը թերևս կայտառ երևակայութեան արդիւնքը լինի, սակայն մարդաբանութեան հետ որևէ առնչութիւն չունի: Անշուշտ, այս հակիրճ տողերով կարելի չէ հանգամանօրէն անդրադառնալ սոյն հարցին, սակայն ելնելով այն իրադրութիւնից՝ որ մարդը ընկալում, զգում և մտածում է ոչ թէ լեզուից դուրս, այլ լեզուի մէջ, ապա լեզուի նկատմամբ հոգատարութիւնն ու հոգածութիւնը միաժամանակ մտածման, զգացման և ընկալման խնամք ու մշակումն են: Հետաքրքրական և օգտաշատ հետազօտութիւն պիտի լինէր քննելը, թէ ինչպէս Հայաստանում արևելահայերէնի անկումը մղել է նաև պետական կարգ ու սարքի թուլացմանը:

Լեզուի նկատմամբ անհոգութիւնը ընկալման, զգացման և մտածման նկատմամբ անհոգութիւն է: Արևմտահայերէնի նկատմամբ «Գնայ մեռիր, արի քեզի սիրեմ» լոզունգը չի կարող այլևս գործունէութեան կարգախօս լինել: Մշակոյթը թանգարանում դնելն ու աշխարհում հնապարծիկ ու մնափառ դեգերելը իմաստութեան նշան չէ: Իմաստութիւնը եղածն ու ունեցածը խնամելու և մշակելու մէջ է: Ով «հոգի» ունի, «հոգում» է, «նախահոգ» քայլեր է նախաձեռնում, խնամում է ու մշակում: Իսկ ով մշակում է, մշակոյթ ունի: Խնամուած ու կոփուած լեզուն մշակոյթ ունենալու ցայտուն նշաններից է: Կոփուած լեզու նշանակում է կոփուած միտք: Սփիւռքեան շաբաթօրեայ կամ կիրակնօրեայ վարժարանները մեծ նուիրումով ու զոհաբերութեամբ շարունակում են իրենց աշխատանքը, սակայն նման անձնուէր ճիգը հարցի լուծման մի մասն է: Ընտանիք, զգայարանք և ծէս պէտք է դառնան այն հիմքը, որի վրայ կարող են թարմանալ ու ամրապնդուել ուսումնական այս ձեռնարկները:

Սպորև մի քանի այլ առաջարկներ.

ա) Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Մխիթարեան միաբանութիւնը, Զմմառի կաթողիկէ

կաթողիկոսութիւնը և գործող արևմտահայ քիչ թէ շատ հաստատուն կազմակերպութիւնները թող միասնաբար մշակեն արևմտահայ մշակոյթը խթանելու մի ծրագիր: Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը պէտք է սփիւռքեան ծուխերում պաշտօնավարող հոգևորականներին յանձնարարի, որ իրենք յատուկ հոգատարութիւն ցուցաբերեն արևմտահայերի և արևմտահայերէնի նկատմամբ՝ հայթայթելով լեզուի ու մշակոյթի ուսուցման ու բանեցման միջոցներ:

բ) Անհրաժեշտ է վերաբացուեն կամ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան և կամ էլ Սևրի Մուրատեան վարժարանները, որոնք Եւրոպայի ամենագեղեցիկ երկրներում ու քաղաքներում գտնուելով՝ կարող են նոր շունչ ու թափ տալ արևմտահայ մշակոյթին: Ես Մուրատ-Ռափայէլեանի նախկին սան եմ: Ինչքան տարիները անցնում են և տեսնում եմ արևմտահայ համայնքների փլուզումն ու կրթութեան նուազումը, այնքան աւելի համոզւում եմ նման աւանդութիւն ունեցող վարժարանների վերաբացման անհրաժեշտութեան ու առաքելութեան մէջ:

գ) Նկատի ունենալով, որ Հայաստանում արդէն մեծ թուով արևմտահայեր են ապրում՝ թող Հայաստանը արևմտահայերէնը պաշտօնապէս յայտարարի իբրև պետական երկրորդ լեզու: Սա թոյլ կը տայ, որ արևմտահայերը Արևելահայաստանում շարունակեն իբրև արևմտահայ ապրել:

դ) Հայութիւնը պէտք ունի քանակի թէ՛ Սփիւռքում և թէ՛ Հայաստանում: Ծնունդաբերութիւնը պէտք է աճի: Քանակը որակ է բերում, և քաղաքական, ընկերային ու պաշտպանական գործունէութեան ծիրը ընդլայնում է: Կառավարութիւնները նման նախաձեռնութիւնները հունաւորում են՝ տուրքերի համակարգը համապատասխանօրէն փոխելով: Սփիւռքը կարող է այդ ընթացքը սատարել, օրինակ, այդ նպատակին ծառայող մի հիմնադրամի

կազմութեամբ:

ե) Հասկանալի լինելու մարմաջը վտանգաւոր է արևմտեան Սփիւռքի համար: Որովհետև այստեղ օտար լեզուն միշտ աւելի հասկանալի է, և հայերէնի հետ մրցակցութիւնը իր օգտին է վերջանում: Գերմանիայում, օրինակ, երբ որևէ մի ժողովի կամ նախաձեռնութեան ընթացքին մի անձ հայերէն լաւ չի հասկանում, հաւանական է, որ ամբողջ նիստը հայերէնից փոխուի գերմաներէնի: Սա վատառողջ սովորութիւն է, որը նաև ստրկամտութեան արտուղիներից է: Եթէ ամէն ինչ անընդհատ թարգմանուի, այլևս մենք մեզ հետ միայն թարգմանաբար յարաբերութիւն կունենանք, և սա կործանարար կը լինի: Կրկին. լեզուն նախևառաջ հաղորդակցութեան միջոց չէ: Մարդը ապրում, զգում ու մտածում է լեզուի մէջ: Աւելի անհեթեթն այն է, որ ծնողները իրենց երեխաներին հայերէն լեզուի դասընթացի են ուղարկում, բայց երբ երեխան դասարանից դուրս է գալիս, նոյն ծնողները սկսում են իրենց երեխաների հետ օրինակ՝ գերմաներէն խօսել: Կարելի՞ է այսքան միամիտ լինել, չասելու համար՝ անմիտ: Նման երևոյթները մանր հարցեր չեն, այլ՝ հանգուցային: Ես, օրինակ, մեր համայնքներում երբէք գերմաներէնով չեմ դասախօսում, նոյնիսկ երբ ատենապետները բողոքում են, որ մարդիկ չեն հասկանալու: Դասախօսութիւնը սիրով կ'ամփոփեմ գերմաներէնով, բայց կը դասախօսեմ միայն հայերէնով: Հայերէնը պէտք է «լսելի» դառնայ ու մնայ: Չհասկանալը պէտք է մղի ոչ թէ գերմաներէնի կամ այլ լեզուի կիրառմանը, այլ հայերէնի աւելի լայնածաւալ գործածմանը: Եւ եթէ դասախօսը կամ համայնքի ատենապետը ներկաներին բացատրի, որ հայերէնը էական է ինքնութեան համար, որ նիւթով հետաքրքրուողներն ու լեզուին անծանօթները թող ստանձնեն «չհասկանալու» այդ «զոհաբերութիւնը», որպէսզի հայերէնը չտուժի, ապա վստահ եմ, որ շատերը կ'ըմբռնեն վիճակը և նոյնիսկ կը խթանեն, որ ելոյթը միայն հայերէնով տեղի ունենայ:

Ամփոփելով՝ Սփիւռքը թուլանալով չէ, որ Հայաստանը կը հզօրանայ: Հզօր Հայաստանը պէտք ունի հզօր Սփիւռքի: Այդ պատճառով ժամանակն է, որ Սփիւռքն իր ոյժերը կեդրոնացնի նաև իր զարգացման վրայ, նամանաւանդ արևմտահայ մշակոյթի ամրացման ու ծաւալման համար: Հայութեան հարստութիւնը իր զանազանութիւնն ու երփներանգութիւնն է: Այդ երփներանգութիւնը պէտք է խնամել ու մշակել: «Զարգացումը» ունի երկու նախադրեալ՝ ա. տարբերակում և բ. համարկում: Զարգացած միաւորներ՝ անձից մինչև պետութիւն, տարբերակուած են, զանազան շերտեր ունեն, սակայն միաժամանակ՝ համարկուած: Հայերի մօտ սիրելի դարձած «միութիւնը» խաթարում է տարբերակումը և ջլատում համարկումը: Շատ բնական է, որ տարբերութիւն կայ պոլսահայի, երևանցու, ջուղայեցիի կամ լիբանանահայի միջև: Ինչ լաւ, որ այդ տարբերութիւնները կան. բարբառ, հանաք, վարք ու բարք: Այս բոլորը պէտք է խնամել ու գուրգուրալ: Ինչ լաւ կը լինէր, եթէ Ազգային Ժողովում տարին երկու անգամ, երբ օրակարգը թեթև է, երեսփոխանները իրենց բարբառներով ելոյթ ունենան: Ինչ լաւ կը լինէր, եթէ Հայաստանը ապակեդրոնացած լինէր, և ամէն ինչ քաղաքամայրում թխմուած չը լինէր: Եթէ Գերմանիայում Միւնհէնի կամ Ֆրանկֆուրտի օդակայարանները շատ աւելի որակաւոր են, քան թէ Բեռլինինը, ապա սա Գերմանիոյ ոչ թէ թուլութեան, այլ հզօրութեան նշանն է: «Միութիւն» չի նշանակում «մէկութիւն», այլ՝ «գործակցութիւն»: Իսկ գործակցութիւնը օգտակար է միայն այն ժամանակ, երբ զանազանութիւնը չի տափակեցուում, այլ մշակում է ու խնամում: Սա վերաբերում է Սփիւռքին ու Հայաստանին և սա վերաբերում է արևելահայերէնին ու արևմտահայերէնին: ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաղորդակցութեան այս նոր միջոցները մարդկանց նոյնիսկ անասնացնում են: Աուստրեացի իմաստասէր Գիւնթը Անդըրսը գրում է. «Անմիջականութիւնը բարբարոսութիւն է»: Անասունը իր հակազդեցութիւնների մէջ անմիջական է, որովհետև իր բնազդը անխաթար է, միչդեռ ասունը, այսինքն՝ մարդը, թոյլ եւ անորոշ բնազդ ունի եւ մշակոյթ է ստեղծում՝ զսպելով իր կիրքերը, հունաւորելով իր զգացումներն ու ձգտումները: Անասունը չի կարող ինքն իրեն զսպել եւ հետեւում է իր բնազդին: Ոչ այսպէս մարդը: Օրէնքը, քաղաքավարութիւնը, բարոյականութիւնը կամ հաստատութիւնները մարդկային կեանքը միջնորդուած են դարձնում եւ զսպում մարդու անմիջականութիւնը: «SMS, Facebook, Twitter»-ը եւ այլն ստիպում են մեզ ճիշտ հակառակը՝ անմիջական դառնալ, անմիջապէս պատասխանել, անմիջական ներկայութիւն ցուցաբերել, անմիջապէս կարծիք յայտնել՝ համաձայնել, հակառակել, հաւանել, հայհոյել: Մէկ հպում եւ հակազդեցութիւնը փոխանցում է: Սակայն այս անմիջականութիւնը անասնականացնում է մարդուն եւ մանկամտացնում: Այսօրուայ գոնէ Եւրոպայում տիրող հանրային դիւրագրգռութիւնն ու յարձակողականութիւնը նաեւ այս անմիջականութեան հետեւանքներն են: Եւ ով յապաւումներով ու կրճատումներով է գրում, սկսում է նաեւ կրճատուած մտածել:

Հայ քաղաքական միտքը և հայ հեղափոխական շարժումը 19-րդ դարի վերջին, 20-րդ դարասկզբին

Կարեն Խանլարի Խանլարյան
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պատմական գիտությունների թեկնածու

«Այդ պատմական հունին մէջ տեղ են գտնում եւ ազգային ազատագրական պայքարները, եւ մարդկային ընկերութեան բնաշրջական կամ յեղափոխական առաջընթացը դէպի քաղաքական, ընկերային և տնտեսական իրաւունքների հաւասարութիւնը կենսագործող արդար կարգեր:... Այս զուգահեռ պայքարները մղում են ժողովրդավարական միջոցներով, իսկ ժողովրդավարութեան խափանման պարագայում նաև՝ յեղափոխութեամբ»

ՀՅԴ գործող ծրագիր, 1998 թ.

Ցարական և «շարիաթի» հակամարդկային օրենքներով շաղախված օսմանյան ֆեոդալական համակարգերում Հայկական հարցն ի սկզբանե ունեցել է թե՛ ազգային-քաղաքական, ազատագրական և թե՛ սոցիալ-տնտեսական բնույթ, որի հետևանքով ձևավորված շարժումը հայ քաղաքական մտքի մի շարք տեսաբանների գնահատմամբ՝ համարվում էր ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: Քրիստափոր Միքայելյանն այն անվանել է ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ:

Ստեփան Ջորյանը (Ռոստոմ), ընդարձակելով հեղափոխության ընդհանուր պայմանների հարցը և դրա գոյաբանական իմաստը, նկատել է. «Յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունեն կեանքի տանջանքները, նա միայն կը փոխի իր ՁԵՒԸ՝ յարմարուելով նոր պայմաններին և երբէք՝ իր ԷՈՒԹԻՒՆԸ»[1]:

Կովկասահայ ազգային-քաղաքական իրականության և սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին ի տես՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովը 1904 թ. հետևյալ որոշումով է հրապարակ գալիս. «Դաշնակցութիւնը, ընդունելով հանդերձ, թէ իր հիմնարկութեան նպատակը եղած է և այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը... չի կրնար, սակայն, անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրաւունքների բռնաբարումի ծանր դէպքերը, որոնք վերջերս տեղի են ունեցած և սկսած են յաճախել Թիւրքիայէն դուրս ևս, սկզբունքով ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները...»[2]:

Պատմաբան Գառնիկ Գյուզալյանն ուշագրավ կերպով է հանգրվանավորել տվյալ շարժումը. «Նոյն խանական միջավայրում և նրա դէմ սաղմնաւորուեց ՀԱՅՈՑ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ, սկիզբը՝ որպէս դիուանագիտական շարժում, ապա՝ որպէս քաղաքական միտք և ծրագիր և յետոյ՝ որպէս ազատագրական–յեղափոխական ապստամբութիւն»[3]: Եվ եզրակացնում է, որ Հայոց հարցը քաղաքական հարց է և պետք է լուծվի միայն ազգային-քաղաքական ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ[4]:

Ազգային ազատագրության և սոցիալական արդարության փոխկապակցվածության միջդիցիպլինար սկզբունքը եղել է հայկական շարժման տեսադաշտում: Այս մասին ի թիւս Ռոստոմի, Սիմոն Զավարյանի, Միքայել Վարանդյանի, Եղիշե Թոփչյանի, Արշավիր Շահխաթունիի և Արշակ Ջամալյանի՝ հիմնարար գաղափարներ է առաջադրել նաև Արամ Մանուկյանը 1907 թ. ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովում:

«(1880-ականները) մի շրջան էր, երբ բուրժուաները չէին գիտակցում իրենց դասակարգային շահերը, բացի այդ՝ մեր դատը այդ ժամանակամիջոցում քաղաքական հարց չէր, այլ սոսկ կուլտուրական, իսկ քաղաքական գոյն ստացաւ այն ժամանակ, երբ նրանք տեսան, որ բալկանեան փոքրիկ ժողովուրդները ազատուեցան դիպլոմատիական ճանապարհով: Խրախուսուած այդ օրինակից՝ նրանք ուզեցին էժան ազգասիրութեամբ ձեռք բերել ազատ Հայաստան: Իսկ յետոյ, երբ իրօք անկարելի եղաւ այդքան հեշտութեամբ Հայաստան ազատել, մեր բուրժուաները ոչ միայն հեռացան այդ ասպարէզից, այլև միացան տաճիկ կառավարութեանը՝ յեղափոխութեան դէմ:

[Ասում են], թէ մեր դատը քաղաքական հարց է, յետոյ էլ աւելացնում, որ եթէ տնտեսական ապահովութիւն ունենայինք Տաճկահայաստանում, չէինք ձգտի քաղաքական ազատութեան: Այո՛, հենց այժմ էլ մեր հարցը քաղաքական է, բայց հիմքը՝

Արամ Մանուկյան

տնտեսական: Տաճկահայերին դէպի կռիւ մղում են սովը, քաղցը, տնտեսական պատճառները:

Ասում են, որ Դաշնակցութիւնը կոչուած է Բերլինի դաշնագիրը իրականացնելու: Բայց չպիտի մոռանալ, որ դա մեր նպատակը չէ, այլ միջոցներից մէկը. դա միայն մի էտապ է:

Ցաւով լսեցի այն խօսքերը, որ իբր թէ Բերլինի դաշնագրի իրագործումով իր վախճանին է յանգում մեր հարցը: Ահա այստեղ մենք իրարից խիստ բաժանւում ենք: Ընդհակառակը, գոնէ ինձ համար խիստ պարզ է, որ Բերլինի դաշնագրի իրագործումից յետոյ մեր առաջ կը բացուի նոր գործունէութիւն, զուտ տնտեսական-սոցիալիստական գործունէութիւն, մի շարժում, առանց որի ոչ մի երկիր չէ կարող վերածնուել: Ահա այդ ապագայ շահի տեսակէտից հենց այժմ սկսելու ենք սոցիալիստական–տնտեսական աշխատանքը գէթ պրոպագանդայով: Այո՛, այդ է գլխաւոր»[5]:

Նոյն կոնտեքստում Արամը փաստում էր. «Այստեղ ես այն տպաւորութիւնն եմ ստանում, թէ միայն տաճկահայ դատի շուրջն է եղել, որ հաւաքուել են կովկասահայ բոլոր խաւերը և գործել բացառապէս այդ դատի համար: Բայց դա սխալ է: 1900 թ. այս կողմ կովկասահայերի մէջ սկսում է մի զօրեղ շարժում դաշնակցականների շարքերում, սակայն ոչ դարձեալ յատկապէս տաճկահայ դատի համար:

Վերցնենք Բաքուն: Երբ Քրիստափորը եկաւ Կովկաս՝ ռէակցիայի օրերին կազմալուծուած խմբերը վերականգնելու համար, այդ միջոցին էր, որ Բաքուում գումարուեց մի խումբ երիտասարդների ժողով, որտեղ և սկիզբը դրուեց Դաշնակցութեան գործունէութեան մի նոր շրջանի: Եւ այդ ժողովում էր, որ հարց բարձրացաւ, թէ որտեղից սկսել կազմակերպութեան գործը: Իսկ երբ այնուհետև գործադուլները սկսուեցին, մենք՝ Բաքուի դաշնակցականներս, մասնակցեցինք քաղաքական ցոյցերին, գործադուլներին: 1903 թ. գործադուլին Բաքուում դաշնակցականներս մասնակցութիւն ենք ունեցել... Ինքս անդամ եմ եղել գործադուլային բիւրոյին՝ իբրև Դաշնակցութեան ներկայացուցիչ: Եւ այս բոլորը կատարուել է բնական մղումով: Բանուորները հետզհետէ հաւաքուել են մեր շուրջը այն պատճառով միայն, որ մենք պաշտպանել ենք նրանց դասակարգային շահերը...

Այո՛, մենք խօսել ենք շարունակ տաճկահայի օրհասական տանջանքների մասին, բայց գաւառական մասսաները հետևել են մեզ, որովհետև մենք հիմնել ենք դատարաններ, կռուել ենք վաշխառուների դէմ, նպաստել ենք հողերի արդար բաժանման, բոյկոտ ենք հրատարակել կառավարութեան: Մէկ խօսքով, եթէ մենք կովկասահայ մասսաների սեփական շահերի պաշտպան չհանդիսանայինք, նրանցից հազիւ 1/10-ը կը գար Դաշնակցութեան հետևից, յանուն տաճկահայ դատի միայն:

Այժմ ի՞նչ դրական ազդեցութիւն է ունեցել կովկասահայ շարժումը տաճկահայ շարժման ընթացքի վրայ: 1904 թ. Սասունի վիժումը լքում առաջ բերեց մեր շարքերում, արշաւանքների անյաջող ելքը էլ աւելի սաստկացրեց այդ լքումը: Եւ այս դատի շուրջը երբեմնի եռացող ոգևորութիւնը սառելու էր անպայման, եթէ հրապարակ չգար կովկասահայ շարժումը: Սա էր, որ չէզոքացրեց լքումը: Կովկասահայ շարժման շնորհիւ էր, որ նորից հաւատ և յոյս ներշնչուեց մեզ դէպի տաճկահայ դատը:

Ի՞նչ բացատրութիւն կը տաք այն հանգամանքին, որ երկիր են մտել խոշոր թուով ինտելիգենտ կովկասահայեր: Նրանք կարող էին և լիակատար իրաւունք ունէին մնալ Կովկասում, ուր այդ իսկ միջոցին յեղափոխական գործը եռում էր առնուազն ոչ պակաս, քան Տաճկահայաստանում: Ո՛չ, կովկասեան գործունէութիւնը բնաւ վնասակար չէ եղած տաճկահայ դատին: Կովկասը մարզարան է տաճկահայ շարժման համար: Ահա, թէ այդ երկու դատերը ինչ յարաբերութեան մէջ պիտի լինեն»[6]:

Արևմտյան և Արևելյան Հայաստանների գոյությունը, որպես մեկ իրականություն, չէր տեղավորվում մարքսիստական տեսությունների պրոկրուստյան մահիճներում: Հայ սոցիալ-դեմոկրատների, մասամբ նաև սոցիալ-հեղափոխականների տեսակետից՝ անշուշտ գոյություն ուներ Արևմտյան Հայաստանի աշխատավորության հարց, բայց դա համաձայն «պատմական մատերիալիզմի» հուժկու կաղապարների՝ համարվում էր միանգամայն առանձին հարց առանձին ֆորմացիոնալ համակարգում, որին էլ ոչ մի բանով մաս չէին կազմում Արևելյան Հայաստանի հայ բանվորներն ու գյուղացիները:

Հատկապես 20-րդ դարասկզբին տեսական խճճված բանավեճերում ապամարքսյան սոցիալիզմի գաղափարները կրող ՀՅ Դաշնակցությունը և նույնիսկ ինքն իրեն մարքսիստ համարող սոցիալ-դեմոկրատ

հնչակյան կուսակցությունը խստորեն մեղադրվում էին աշխատավորության «հավատը չարաշահելու» և նրան «դասակարգային պայքարից շեղելու» հարցում:

Այսպես՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» 1905 թ. բողոքում էր. «Դաշնակցութիւնը շշմուած «տաճկահայ դատի» բարեյաջող լուծման իլլիւզիաներով՝ տարիներ շարունակ շահագործում է կովկասահայ մասսայի, առանձնապէս՝ պրոլետարիատի նայիւ հաւատը՝ առանց յեղափոխական ակտիւ քաղաքականութիւն վարելու կովկասահայերի համար, բացի մասնակի տեռորներից»[7]:

Իսկ հայ մարքսիստ Բախշի Իշխանյանը 1908 թ. նման քննադատություն էր հնչեցնում. «Սոցիալական կամ բանուորական քաղաքականութիւնը կազմում է Դաշնակցութեան կուսակցական կեանքի նորագոյն անցեալի ու ներկայի ամենաուշագրաւ գծերից մէկը: Այն Դաշնակցութիւնը, որի համար տարիներ առաջ գոյութիւն չունէր Կովկասում հայ բանուոր ու բանուորական շահ, ևս առաւել՝ բանուորական շարժում ու բանուորական քաղաքականութիւն: Այն Դաշնակցութիւնը, որի համար ռուսահայ աշխատաւոր ժողովուրդ գոյութիւն ունէր միայն այն չափով, որչափով կարևոր էր մի կողմից՝ կոպէկներ գՁլոտել նրա աղքատիկ գրպանից, իսկ միւս կողմից՝ գրգռել, բորբոքել նրա ցեղական ինստինկտները և հայդուկի դերում Տաճկաստան ուղարկել: Այն Դաշնակցութիւնը, որ հայ գիւղացիութեան ու բանուորութեան ազատ ու անխոռով, երջանիկ ու բարեբաստիկ կեանքը որոնում էր ապագայ «ինքնավար Հայաստանի» մեծ ուտոպիայի մէջ: Այդ նոյն Դաշնակցութիւնը հարկադրուած զգաց իրերի նորակերպ դասաւորութիւնից՝ այդ սահմանում ևս ծրագրային տակտիկական շեշտակի նիւանսներ ընդունելու... ոչ այն պատճառով, որ նա փոխել էր իր հասարակական իդեալը և կուսակցական ձգտումների նպատակակէտը, ամենևին ոչ...»[8]:

Բախշի Իշխանյանն այնուհետ բուռն «զարմանք» է հայտնում առ այն, թե ինչու է Կովկասի հայ բանվորը հետևում Դաշնակցությանը... Հայ մարքսիստ տեսաբանն անկարող էր ազգային և սոցիալական հիմնահարցերի միատեղ գոյության հարցը լուծել մարքսիզմի «դասակարգային պայքարի» անձուկ դոգմաներով և ճարահատված հայ բանվորին համարում էր «անգիտակից» և իր «զարմանքը» հիմնավորում այլևայլ պատճառաբանություններով. «...Հայ բանուորութեանը մօտենում են Դաշնակցութիւնը և սոցիալ-դեմոկրատիան՝ նրան պրոֆեսիոնալ հողի վրայ կազմակերպելու համար,— խոստովանում էր Իշխանյանը:— Ինչ տարակոյս և ինչ զարմանք, որ հայ անգիտակից պրոլետարը գերադասում է աւելի շուտ Դաշնակցութեան հետևել, քան սոցիալ-դեմոկրատիային: Ինչո՞ւ: Որովհետև առաջինը ուժեղ ու յաղթական դիրք ունի մեր իրականութեան մէջ, մասսայական պրեստիժ, ռամկամիտ ամբոխին կուրացնող հասարակական հեղինակութիւն և ազդեցութիւն, այսինքն՝ մի շարք պայմաններ, որոնք



Գառնիկ Գյուզալյան

նպաստաւոր են բանուորների ակնթարթային շահերի քաղաքականութեան համար, պայմաններ, որոնց շնորհիւ բանուորների առաջադրած պահանջները կը ստանան հեշտ ու արագ բաւարարութիւն»[9]:

Հակառակ հայ մարքսիստների նշված մոտեցմանը՝ ազգային ազատագրության և սոցիալական արդարության հասկացությունների փոխկապակցվածության սկզբունքը խոր և պատմական արմատներ ուներ հայ հասարակական և քաղաքական մտքի արժեքային համակարգում, որի տեսաբանական կաթսայում դիֆուզացվում էին էմանսիպացիան և սոցիալիզմը՝ որպես մեկ և անքակտելի ընդհանրություն:

Այս կապակցությամբ հետաքրքիր միտք է հայտնել փիլիսոփա Երվանդ Ֆրանգյանը: Նրա համոզմամբ. «Սոցիալիզմը ձգտում է ստեղծել անկախ, ինքնօրէն ազգութիւններ և ապահովել նրանց տե-ղը և իրաւունքը... Սոցիալիստական կարգի, սոցիալիստական կուսակցութիւնների յաղթանակի գրաւականը կայանում է բոլոր ազգութիւնների յեղափոխական դեմոկրատիայի, աշխատաւոր մասսաների կուռ, համերաշխ միացման մէջ»[10]:

Գարեգին Նժդեհն էլ, որին վերջերս հայ ցեղապաշտության շրջանակները փորձում են «հակասոցիալիստ» ներկայացնել, իր յուրահատուկ ոճաբանությամբ և գերպարզեցված կերպով է բանաձևել բուն միտքը. «Սոցիալապէս որքան արդար, այնքան զօրաւոր է հայրենիքը»[11]:

Գարեգին Խաժակ

Դասակարգային պայքարի մարքսիստական ընկալումը, որպես «պատմության միակ շարժիչ ուժ», սկզբից քննադատվել է ՀՅԴ տեսաբանների կողմից: «Վերջապէս ո՞վ է ասում, որ կեղեքումն աշխարհիս վրայ կատարւում է միայն մի ձևով՝ դասակարգային արտայայտութիւնով,—հարց է բարձրացնում տեսաբան Գարեգին Խաժակը,— ամենևին ոչ: Բացի դրանից՝ կայ և մի այլ տեսակի, կարելի է ասել՝ աւելի վատթար կեղեքում, քան մի դասակարագի կեղեքելը միւսին: Կայ ազգային կեղեքում, երբ մի ազգ՝ տիրողը, կեղեքում է մի ուրիշ ազգի՝ տիրուածին: Սակայն ո՞վ է այստեղ կեղեքողը. մի ազգի ամբողջութիւնն է կեղեքում միւս ազգի ամբողջութեանը: Երբէք: Տիրողը՝ կեղեքիչը, հանդիսանում է միշտ տիրող ազգի, ուժեղ ժողովրդի մէջ մի շերտ-բուրժուազիան, ազնուականութիւնն ու բիւրոկրատիան»[12]:

ՀՅԴ գաղափարախոսական հրետանին ստիպված էր, այնուամենայնիվ, բուռն մաքառել երկու ճակատային ռազմագծի վրա, մեկ կողմից՝ մարքսիստական հոսանքների մոլեգնող կոսմոպոլիտիզմի և մյուս կողմից՝ նորաբողբոջ աջակողմյան հոսանքների՝ «միհրանականության» և «հայ նացիոնալ-դեմոկրատիայի» քարոզած ազգային բացառիկության գաղափարների դեմ: Գաղափարախոս Միքայել Վարանդյանը բազմաթիվ տեսական և հրապարակախոսական հոդվածներով փորձել է սահմանազատել ՀՅԴ ազգայնությունը հայությանը խորթ և անհարիր ազգայնականությունից (նացիոնալիզմ) և ազգայնամոլությունից (շովինիզմ): «Դա հայրենասիրութիւն չէ, այլ նրա կեղծումը, խեղաթիւրումը,— գրում է Միքայել Վարանդյանը դեռ 1910 թվականին:— Դա ոչ մի առնչութիւն չունի ճշմարիտ հայրենասիրութեան հետ: Դա նացիոնալիզմ է, ազգամոլութիւն. ամէն տեղ, մեզ մօտ՝ ևս: Մեր իրականութեան մէջ իշխելու, ուրիշներին ստրկացնելու յաւակնութիւնը տեղ չի կարող գտնել հարկաւ, բայց մեզ մօտ ևս շովինիստական հիւանդութիւնը արտայայտւում է յաճախ ազգայնական ունայնատիպ ինքնահաւանութեան մէջ, մեզ մօտ ևս կայ ճչան, աղմկասէր նացիոնալիզմը»[13]:

Ազգայնականությունից (նացիոնալիզմ) և ազգայնամոլությունից (շովինիզմ) բացի՝ Միքայել Վարանդյանը ընդդիմանում էր նաև բացառիկության այլ արտահայտություններին, մասնավորապես՝ ցեղապաշտությանը (ռասիզմ): 1930-ականներին, երբ ամբողջ աշխարհում, հատկապես՝ Եվրոպայում մոլեգնում էին գերմանական նացիզմն ու իտալական ֆաշիզմը, նա դարձյալ ձգտում էր բաժանարար սահմաններ գծել ՀՅԴ ազգայնության գաղափարի և ցեղապաշտության միջև. «Կը խորհիմ,— ասում էր Վարանդյանը 1933 թ.,— թէ հայկական հայրենասիրութիւնը արծարծելու, հայ ազգային նախանձախնդրութիւնը հրահրելու համար բնաւ պէտք չկայ ապաւինելու արևմտեան ցեղապաշտներու գաղափարաբանութեան և անդուլ, անդադրում հոլովելու «ցեղայնութիւնը», «ցեղի արժէքները», «ցեղի ձայնը», «ինքնաճանաչ ցեղը», «ցեղային գիտակցութիւնը», «ցեղօրէն մտածելու և զգալու եղանակը», ցեղը, ցեղը, ցեղը...

Կը մոռնանք, որ ցեղէն վեր, ցեղէն աւելի բարձր բովանդակալի բան մը ունինք՝ հայ ազգը: Հայ ազգը՝ իր հաւաքական գիտակցութեամբ, իր դարաւոր մշակոյթով և իր պեծուի պատմութեամբ: Ամէնքս ստէպ մեքենաբար կը շփոթենք երկու բառերը, բայց «ցեղ» և «ազգ» հոմանիշ չեն և լաւագոյն է բառերը գործածել իրենց տեղը:

Եթէ ցեղապաշտ գաղափարախօսութիւնն այսօր կրնայ վնասել հզօր արևմտեան պետութեան մը բարոյապէս՝ մեկուսացնելով զայն քաղաքակիրթ մարդկութեան մէջ, ապա ևս առաւել ան կրնայ վնասել փոքրիկ, թոյլ ժողովուրդներուն, որոնք իրենց աշխարհագրական աննպաստ միջավայրում գրեթէ ամէն կողմէ շրջապատուած են թշնամիներով»[14]:

ՀՅԴ քաղաքական գործիչ և տեսաբան Վահան Նավասարդյանը Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածներում ընթացող շարժումների հոլովույթը այսպես է ամփոփում. «[ՀՅԴ] անդրանիկ համագումարից մինչև ՆԱԽԱԳԻԾԸ տևող շրջանին՝ 1892-1904 թթ., ընդարձակուել էին Դաշնակցութեան քաղաքական մտքի հորիզոնները, թրքահայութեան փոխարէն նրա մտածողութեան մէջ ցցուել էր ողջ հայութիւնը, իսկ Թրքահայաստանի փոխարէն՝ ամբողջական Հայաստանը: Այն դարձել էր ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ կուսակցութիւն: Նրա համար այլևս ռուսահայ նահանգներն էլ Հայաստանի հողեր էին: Ծաւալւում էր Դաշնակցութիւնը՝ աննկատելիօրէն

դարբնելով հայ հողի և հայ ժողովրդի ամբողջականության գաղափարը»[15]:

ՀՅԴ տեսաբան Հրաչ Տասնապետյանը, հանգամանորեն ուսումնասիրելով հայ և օտար հեղինակների սահմանումները հեղափոխության մասին, 1978 թ. գրում է. «Նոյնքան, որքան որևէ յեղափոխութիւն, հայ յեղափոխութիւնը ունի իր աներեր և անհերքելի պատճառականութիւնը, որ կը կայանայ առարկայական և ենթակայական գործօններու համընթաց զարգացման, փոխազդեցութեան և փոխադարձ ամբողջացման իրողութեան մէջ»[16]: Ըստ այնմ՝ Տասնապետյանը գալիս է այն եզրահանգման, որ հայ հեղափոխությունը դրսևորվել է երեք հիմնական բաղադրիչով ու բովանդակությամբ՝ ազգային ազատագրական կռիվ, քաղաքական պայքար և ընկերային (սոցիալական)-տնտեսական շարժում[17]:

Հայ քաղաքական մտքի ընկալմամբ՝ ազգային ազատագրության և սոցիալական արդարության հասկացությունների փոխկապակցվածության սկզբունքը բխում է այն պարզ տրամաբանությունից, որ ով ձգտում է հասարակական ազատագրության ու արդարության, նա չի կարող չձգտել նաև ազգային ազատագրության և փոխադարձաբար, ով նպատակ է հետապնդում ազգի ազատ ու անկաշկանդ զարգացման, նա չի կարող անտարբեր գտնվել սոցիալական արդարության և համերաշխության հիմնահարցի նկատմամբ:

Եվ դեռ ավելին, ինչպես յուրաքանչյուր ազգային շարժում ունի սոցիալական պատճառներն ու արմատները, այնպես էլ ամեն սոցիալական շարժում իր խորքում անխուսափելիորեն ազդված է ազգային էական առանձնահատկություններից:

Պատահական չէ, որ գրեթե բոլոր իրավազրկված ազգերի ազատագրական շարժումների հեգեմոն կազմակերպությունները հակված են եղել սոցիալական արդարության սկզբունքին և որդեգրել սոցիալիզմի տարատեսակ գաղափարախոսությունները, այսպես՝ լեհական ՊԻՊԻԷս-ը, իռլանդական ԻՌԱ-ն, բասկյան ԷՏԱ-ն, հայկական ՀՅԴ-ն, քրդական ՊՔՔ-ն, իրական ԲՈՒՆԴ-ը, պաղեստինյան ՖԱԹՀ-ը և այլն:

Էտյուդն այսքանով ավարտենք՝ մեջ բերելով «Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության» 1993 թ. ծրագրից հետևյալ դրույթը. «Ազգերի ազատագրական պայքարին մշտապես ուղեկցել է սոցիալական և տնտեսական փրկության գաղափարը»[18]: ■



Վահան Նավասարդյան

Օգտագործուած աղբիւրներ

1. Ռոստոմ, «Առաջին քայլեր», Դիւան ՀՅ Դաշնակցութեան», հատոր Ա., 1934, Բոստոն, էջ 91:
2. Քաղուածքներ ՀՅԴ երրորդ Ընդհ. Ժողովի ատենագրութիւններէ, 1905, Ժընեւ, էջ 26–27:
3. Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան, Բոստոն, 1950, էջ 17:
4. Տես Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան, էջ 60:
5. Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, Բէյրութ, Բ. տպագրութիւն, 2007, էջ 178-179:
6. Տես Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 164-166:
7. Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Հայ Կազմակերպութեան Ծրագրի նախագիծը, կազմակերպութեան սիստեմը եւ կանոնադրութիւնը, Բաքու, 1905, էջ 24:
8. Իշխանեան, Բ., Դաշնակցութիւնը ռուսահայերի մէջ, «Գործ», Թիֆլիս, 1908 մարտի 30, էջ 113-114:
9. Տես Իշխանեան Բ., նշվ. աշխ., էջ 119:
10. Ֆրանգեան Ե., Հասարակագիտական էտիւդներ, Բագու, 1917, էջ 45-46:
11. Գաղափարագրութիւն ՀՅ Դաշնակցութեան, Ա հատոր-գաղափարաբանութիւն, 1997, էջ 243:
12. Խաժակ Գ., Ինչ է ազգութիւնը, Բէյրութ, 1974, էջ 252:
13. Վարանդեան Մ., Վերածնող հայրենիքը եւ մեր դերը, Ժնեւ, 1910:
14. Վարանդեան Մ., Ազգայնականութիւն, թէ միջազգայնականութիւն – բանախօսական ելոյթներ՝ Պարիզում, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1934 մարտի, էջ 22-24:
15. Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք», 1924 փետրուար, էջ 83:
16. Տասնապետեան, Հ., Յեղափոխութիւն, Բէյրութ, 1978, էջ 127:
17. Տես Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 129-142:
18. Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 1993:

Վերընթերցենք Համաստեղին

Համաստեղն ապրիլի 24-ի մասին

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Հայ ժողովուրդը արդար քրտինք է ու չարքաշ աշխատանք:
Թուրքը միշտ ալ հոմանիշ եղած է թալանի, ոճրագործութեան:

Համաստեղ

1955-ին լրացավ Մեծ եղեռնի 40-րդ տարելիցը: Համաստեղը (Կելենյան, 1895-1966) «Մենք չենք մոռնար» հոդվածով[1] անդրադարձել է «մարդկային պատմության այս մեծագույն ողբերգության» տարելիցին:

Հոդվածի սկիզբը հիշեցնում է աստվաշնչյան դրվագը, երբ Երուսաղեմ մտած Հիսուսն ի պատասխան իր աշակերտներին լռեցնելու կոչերին՝ ասաց, որ նրանց լռելու դեպքում քարերը կխոսեն…

Գրողը համոզված է՝ անգամ շատ ներողամիտ հայ ժողովուրդը չի կարող լռել, մոռանալ ապրիլի 24-ը: «Եթէ մենք մոռնանք, Հայաստանի քարերը պիտի աղաղակեն, ու անյիշատակ կորսուած գերեզմաններուն հողերը վեր-վեր պիտի նետուին: Եթէ մենք մոռնանք, անապատներու մէջ ճերմկցած մեր նահատակներու ոսկորները իրենց խոռվքներուն մէջ մըրրիկներ պիտի ըլլան: Ոսկորները բարի, հաւատաւոր, աշխատաւոր ժողովուրդի մը, որ շատ բան ներեց և չի կրնար ներել Ապրիլի 24-ը… Եթէ մենք մոռնանք, արդարութիւնը պիտի աղաղակէ: Մենք հաւատացինք ու կը հաւատանք արդարութեան: Կը հաւատանք, թէ արարչագործութեան մէջ Աստուծոյ շունչը կայ: Գուցէ այդ եղած է մեր թերութիւնը և կամ տկարութիւնը: Մենք կը հաւատանք այդ արդարութեան, եթէ նոյնիսկ տկարութիւն ըլլայ: Արդարութիւն և հայ ժողովուրդ երկու դժբախտ ճակատագրեր են, որոնք պիտի յաղթանակեն օր մը» (էջ 87),— սա Համաստեղի համոզումն է:

Գրողը Հայաստան երկիրը դիտարկում է որպես աստվածային բացառիկ շնորհի՝ Արարման դաշտ. «Շինեցինք եկեղեցիներ, վանքեր, ճամբաներ, կամուրջներ, շէն քաղաքներ: Լիովին ըմբռնեցինք աշխատանքի գեղեցկութիւնը: «Հորովելներով ու ծխան ծուխերով դրացնացանք Աստուծոյ հետ» (էջ 87): Ահա ավարառու թուրքի նկարագիրը. «Որտեղէն որ անցան, իրենց ետև ձգեցին աւերակներ ու դիակներ: Խոտն անգամ չի բուսնիր այն տեղերէն, ուրկէ թուրքը անցած է» (էջ 88):

Համաստեղն այս հոդվածում մեկ առ մեկ թվարկում է հանրային կյանքի այն բոլոր ոլորտները, որտեղ հայությունն արարում և թուրք զանգվածներին քաղաքակրթում էր՝ հնարավորության սահմաններում մոտեցնելով եվրոպական հանրությանը: Առաջնահերթը մշակույթն էր, այնինչ թուրքն ընդամենը յուրացրել է գրված տարածքների օրինական տերերի ստեղծածը, որը ներկայացնում է որպես իրենը. «Թուրքը, ինչպէս յափշտակեց հայոց ամբարները, նոյնպէս յափշտակեց ինչ որ մշակոյթ էր՝ ըլլայ հայկական, արաբական կամ պարսկական: Ան ուզեց իւրացնել հպատակ ազգերու արուեստը, հարսնիքի գացող մէկին պէս, որ իր հագուստները փոխ կ՚առնէ ուրիշէ մը և կամ կը գրաւէ» (էջ 89):

«Մենք զոհեր տուինք յանուն արդարութեան և իրաւունքի: Այդպէս վայել է նկարագրով բարձր ժողովուրդի մը համար: Ու ահա Ապրիլ 24ը. մէկ միլիոն զոհ՝ խեղդելու համար մեր ձայնը, խեղդելու համար արդարութիւնը: Չէ՛, արդարութիւնը չի խեղդուիր. ան արևի լոյսին պէս է: Մենք այդպէս կը հաւատանք» (էջ 89),— գրում է Համաստեղը և մեկնաբանում, որ հայությունը չի հավատում թուրքի քաղաքակրթվելու մասին հայտարարություններին:

«Շատակեր Հասանի» պատկերով Համաստեղը ներկայացնում է թուրքական պետական կառույցի համար օրենքի ուժ ստացած ավերն ու ավարը, երբ հատուկ հրահանգով պարբերաբար թալանում էին հայությանը թուրք զանգվածներին կերակրելու և նրանց ցեղային նկարագիրը անխաթար պահելու համար:

Հիշատակենք Համաստեղի մտերիմներից Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) վկայությունը «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը»[2] գրքից: «Խաղաղասէր ու բարի մարդ է հայրս. յեղափոխական եղած էր երիտասարդութեան օրերուն» (էջ 154), — գրում է Արամ Հայկազը և հավելում՝ հայրը դեպքեր է պատմում 1895-ի կոտորածներից ու եզրակացնում. «… այն ատեն 8-10 զոհ միայն տուինք, քանի մը օր գործի և առևտուրի չկրցանք նայիլ. խուժանն ու զօրքը մեր թաղերէն հեռու պահեցինք, և անոնք գացին, իրենց անասնական վրէժը լուծեցին խեղճ Թամզարայէն…

Առաջները քսանևչորս ժամէն, շատ-շատ երկու օրէն «դադրեցուցէք»-ի հրամանը կու գար, և հայ ժողովուրդը դուրս կու գար՝ արևուն տակ իր վէրքերը լզելու: Այս անգամ խնդիրը տարբեր ձև առաւ. այս անգամ պիտի կրնան մեր վզին պլլել պետութեան դէմ ապստամբած ըլլալու մեղադրանքը... Առաջ անիծուած սուլթանին ու անօթի թուրք ժողովուրդին համար հայ ժողովուրդը պտղատու ծառ էր. կառավարութիւնն ու իր շուները կը կողոպտէին հայութիւնը, կը կտրէին ծառին ճիւղն ու պճեղը, բայց բունին կացին չէին զարներ: Այս անգամ հարցը տարբեր ըլլալ կը թուի... այս անգամ կացինը մեր արմատին ուղղուած է...» (էջ 189):

Պարբերական թալանի ու կյանքի անապահովության պատկերին Համաստեղը զուգադրում է ոչ միայն մեկ ու կես միլիոն հայության կոտորածը, այլ նաև այն ցավոտ ճշմարտությունը, որ արյունոտ յաթաղանը կտրել է սերունդների կապը, աշխարհասփյուռ հայերին դատապարտել Արարման դաշտից դուրս գոյատևելու տաժանքին:

«Ապրիլ 24ը միայն թուրքը կրնար սարքել:

Մենք չենք կրնար մոռնալ» (էջ 90),— կարդում ես այս տողերն ու Համաստեղի պես չես հավատում թուրքի ավարառու տեսակի բարեփոխման հեռանկարին:

«Մենք սրտանց կ'ուզենք, որ թուրքը դադրի ինքզինք խաբելէ և ընդունակ ըլլայ իսկական քաղաքակրթութեան՝ ըմբռնելու համար մարդկայինը, Արդարութիւնն ու Իրաւունքը,—հեգնո՞ւմ, թե՞ իսկապես հավատում է գրողը:— Ան կը դառնայ քաղաքակրթուած ազգ այն ատեն, երբ մանաւանդ ըմբռնէ հայ ժողովուրդին իրաւունքը:

Այդ իրաւունքին համար մենք շատ զոհեր տուած ենք:

Տուած ենք Ապրիլ 24ը, որ չպիտի մոռնան նաև մեր գալիք սերունդները» (էջ 91):

«Էջմիածին» (Էջմիածին) հանդեսի 1965 թ. Բ-Դ համարը նվիրված է Մեծ եղեռնի 50-րդ տարելիցին: Ամսագրի 40-42-րդ էջերում տպագրված է Համաստեղի «Հավատք քո կեցուսցեն զքեզ» հոդվածը[3], 122-124-րդ էջերում՝ Արամ Հայկազի «Մայրս փրկեց զիս Եփրատե» հուշպատմվածքը[4]:



Աստվածաշնչի հանրահայտ ճշմարտության տողով վերնագրված այս հոդվածում Համաստեղը քննում է հայի հավատի արմատները և արձանագրում. «Զարմանալի զուգորդություն մը եղած է հավատքը երկնքին և հավատքը Հայաստանին միջև: Հայաստանը նոյնպես եղած է նպատակ՝ երկնքի կապույտին չափ անսահման» (էջ 170): Քրիստոնեության հիմքի վրա բարձրացավ հայ մշակույթի շենքը, իսկ «գրերու գյուտով հայացան» ոչ միայն աստվածաշնչյան սրբերը, այլև բազմաթիվ օտար տոհմեր, որոնցից սերվեցին ազգային նոր հերոսներ: Ս. Սահակ Պարթևի, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Վարդան Մամիկոնյանի համար «երկնքի կապույտին վրա Հայաստանի քարտեզի գծերը կային լուսաշող» (էջ 171):

Եթե «ազգերը հավաքական մաքառումներ են ու պաշտպանություն» (էջ 172), հայ ժողովուրդն ունի ամենազորեղ զենքը՝ մշակույթը, որի հիմքը ազգային մեր մեծ երազն է՝ Հայկ դյուցազնից, Մաշտոցի տեսիլքից, Դավթի դյուցազնավեպից սկսած մինչև մերօրյա նվիրյալներն ու նահատակները: Մշակույթը ուժ է, ինքնատիպ բերդ, որի մեջ մեր ժողովուրդը «գտավ իր պաշտպանությունն ու ինքզինք ձգեց հավիտենականության մեջ:

Այո՛, հայ ժողովուրդը հավիտենական է: Հզոր ազգերու հզոր բանակները ժամանակավոր հաղթանակներ տարած են միայն, իրենց բանակներուն վրայ կոթնող բարբարոս ազգերը անհետացեր են նախապատմական շրջանի մամութներուն նման, որովհետև



Արամ Հայկազ

բանակներուն և հին բերդերուն տեղ կա մշակույթին տիրապետությունը» (էջ 172):

Թունոտ, բայց ճշմարտացի է թուրքի նկարագիրը. բարոյական «հիմքի մը» վրա կառուցված Ղուրանը «իր բարբարոս բնազդներուն հարմարցուց: Ձարդեց Ալլահին անունով: Ալլահին անունով քրիստոնյա տաճարներուն առջև ձիեր կապեց» (էջ 172): Այնինչ հայությունը, հավատարիմ իր ազգային նկարագրին ու նախնիներից ժառանգած Արարման ոգուն, «կներմուծեր Թուրքիո մեջ ինչ որ քաղաքակրթություն և կամ եվրոպական» (էջ 172):

1915 թ. ողբերգության դժոխքով անցնելուց հետո էլ հայը գտավ իր ազգային գոյությունն ապահովելու միջոցը՝ հավաքական կամքը, «որ ստեղծեց մեր Հայաստանը՝ իր կարելի սահմաններով: Գիտակցական կյանքն է, որ կը մղե գիտակցական մահվան: Գիտակցական եղած են մանավանդ մեր ազգային կեանքն ու նպատակը» (էջ 174):

«Մենք կանք ու պիտի ապրենք» (էջ 174),— գրում է Համաստեղը:

Հայն ապրելու է ոչ թե վրեժխնդրության, այլ մարդասիրության շնորհիվ. «Հայը ընդունակ է թուրք մանուկին ու անօգնական ընտանիքը ազատել հրդեհեն իր կեանքը վտանգելու գնով, որովհետև հայուն մէջ մարդկայինը եղած է սաղմը իր ազգային գոյության: Հայուն կիրքը ուժ է ու հավատք: Այդ ուժով է, որ օր մը պիտի տիրանա իր երազին» (էջ 174): Գրողը համոզված է՝ հայ ժողովուրդը իր նահատակների հետ տեր կդառնա իր երկրին, հողին: Դրա համար ենք կռվել Ավարայրի դաշտում, դրա համար ենք արարել Անիի հազար ու մի եկեղեցիները, դրա համար են զենք վերցրել ֆիդայիները: «Անոնք դյուցազնական շրջան մը ստեղծեցին» (էջ 173),— գրում է Համաստեղը և ազգային-ազատագրական պայքարի հերոսական շրջանը «Սպիտակ ձիավորը»[5] դյուցազնավեպում ներկայացնում գյուղի լայն համայնապատկերի վրա:

«Հավիտենական հայ ժողովուրդին համար դարերը տարիներու նման արագ կանցնին:

Պիտի գա այն օրը, երբ Հայկ դյուցազնը պիտի շեփորե Արարատեն, և այն շեփորի հզոր ձայնեն մեր ապրիլյան եղեռնի նահատակները բոլորը մեկ պիտի հավաքեն իրենց ոսկորները անապատներեն, բանակներու պես ոտքի պիտի կանգնին ապրողներուն հետ մեր հայրենի երկրի վրա, որուն ամեն մեկ թիզ հողին մէջ սիրտ մը կբաբախե:

Հայ ժողովուրդին հավատքը կյանք է և ապրելու հզոր տենչանք» (էջ 174),— այսպես է ավարտում հոդվածը Համաստեղը:

Եկեք փարվենք մեր սրբասուրբ հավատին, վերագտնենք մարդկային ու ազգային մեր նկարագիրը, որ կարողանանք լուծել համազգային խնդիրները, որոնցից շատերի արմատը մեր կողքին ապրող ավարառու ցեղերին չճանաչելն է: ■

Հղումներ

1. Հոդվածը տպագրվել է «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթի 1955 թ. ապրիլի 23-ի համարում (տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Բ հատոր, Երևան, 2005, էջ 87-91): Հոդվածից մեջբերումները նշվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ:

2. Վեպը լույս է տեսել Նյու Յորքում, 1957 թ.: Վեպից հաջորդ մեջբերումները նշվում են շարադրանքում:

3. Հոդվածը տպագրվել է «Էջմիածին» հանդեսի 1965 թ. Բ-Դ համարում (տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Բ հատոր, էջ 170-174): Հոդվածից մեջբերումները նշվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ:

4. Սա հատված է Արամ Հայկազի «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» գրքից, որ լույս է տեսել Անթիլիասում, 1972 թ.: 2022 թ. վեպը վերահրատարակել եմ Երևանում:

5. Երկհատոր այս վեպը լույս է տեսել Լոս Անջելեսում, 1952 թ.:

Քեռի Թադո (փեթարցի Թադո): Յեղափոխութեան հաւատարիմն ու անձնուրաց մարտիկը

ԱԻՕ ԳԱԹՐՃԵԱՆ
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

Ազգային ազատագրական պայքարի էջերուն մէջ բազմաթիւ են խիզախագոյն ֆետայիներն ու հերոսները, որոնք յայտնուեցան 19-րդ դարու վերջին և 20-րդ դարու առաջին կէսին՝ հայ ժողովուրդի ազատագրական պայքարին իբրև արդիւնք: Մեր յեղափոխական կռիւի ազատութեան ձայնը գոռաց անոնց զէնքերու փողերէն: Այդ պայքարին մէջ անոնք էապէս խառնուեցան հայրենի հողին, մարմնացան անոր լեռներով և վերածուեցան մեր յեղափոխութեան ապառաժին՝ մեր ժայռերուն պէս: Անոնցմէ շատերն իրենց պաշտած հայրենիքէն հեռու ունեցան կարօտով լեցուն սրտաճմլիկ օրեր:

Ասոնց կարգին էր հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, դաշնակցական անձնուէր ֆետայի քեռի Թադոն, որ կանուխէն մասնակից դարձած է հայ յեղափոխական խմորումներուն՝ ինքնապաշտպանական կռիւներուն և տարիներ շարունակ զէնքը ձեռքին ամբողջութեամբ նուիրուած էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան ֆետայական գործունէութեան:

Անուն մը, որ շատ քիչերու ծանօթ է: Քեռի Թադոյի անունին առաջին անգամ ծանօթացայ, երբ պատանի տարիքիս անդամ էի Սուրիոյ պատանեկան միութեան շարքերուն: Հալէպի «Քեռի» (Արշակ Գաւաֆեան) մասնաճիւղի հինգ կարգերէն մէկը, որ մեր խումբն էր, անուանուեցաւ «Քեռի Թադո»:

Այդ օրէն ի վեր հետաքրքրութիւնս մեծ եղաւ, քանի որ այդ մասին բաւարար տեղեկութիւն ու գիտելիքներ չէր փոխանցուած մեզի և այս մէկը բաւական մտահոգած էր զիս:

Ուստի տարիներ շարունակ քեռի Թադոյի մասին զանազան արխիւներու մէջ պրպտումներ կատարած եմ, բազմաթիւ ընկերներու և իմ անմիջական պարագաներուս հարցուցած էի, որպէսզի յստակ տեղեկութիւններ հաւաքեմ անոր անձին շուրջ: Կենսագիրները շատ ժլատ գտնուած են անոր անձն ու գործը ըստ արժանւոյն յիշատակելու և ներկայացնելու իմաստով:

Այս մեկնակէտէն ելլելով և պատմական կարևորութեան համար մեր ուսումնասիրութեան իբրև արդիւնք՝ այստեղ լուսաբձակի տակ կ՚առնենք քեռի Թադոյի բեղուն, պատուաբեր ու սրտառուչ կենսագրականը:

Աւազանի անունով Թադէոս Սարգիս Պետրոսեան ծնած է Տարօն աշխարհի արծուեբոյներէն Փեթար գիւղը (երբեմն սխալմամբ նշուած է Բերդակ) 1874-ին:

Փեթար գիւղը կը գտնուի Արևմտեան Հայաստանի Պիթլիսի նահանգի Մշոյ գաւառին մէջ՝ Մուշ քաղաքէն 7-8 քմ հարաւ՝ Սիմ (Կուրտիկ) լերան հիւսիսային լանջին: Գիւղի հարաւարևմտեան կողմը կը գտնուէր Ս. Կարապետ եկեղեցին: 1880 թուականին ունեցած է 65 տուն՝ 1200 բնակիչով, 1890 թուականին՝ 65 տուն, իսկ 1909 թուականին՝ 30 տուն հայ բնակիչ:

Աւօ Գաթրճեանը Թադոյի շիրմաքարի մոտ

Փեթար տուած է նշանաւոր հերոսներ, ինչպէս՝ Մանուկը (ծանօթ՝ Փեթարայ կամ Սասունցի Մանուկ անունով), Թադոյի քեռայրը՝ Ախոն, Իսրօ Կորիւնը, Սանտրոն, Կիրակոսը և ուրիշներ:

Թադոյի հայրը՝ Սարգիս, մայրը՝ Մանուշակ, ունեցած են չորս մանչ և մէկ աղջիկ զաւակներ՝ Առաքել, Պետրոս, Թադէոս (Թադո), Արամ և Շողիկ:

Թադոյի հայրը գիւղի հարուստներէն կը համարուէր. 1000 գլուխ ոչխարի տէր էր: Սարգիս շփման մէջ կը մտնէ բոլոր հայ ֆետայիներու հետ, որոնք կու գային ու կ՚անցնէին Փեթար գիւղէն: Սարգիս նաև որոշ գործակցութիւն կ՚ունենայ հայ ֆետայիներու հետ: Պատանի Թադո ուշի ուշով կը հետևի հայ ֆետայիներուն, ու իր մէջ կ՚արթնայ յեղափոխական ոգին: Թադոյի հայրը կը խնդրէր, որ Թադոն տան մէջ մնայ, սակայն ինք լեռները կը բարձրանար: Ինչպէս տուն մնար, երբ հազարաւոր հայեր կը ջարդուէին:

Շրջան մը ետք Հրայր (Արմենակ Ղազարեան), որպէս Մուրատ Պոյաճեանի և Միհրան Տամատեանի գործակից, կը շրջի Սասնոյ և Տարօնի գիւղերը՝ կազմակերպչական աշխատանքներ տանելու: Հրայր կ՚այցելէ նաև Փեթար գիւղը, ուր իր խումբին առաջին անդամը կ՚ըլլայ քեռի Թադոն: 1893-ի աշնան Սասնոյ գիւղերը հանգիստ շրջան մը կ՚անցնէին: Սակայն Հրայր կը գուշակէ գալիք վտանգը: Թուրքը յարմար առիթի կը սպասէր յարձակելու սասունցիներու վրայ, բայց սասունցին պատրաստ չէր կռուելու: Ֆետայիները բաւարար զէնք և ռազմամթերք չունէին: 1894-ի սկիզբները Հրայր իշխաններու խորհուրդով կ՚անցնի Խնուս, անկէ՝ Կովկաս՝ զէնք և ռազմամթերք բերելու



Քեռի Թադոս

Սասունի կռուողներուն: Հրայրի մեկնումէն ետք իր փոխարէն կը ղեկավարէ Մուրատ Պոյաճեանը: Այդ օրերուն թրքական պետութիւնը ստուար բանակներով կը քալէ Սասունի վրայ: Սասնոյ իշխանները՝ Մսէ Գրքոյի գլխաւորութեամբ, մօտ հազար հոգի կ՚անցնին Կելիէկիւզան գիւղը դիմադրելու համար:

Առաջին անգամ ըլլալով քեռի Թադոն իր հօրը կողքին՝ այս օրհասական ճակատագրական կռիւին կը մասնակցի, ուր կը նահատակուի Սասնոյ իշխան Մսէ Գրքոն: Թուրք և քիւրտ աշիրէթները, երբ կ՚իմանան Մսէ Գրքոյի նահատակութիւնը, առիթէն օգտուելով՝ կ՚ուզեն սպաննել և թալանել հայ ժողովուրդը: Շուտով Մսէ Գրքոյի տեղը կ՚անցնի Իշխան Պետոն, որ նոյնքան կտրիճ հերոս մըն էր: Թադոն կը մնայ Իշխան Պետոյի խումբին մէջ մինչև Հրայրի գալը Սասուն:

1894-ի վերջերը Հրայր կը վերադառնայ Կովկասէն այս անգամ իբրև Հ.Յ.Դաշնակցութեան ներկայացուցիչ ու Տարօնի Սասնոյ շրջաններուն մէջ հիմը կը դնէ Դաշնակցութեան: Թադոն շուտով կ՚արձանագրուի Հ.Յ.Դաշնակցութեան շարքերը:

Փեթար գիւղի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան կազմաւորման մասին քեռի Թադոն հետևեալ վկայութիւնը կը փոխանցէ. «Փեթար գիւղի կուսակցութեան ներկայացուցիչն էր Մելքոն Արոյեան. ան կրցաւ գիւղի երիտասարդները իր շուրջ համախմբել և կուսակցական դաստիարակութիւն տալ. ես մնացի հոն մինչև 1902, երբ Մանուկ կազմեց իր խումբը»:

«Օր մը լեռն էի, երբ թուրք մը խենչալով վրաս յարձակեցաւ, ես ալ ինչ ընեմ, չգմագլիով զարկի զինք. թուրքի արիւն տեսայ և անկէ շիտակ Անդրանիկին գացի, որ զիս իր բանակին մէջ առնէ: Այսպիսով՝ Անդրանիկին բանակին մէջ մտայ»,— կ՚ըսէ Թադոն:

1904-ին վրայ կը հասնի Սասնոյ մեծ ապստամբութիւնը: Ապրիլ ամսուան սկիզբը հայկական և քրտական երկու գիւղերու միջև ծագած մասնակի վէճ-կռիւ մը պատրուակելով՝ 10 հազարէ աւելի թուրք կանոնաւոր զօրք և 7 հազար զինեալ քիւրտեր կ՚անցնին ընդհանուր յարձակողականի, միանգամընդմիշտ ընկճելու համար հերոսութեան այդ բոյնը՝ Սասունը: 200 ֆետայիներ, իրենց հետ ունենալով ժողովրդային խաւերէ 800 զինեալներ, պատրաստ էին ճակատումի: Դիրքերը բաժնուած էին ֆետայիներուն միջև՝ Հրայր Դժոխքի, Անդրանիկի և Գէորգ Չաուշի ընդհանուր հրամանատարութեամբ: Թրքական բանակը 3 ուղղութեամբ կը յառաջանայ դէպի Քռփ, կեդրոնը՝ Կուրտիկի վրայ Շենիկ և Սեմալ, իսկ երրորդը՝ Ղըզըլաղաճի վրայով դէպի Ալիանք: Սասնոյ կռիւներուն մէջ կը տեսնենք Սասունցի Մանուկը՝ իր խումբով. այս կռիւներուն Թադոն ցոյց տուաւ իր քաջագործութիւնները:

Ամբողջ 3 շաբաթ կռիւները կը մղուին շատ բուռն: Թրքական զօրքերը որքան կը խստացնեն իրենց պաշարման օղակը, նոյնքան հերոսական ու հարուածող կը դառնայ հայ յեղափոխականներուն դիմադրութիւնը: Իսկ հոն, ուր ժողովուրդը կոտորածէ փրկելու համար ֆետայիները կռիւով զանոնք կը փոխադրեն ուրիշ գիւղ մը, պարպուած գիւղերը կ՚այրուին նոյն ինքն գիւղացիներուն ձեռքով, որպէսզի թշնամին չտիրանայ կռիւի ապահով դիրքերուն: Կենաց-մահու այդ բուռն կռիւներուն մէջ է, որ կը նահատակուի Հրայր Դժոխք, 26 ապրիլին, Կելիէկուզանի կռիւին, որմէ ետք ամբողջ երեք օր թրքական թընդանօթներու շարունակական ռմբակոծումներուն ենթարկուելէ ետք Հ.Յ.Դաշնակցութիւնը կ՚որոշէ Սեբաստացի Մուրատի ղեկավարութեամբ և 117 հոգինոց զինեալ խումբի մը առաջնորդութեամբ մէկ կողմէ՝ Սասնոյ ժողովուրդը ապահով շրջաններ փոխադրել, իսկ միւս կողմէ՝ ֆետայական ցրուած խումբերով և լեռներու մէջ պահուտած գիւղացիներով ապստամբութիւնը շարունակել: Հերոսական այդ կռիւներուն կը զոհուի նաև Վահան Մանուէլեան (Տողրամաճեան), 16 մայիս 1904-ին:

Մահու-կենաց կռիւին մէջ մահէն չխուսափող հայ ֆետայիներու մարտական կորովն ու հմտութիւնները անսահման էին: Այդ ֆետայիներու շարքին նաև ցայտուն էր քեռի Թադոյի՝ իբրև քաջ ֆետայիի, խիզախ մարտիկի և յանդուգն ռազմիկի, դիւցազնական հերոսութիւնը:

Այս ապստամբութենէն վերջ ֆետայիները կը մեկնին Աղթամար, Գէորգ Չաուշ կը վերադառնայ կրկին Սասուն: Սասունցի Մանուկի խումբը կը միանայ Գէորգ Չաուշի խումբին մինչև Գէորգի մահը. անկէ ետք Մանուկ և Ախօ կը գործեն Կուրտիկի (Սասուն) լեռնաշղթայի երկու կողմերը, Մշոյ դաշտի և Սասունի շրջանները:

Սահմանադրութեան օրերուն քեռի Թադոն կ՚անցնի Պիթլիս, ժամանակ մը ետք կը վերադառնայ իր ծննդավայրը ու կը միանայ Մանուկի խումբին:

1914-ին, Մեծ եղեռնի նախօրեակին, Ռուբէն Տէր-

Պետրոս, Ղազար, Մորուք Կարո

Մինասեան և Գառնու Մկրտիչ կ'անցնին Փեթար՝ որպէս պատասխանատու կազմակերպիչներ: Ռուբէնի որոշումով տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողով մը, ուր Ռուբէն կը խօսի գալիք վտանգի մասին: Այդ ժողովին կը մասնակցին Իսրօ Կորիւնը, Փեթարայ Կիրակոսը, Ախոն, Սասունցի Մանուկը (այն ժամանակ Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Փեթար գիւղի), քեռի Թադոն և ուրիշներ: Ժողովը իր որոշումները տալէ ետք անմիջապէս կ'անցնի կազմակերպչական աշխատանքներու:

Սասունցի Մանուկն իր հետ ունենալով քեռի Թադոն, Իսրօ Կորիւնը, Փեթարայ Կիրակոսը և Ախոն՝ կ'անցնի Քարցուր (Ալաշկերտի գաւառ), Խորոնք, Պլէր, Գոմէր, Սընզնուտ, Ղըզըլաղաճ, Շէյխլան, Քիւրտ Մէյտան (Մուրատ գետը անցնելով), Աւզախբիւր, Ջիարաթ, Մեղտին, Ս. Կարապետ և Վարդոյի շրջանները կազմակերպելու:

Իսկ Ռուբէն իր խումբով կ'անցնի Ցրօնք, Ալիճան, Սուլուխ և Ջրիկ, ուր կը հանդիպի Իսրօ Կորիւնին ու միասին կ'անցնին ուրիշ շրջաններ կազմակերպելու համար:

1915-ի յունուարէն սկսեալ՝ Սասունի և Տարօնի ֆետայիները սկսած էին ապստամբութեան դիրք բռնել: Մարտ և ապրիլ ամիսներուն թրքական և քրտական խուժանները պաշարած էին Սասունը ու սկսած էին կռիւները:

Սասնոյ բարձունքներուն վրայ ժողովուրդը հինգ ամիսէ աւելի կեանքի և մահու արիւնալի գոյամարտով ոտքի կանգնած՝ իր հերոսական նահատակութեամբ իր գոյութիւնը կը պահէր և կը սպասէր օգնութեան, որ բաւական ուշացած էր: Այնուհետև գիւղերը հրոյ ճարակ կ'ըլլային, իսկ պաշարը կը սպառէր: Սակայն ֆետայական փոքր խումբեր տակաւին կը մարտնչէին հերոսաբար Ս. Կարապետի անտառներու և զանազան լեռնամասերու մէջ մինչև արեան վերջին կաթիլ:

Ափսոս, Սասունը պարտուեցաւ: Այս մարտերու ընթացքին արձանագրուեցան թանկագին նահատակներ: Եղան նաև վերապրողներ, որոնց կարգին էին սասունցի Մանուկը, քեռի Թադոն, Ախոն, Տիգրան Գանարեանը, սպայ Միսաքը և ուրիշներ: Մազապուրծ ազատողներէն ոմանք Ռուբէնի և Կոմսի (Վահան Փափազեան) հետ անցան Մանազկերտ:

Քեռի Թադոն կարճ ժամանակ մը մնալէ ետք Մանուկի հետ ձիաւոր խումբով կը վերադառնայ Ծովասարի շրջանը՝ այնտեղ մնացած հայ բեկորները ազատելու, որոնք պաշտպանուած էին Շեկոյի տան քիւրտերու կողմէ:

1914-1917-ի ժամանակահատուածին մէջ քեռի Թադոն մասնակցած է Պիթլիսի, Մուշի և բազմաթիւ այլ գիւղերու և քաղաքներուն մէջ տեղի ունեցած մարտերուն՝ քիւրտերուն, թուրքերուն և թաթարներուն դէմ:

1917-ին քեռի Թադոն կ'անցնի Պուլանըխի կողմերը, ապա՝ Քոսուր և Մուշ: Որմէ ետք ան կը միանայ Սասունի գունդին, որ Մշոյ դաշտին մէջ կը գործէր Մանուկի, Չոլոյի (Յարութիւն Աբրահամեան), Մօրուք Կարոյի (Կարապետ Աւոյեան) և Ղազարի ղեկավարութեամբ:

Այնուհետև Սասունի և Տարօնի հայ բեկորները գինուած՝ Մասիսի բարձունքներէն վար կ'իջնեն դէպի Արարատեան դաշտը:

Քեռի Թադոն, միանալով զօրավար Սեպուհի խումբին, իր մասնակցութիւնը կը բերէ Սարտարապատի պատմական մեծ ճակատամարտին:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան օրերուն քեռի Թադոն Փեթարայ Իսրոյի, Մանուկի, Մուշեղի, Ախոյի, Չոլոյի, ու միւս ընկերներուն հետ Թալինէն սկսած մինչև Միլլի ձոր, Աղուտ-Վաղուտ ու Զանգեզուր, Հայաստանը կը մաքրեն թաթար ու քիւրտ թշնամիներէն ու անոնց գիւղերուն մէջ կը տեղաւորեն Տարօնի գաղթականները:

Պոլշևիկներու Հայաստան մուտքով և Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատուելէ ետք լուծուած էին նախկինէն մնացած բոլոր զօրամասերը՝ բացի Տարօնի զօրամասէն, որ զօրավար Սմբատի հրամանատարութեան տակ էր: Զօրավարի հիւանդութեան պատճառով անոր պաշտօնը կը ստանձնէ Մուրատը և «կարմիր» անունը ստանալով՝ կը մեկնի Արագած և այլ գիւղեր:

Հայաստան մտնելու առաջին օրէն Յեղկոմը կ'անցնի գործնական աշխատանքի: Անմիջապէս թշնամական դիրք կը բռնէ երկրի ոչ պոլշևիկ տարրին հանդէպ՝ զայն նկատելով հակայեղափոխական: Շուտով կը կազմուի Չեկան՝ գաղտնի ոստիկանութիւնը և կը լծուի բռնակալ աշխատանքի: Ձերբակալութիւններ կը կատարուին երկրի բոլոր շրջաններուն մէջ՝ սկսեալ գործաւորներէն մինչև մտաւորականներ:

Այսպէս՝ կը ձերբակալուին հեղինակաւոր դաշնակցական գործիչներ, և Չեկայի զնտանները կը նետուին Համօ Օհանջանեան, Ռուբէն Դարբինեան, Վահան Նաւասարդեան, Լևոն Շանթ, Յովսէփ Տէր-Դաւթեան, Նիկոլ Աղբալեան, Յովհաննէս Քաջազնունի, Արշալոյս Աստուածատրեան, Վարոս Բաբայեան, բժշ. Յ. Մելիքեան, Գ. Վարշամեան, խմբապետ Համազասպ (Սրուանձտեան) և սոցիալ-դեմոկրատ ղեկավար Բախշի Իշխանեան:

Բանտերու մէջ Չեկայի հրամանով գաղտնաբար գնդակահարութիւններ կը գործադրուին. պոլշևիկներու ձեռքով կը կացինահարուին Համազասպը, գընս-

դապետ Ղորղանեանը և 30 ուրիշներ: Բանտերուն մէջ կուտակուածներու թիւը կը հասնէր 2.200-ի՝ բացի Չեկայի մէջ եղածներէն:

Երևանի բանտին մէջ կային 900, Էջմիածին՝ 400, Ախտա՝ 150, Աշտարակ՝ 240, Ելենովա՝ 30, Նոր Բայազէտ՝ 150, Ղամարլու՝ 120 հոգի:

Քեռի Թադոն 18 փետրուար 1921-ին Կարօ Սասունիի գունդին միանալով՝ կը մասնակցի Փետրուարեան ապստամբութեան համաժողովրդային շարժումին՝ սասունցի ձիաւորներու հետ Էջմիածինէն արշաւելով դէպի Երևան:

Փետրուարեան ապստամբութեան օրերուն Չեկայի կատարած անմարդկային արարքներուն, Էջմիածնի բանտին մէջ բանտարկեալներու ազատումին, ինչպէս նաև Մուրատի մասին այսպէս կը նկարագրէ քեռի Թադոն. «Խմբապետ Սասունցի Մուշեղի խումբին մէջ էին սասունցի կռուող ուժերը, իսկ մենք՝ մշեցիներս, խմբապետ Մուրատի հետ էինք: 175 ձիաւորներ Էջմիածինի վրայ յարձակեցանք, որպէսզի ազատէինք բանտարկեալները: Մուրատ տասնեակ մը տղոց հետ մնաց Էջմիածինի կեդրոնը, որպէսզի արգելք հանդիսանայ Չեկայի կողմէ կատարուելիք յարձակումին: Իսկ մենք անվախ կերպով մօտեցանք բանտի դռներուն:

Մեր ուժերը կռուելով երբ կը մօտենային բանտին, մեծ զարմանք պատճառեց մեզի, երբ տեսանք, որ ժողովուրդը որը բահով, որը կացիններով կը յարձակէին Չեկայի վրայ: Այս շատ լաւ ազդեցութիւն ըրաւ մեր վրայ: Իրենց բերած կացիններովն էր, որ բանտի դռները կոտրելով՝ ազատեցինք բանտարկեալները: Մուրատ իր ճերմակ ձիուն վրայ նստած՝ կը շրջէր մեր չորս կողմը: Չեկան տեսնելով այս՝ ստիպուեցաւ նահանջելով անցնիլ Երևան»:

1925-ին՝ Վարդավառի կիրակիի գիշերը, Դաւիթ Դաւոյի (Գարեգին Մովսէսեան) և իր քրոջ որդիին՝ Արտաշէս Ստեփանեանի հետ կ'ահաբեկեն ներքին Աղաճա Ղալա գիւղի խորհուրդի նախագահ լրտես Մանուկ Խուրշոյեանը:

Այդ օրերուն Չեկան բազմաթիւ նշանաւոր դաշնակցականներ կը ձերբակալէր, ինչպէս՝ Արտաշէս Ստեփանեանը, Պետօ Ղազարը, Հռիփսիմէ Մուշեղեանը, Արաբոյի հօրեղբօր որդին՝ Յակոբ Երէցեանը, բժիշկ Միքայէլ Մելիք-Մուրատեանը և շուրջ 120 հոգի՝ իբրև դաշնակցականներ:

Քեռի Թադոն հին ու փորձառու ֆետայի էր, քաջածանօթ էր համայնավարներուն. ձերբակալումէ փախելով՝ շուտով լեռ կը բարձրանայ: Կարճ ժամանակ մը յետոյ, երբ Պետօ Ղազար (Ղազար Պետոյեան) կ'ազատի, երբ մէկ շաբաթ ետք կ'իմանայ, որ զինք կրկին պիտի ձերբակալեն, լեռ կը բարձրանայ. հոն կը հանդիպի Մօրուք Կարոյին, քեռի Թադոյին, հարիւրապետ Մխիթար Վարդանեանին, ասորի Միքայէլին և ուրիշներու:

Անոնք մինչև 1929-ի վերջը կը մնան լեռներու վրայ ապաստանած:

Քեռի Թադոն կ'որոշէ խումբ մը ընկերներու հետ անցնիլ Թեհրան. այսպէս՝ 38 հոգիէ բաղկացած խումբ մը 1930-ին ճամբայ կ'ելլէ դէպի Թեհրան: Երեք ամիս խումբը բաւական ծանր դժուարութիւններէ ետք հազիւ 13 հոգի մնացած՝ կը հասնին Թաւրիզ՝ իրենց հետ ուղեցոյց ունենալով հին ու փորձառու սուրհանդակ վալատ Դաւոն:

Հազիւ քանի մը ամիս անցած էր, հայ խորհրդային կուսակցական և պետական գործիչ, ԽՍՀՄ համայնավարական կուսակցութեան անդամ, Հայաստանի կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղար (1930-1936) Աղասի Խանճեանը սուտ ներում կը շնորհէ հայ փախստականներուն: Խումբէն մաս մը կը վերադառնայ Հայաստան, իսկ քեռի Թադոն, Պետօ Ղազարը և Մօրուք Կարոն չհաւատալով այս սուտ ներումին՝ կը մնան Պարսկաստան:

Այնուհետև քեռի Թադոն Ռևանտուզի (այժմ՝ Իրաքի մէջ) վրայով կ'անցնի Իրաք, ապա՝ Սուրիա՝ նախ՝ Գամիշլի, ապա՝ Հալէպ:

1934-ին քեռի Թադոն շատ կը փափաքէր անցնիլ Պարսկաստան՝ անկէ անցնելու Հայաստանի սահմանը, կինն ու իր երկու դուստրերը իր հետ բերելու, սակայն չի յաջողիր:

Ժամանակ մը կը մնայ Հալէպ: Մեր սերունդը և աւելի երէցները կը յիշեն Հալէպի Թիլէլ պողոտայի վրայ գտնուող ՀՄԸՄի ակումբը, որ ինքնուրոյն դեր ունեցած է երբեմնի հայ կեանքին մէջ: Հոն կը գործէին ՀՄԸՄը, Հայ երիտասարդաց միութիւնը, միութենական մարմիններն ու «Քրիստափոր» գրադարանը: Ընկերային այս օճախը շատերուն երկրորդ տունը դարձած էր: Քեռի Թադօ շրջան մը բնակած է վերոնշեալ ակումբի հնամենի արաբական բակի երդիքին տակ՝ առաջին յարկը, փոքր սենեակի մը մէջ, ուր յատուկ ուշադրութեան արժանի եղած է:

Այնուհետև կ'անցնի Պէյրութ: Երկար ժամանակ Պէյրութ մնալէ յետոյ ծերութեան պատճառով զինք կ'ուղարկեն Հալէպի հայ ծերանոցը: Քեռի Թադոն ծերանոցին մէջ իր բնակութեան ընթացքին հոն պատսպարուողներու և անմիջական շրջապատին կողմէ անխտիր շատ սիրուած և յարգուած էր իր լաւ բնաւորութեան ու մանաւանդ, որ մարտնչած ու կեանքը նուիրաբերած էր հայ ազգին համար: Անոր կեանքը իսկական վէպ էր եղած:

Քեռի Թադոն իր վերջին տարիներուն ամէն առիթին առօրեայ խօսակցութեան ընթացքին խիստ ցաւ կը զգար՝ ի տես օտար երկիրներու ճոխութեան հրապուրող մաս մը հայերու մեկնումին, ինչ որ պատուհաս է. իր անմիջական Մուշի գաւառաբարբառի խօսակցութեամբ յաճախ կ'ըսէր, թէ աւելի լաւ է կատուի գլուխ ըլլալ, քան՝ առիւծի պոչ:

Անոր ամէնէ մեծ երազն էր Հայաստան մեկնիլ և հոն իր կեանքի վերջալոյսը իր հարազատներուն մօտ անցնել: Այս յոյսով անհանգիստ կ'ըլլար և օր առաջ անհամբեր կը սպասէր անցագրին պատրաստութեան և շուտով մեկնելուն, երբ, աւա՜ղ, չիրականացաւ իր երազը, և ան մահացաւ 1 հոկտեմբեր 1967-ին Հալէպի հայ ծերանոցին մէջ՝ հայրենիքի և իր հարազատներուն կարօտը սրտին:

Դաշնակցական ֆետայի քեռի Թադոյի անշնչացած մարմինը հայ ծերանոցէն կը փոխադրուի Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր ազգային

և կուսակցական շարքային ընկերներու ու երիտասարդներու հոծ բազմութիւն մը ներկայ կ՚ըլլայ՝ յարգանքի վերջին տուրքը տալու ազգային հերոսին դաշնակցական ֆետայիի անշնչացած մարմինին առջև: Իր յոգնատանջ մարմինը եկեղեցական բարձր դասու կարգադրութեամբ, փառաւոր յուղարկաւորութեամբ մը ամփոփուեցաւ ազգային գերեզմանատունը՝ բազմաթիւ ծաղկեպսակներու շուքին տակ:

Քեռի Թադոն, ազգային դատի իրականացման ի խնդիր, երկար տարիներուն պայքարին մէջ արտակարգօրէն եղած է յանդուգն: Ան ունէր խնամուած փալապեխ մը, անոր տակ ժպիտ մը՝ զարմանալի կերպով միախառնուած զայրոյթի ու հաւատքի: Իր մարմնական տոկունութիւնը, մագնիսական արծիւ աչքերով իր բարձրադիր գլուխը ներշնչարան եղած են իր յաջորդներուն՝ իբր խորհրդանիշ հզօրութեան ու յանդգնութեան:

Քեռի Թադոյի յիշատակը յարգելու և վառ պահելու համար տարիներ շարունակ, պարտք զգացած եմ, մինչև օրս ամէն անգամ, որ առիթը ունենամ ազգային գերեզմանատուն այցելել և անմիջական ենթեցեալ պարագաներուս և կարգ մը անուանի գործիչ-մըտաւորականներու ու հերոսներու շիրիմներուն այցելութեանս կարգին անպայման ուխտաւորի մը պէս կ՚այցելեմ նաև Թադոյի գերեզմանը և անոր յիշատակին աղօթք ու պտղունց մը խունկ կը ծխեմ: Այս յիշատակի արարողութեանս շատ անգամ ուրիշներ ալ մասնակից դարձուցած եմ, ինչպէս նաև՝ սերունդներ դաստիարակելու ընթացքին տարիներ առաջ պատանիներս ալ:

Այստեղ քեռի Թադոյի հարուստ կենսագրութեան աւարտին խիստ կարևոր կը նկատենք մեր ուսումնասիրութեան ընթացքին յայտնաբերած, կարևոր քանի մը կէտեր պարզաբանելու.

ա. Անոր բուն անուն-ազգանունը կարգ մը տեղեր յիշատակուած են Յարութիւն Սարգիսեան:

բ. Ծնունդեան և մահուան թուականները շփոթ ստեղծած են, գերեզմանին վրայ արձանագրուած է 1893-1968, սակայն այլ տոմարներու մէջ՝ 1874-ին ծնած և մահացած՝ 1963-ին:

Եզրակացնելով՝ կարելի է ըսել, որ քեռի Թադո պատանի տարիքէն հայրենակիցներուն հանդէպ իրագործուած անարդարութեան իբրև արդիւնք՝ նետուած է դէպի ազատագրական պայքար ու եղած է Զօրավար Անդրանիկի, Քեռիի, Սմբատի և Սեբաստացի Մուրատի մարտական գումարտակներուն մէջ և ծառայած անոնց 14 տարիներ՝ մասնակցելով միշտ յառաջապահ դիրքի վրայ, շատ մը դիւցազնական կռիւներու, արիամարտելով մահը ու երազելով միշտ հայրենիքի ազատագրումը:

Ծառայած է ամբողջական նուիրումի և գերագոյն զոհաբերութեան ոգիով, անձնուիրաբար և անշահախնդիր՝ հետամուտ ըլլալով հայրենիքի ազատագրման և մեր ազգային ճակատագրի վերափոխման:

Գրող, հրապարակախօս Սպարտակ Ղարաբաղցեան առիթով մը սաստնցի իր ընկերոջը, որ բնակութիւն հաստատած էր Գամիշլի (Սուրիա), անոր յուշերը արձանագրելով իր «Արևի բնակավայրը» պատմուածքներու գիրքին (2016) մէջ՝ քեռի Թադոյի մասին կ՚անդրադառնայ «Հալէպ» բաժինի «Ղամիշլի» պատումին մէջ (էջ 166) հետևեալ տողերով. «Յիշողութիւնը յորդում էր... մի պահ դադար առնելուց յետոյ շարունակեց,—...ինչ տղաք ունէինք. ցերեկները խանութպան, հացթուխ, ոսկերիչ էին, գիշերները՝ վրիժառու վագրեր: Գաղտնի, անսկատ սահմանը կանցնէին՝ թուրք որսալու: Երկու մարդ գիտէին՝ քեռի Թաթոն ու հայրս... սահմանից այն կողմ քեռի Թաթոն հաւատարիմ քիւրտեր ունէր. նրանք զգուշացրել էին, որ գաղտնի ոստիկանութիւնը հոտն առել է, ու առ ժամանակ «թուրք որսալու» գործողութիւնը պէտք է կենայ, դադրի»:

Վերջապէս, քեռի Թադոն առինքնող մարմնաւորումն է եղած մարտունակ քաջութեան, յեղափոխական կամքի ու անկեղծ զինուորի նկարագրին՝ մարմնաւորելով անհաւասար ուժերով ու յանուն գաղափարի մղուած յարատև կռուի մէջ մազերը ճերմկցուցած, բայց յոգնութիւն և ծերութիւն չճանչցող անկեղծ դաշնակցականին և անբասիր ֆետայիին:

Իբրև այդպիսին՝ հայ ժողովուրդի հերոսական դէմքերու լուսապսակ մատեանին մէջ ահաւասիկ կ՚արձանագրենք խիզախ, յեղափոխութեան հաւատարիմ ու անձնուրաց մարտիկի անուն մը ևս, որ իր ուրոյն տեղը գտնէ մեր հայ յեղափոխական դէմքերուն շարքին: Որպէսզի ան դիւցազուններու կարգին ըստ արժանւոյն, յաւէտ ապրի հայ ժողովուրդի յիշողութեան մէջ:

Օգտագործուած աղբիւրներ

1. – Անձնական արխիւներ:
2. – Աւս, «Յեղափոխական ալպոմ», Գ. շարք, թիւ (28) 4, Հալէպ, 1960:
3. – Աւս, «Յեղափոխական ալպոմ» (Ազատագրական պայքարի յուշամատեան), 8-րդ հատոր, թիւ 9 (93), Պէյրութ, 1971:
4. - Խատիսեան Ալեքսանդր, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Պէյրութ, 1968:
5. – Մանճիկեան Յակոբ, «Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», (100-ամեակ, Ալբոմ – Ատլաս, Ա. Հատոր – Դիւցազնամարտ, 1890-1914), Լոս Անճելըս, Քալիֆորնիա, 1992:
6. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Ա. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1972:
7. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Բ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1973:
8. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Գ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1974:
9. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Դ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1975:
10. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Ե. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1977:
11. – Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Զ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1979:
12. – Սասունի Կարօ, «Փետրուարեան ապստամբութիւնը (1921 թ.)», Պէյրութ, 1970:
13. – Վրացեան Սիմոն, «Կեանքի ուղիներով», հատ. Զ., Պէյրութ, 1967:

Համակարգը, որ կ’ուզենք կերտել

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Նախ՝ բացատրութիւն մը:

Առաջին բառը՝ «համակարգը», կը վերաբերի մարդկային այն հասարակարգին, որ կ’առնչուի ոչ միայն վայրի մը, երկրի մը կամ այդ վայրի բնակչութեան կամ ըսենք՝ ազգի՛ն, ոչ միայն տարածաշրջանի մը ու անոր բաղկացուցիչ մասերուն, իրարու դրացի երկիրներու, այլև համայն մարդկութեան, որ կը պարփակէ երկրագունդի բոլոր տարածաշրջաններն ու անոնց բնակչութիւնը, այլ խօսքով՝ կ’առնչուի բոլոր ազգերուն ու աւելի փոքր հաւաքականութիւններուն:

Երկրորդը՝ «կ’ուզենք»-ը, շատ լայն առում ունի, բայց նպատակս զայն սահմանափակել է մեզմով՝ հայութեամբ: Մենք ալ մաս կը կազմենք այս մոլորակի բնակչութեան ու իբր անոր մէկ փոքր մասնիկը՝ կրնանք խօսիլ, ուզե՛լ...

Գալով երրորդ բառին՝ «կերտելուն», իհարկէ, շատ յաւակնոտ տպաւորութիւն կրնայ ձգել և մղել ոմանց հարց տալու, թէ. «Մենք՝ ո՞ւր, համակարգ կերտելու կարողութիւն կամ հնարաւորութիւն ունեցողներն՝ ո՞ւր»: Քանի մը բառ անցաւ մտքէս նախքան «կերտելուն» հասնիլս. «ցանկալ», «որոնել», «տեսնել» և այլն՝ բոլորն ալ կրաւորական իմաստով, այսինքն՝ կարծես ուրիշէն կ’ակնկալենք, որ այդ համակարգը ստեղծէ (ու մենք վայելենք զայն): Իսկ մե՞նք: Ընելիք մը չունի՞նք, դեր մը չունի՞նք խաղալիք այդ համակարգը ստեղծելուն մէջ, որքան ալ համեստ ըլլայ այդ դերը:

Ուրեմն, ահա այս ըմբռնումով ալ փորձեմ պարզել միտքս:

Կ’ուզենք, որ վերջ գտնէ «իրաւունքը զօրաւորին» համակեցութեան սկզբունքը, որ ժառանգած ենք մեր նախա-նախա-նախահայրերէն, երբ անոնք տակաւին շամբերու բնակիչ էին: Անոնցմէ, սակայն, հասանք աստուածակերտ մարդուն, որուն գերագոյն իտէալը «իրաւունքը բոլորին»-ը պիտի ըլլայ: Հաւասարութեան այս գաղափարը մարդկային բոլոր չափերու հաւաքականութիւնները առաջնորդող լուսաստղը պէտք է հանդիսանայ: Այսինքն՝ անկախ իրենց թիւէն, անկախ յառաջդիմութեան իրենց մակարդակէն, բոլորը՝ ազգախումբերը, ազգերը, թէ աւելի փոքր միաւորները, հաւասարապէս իրաւունք պիտի ունենան ապրելու իրենց բնակավայրին մէջ կամ ի հարկին այլ բնակավայրի մը՝ իրարու հետ հաշտ, իրարու հետ գործակցելով, փոխանակելով վերապրումի անհրաժեշտ նիւթերը ջերմուժի, մթերքներու, հմտութեան և այլն, միասին դիմագրաւելով իրենց տարածքին, տարածաշրջանին կամ երկրագունդին սպառնացող



վտանգներն ու աղէտները:

Կ’ուզենք, որ վերջ գտնէ նաև անաշխատ եկամուտի տիրանալու մոլութիւնը, այլև աշխատանքը գնահատուի ըստ արժանւոյն. ոչ մէկ անհատ ուրիշին քրտինքէն օգտուելով, զայն շահագործելո՛վ՝ ապահովէ իր կեցութիւնը, ոչ մէկ հաւաքականութիւն ալ նոյնը ընէ աւելի տկար հաւաքականութեան մը նկատմամբ՝ ճնշումներով, կեղծ խայծերով կամ այլապէս: Գոցուի՛ վիհը, որ ներկայիս հետզհետէ կ’ընդլայնի մարդկութեան չունևոր ջախջախիչ մեծամասնութեան և ունևոր ճոճիմ փոքրամասնութեան միջև:

Կ’ուզենք, որ հիմնական սնունդը, առողջապահական պայմաններն ու միջոցները և պարբերական հանգիստի վայելումը մարդկային հիմնական իրաւունքներուն մաս կազմեն:

Կ’ուզենք, որ նախնական ուսումը նոյնպէս ըլլայ հիմնական իրաւունք, իսկ բարձրագոյն ու մասնագիտական ուսումը՝ բոլորին մատչելի, առանց որևէ խտրութեան՝ սեռի, գոյնի, թէ այլ: Կանուխէն նկատուին ու քաջալերուին մանուկներու բնատուր ձիրքերը, ամեն միջոց տրամադրելի ըլլայ զանոնք դրսևորելու, զարգացնելու, մարդկութիւնը հարստացնելու անոնց ընծայելիք ներդրումով, այդ ըլլայ գիտութեան, մշակոյթի, մարմնամարզի, թէ հաւաքական կեանքի որևէ այլ ոլորտի մէջ:

Կ՚ուզենք վերջապէս, որ մարդ անհատը ապրի իբր հաւաքական էակ, իբր անբաժանելի բաղկացուցիչը հաւաքականութեան ու սորվի մտածել ու գործել սեփական շահէն, սեփական բարիքէն առաջ, կը կրկնեմ, առա՛ջ՝ հաւաքակա՛ն շահին ու հաւաքակա՛ն բարիքին մասին՝ գիտակցելով, որ առանց այս վերջիններուն իր սեփականները կ՚ըլլան խաբուսիկ միայն՝ աւազի վրայ, ոչ թէ ժայռի վրայ հիմնուած:

Աշխարհը ներկայիս կը դառնայ այս բոլորին հակառակ ուղղութեամբ, ու զարմանալի չէ, որ հետզհետէ կը բազմանան անմարդկային, վայրենական արարքներ յուսահատութեան մատնուող անհատներու, թէ խումբերու կողմէ, նոյնիսկ՝ ազգերու:

Կրնա՞նք կանգնեցնել այս թաւալումը ու մեր ցանկացած ուղղութեամբ դարձնել երկրագունդը:

Ահա մարտահրաւէրը, որ կը դրուի մարդկութեան առջև, նաև՝ մե՛ր առջև: Մեր առջև. ըլլա՛յ Հայրենիքի մէջ (Հայաստանի Հանրապետութիւն, Արցախի Հանրապետութիւն, Ջաւախք, թէ բռնագրաւուած հայրենի հողեր), ըլլա՛յ Սփիւռքի մեր բնակած իւրաքանչիւր երկրի հայ համայնքներուն առջև:

Մեր քաղաքական կուսակցութիւններէն և ազգային բոլոր կառոյցներէն ամեն մէկը կրնայ իր սեփական ծրագիրը ունենալ (կամ զայն համալրել)՝ այս բոլորէն մաս մը, մասնիկ մը իրագործելու համար,

կրնայ իր սեփական գործելակերպն ալ ունենալ (ու զայն ալ պատշաճեցնել աշխարհը յուզող նորագոյն խնդիրներուն) և ինչ որ ալ ընէ, նուազագոյնն ալ, որ իրագործէ, քայլ մը կ՚ըլլայ ճիշտ ուղղութեամբ, քայլ մը՝ մեր ուզած համակարգը կերտելու ուղղութեամբ: Յաւելեալ քար մը՝ այդ համակարգի այլևս անխորտակելի դառնալիք շէնքին վրայ:

Այո՛, պէտք է կերտենք այդ արդար համակարգը՝ իր համապատասխան կենսական կառոյցներով, եթէ պիտի վերապրինք իբր ազգ, իբր մարդկային հաւաքականութիւն, իբր մարդկութիւն: ■

ԴԱՐԻ ԿՈՂՈՊՈՒՏԸ.
ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
1914-1923 ԹԹ.

Ամփոփում

(հատվածներ)

Հայտնի իրողություն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության արտաքին և ներքին առևտրում, արդյունաբերական արտադրության մեջ և բանկային գործում հայերն ազդեցիկ դիրքեր էին գրավում:

Մի ամբողջ ժողովուրդ կողոպտելու համար նախևառաջ հարկ էր հայերի ունեցվածքը դարձնել տիրազուրկ: Այդ նպատակով երիտթուրքական իշխանությունները 1915 թվականի հունիսի 1-ին հրապարակեցին «Տեղահանության օրենքը», որի գործադրմամբ ավելի քան 1.500.000 հայ բռնի տեղահանվեց և ոչնչացվեց: 1915 թվականի հունիսի 10-ին հրապարակվեցին «Այլ վայրեր տեղափոխված հայերին պատկանող անշարժ գույքերի և հողատարածքների կառավարման ձևի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները: Վերջիններս ցուցումներ էին բովանդակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ գույքի» հետ վարվելու մասին: 1915 թվականի սեպտեմբերի 13-ին երիտթուրքական իշխանությունները հրապարակեցին «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքը, իսկ 1915 թվականի հոկտեմբերի 26-ին՝ այդ օրենքի գործադրման համար այլ վայրեր տեղափոխված անհատների լքյալ գույքերին և պարտքերին վերաբերող կանոնադրությունը: Այսպիսով՝ օրինականացվեց հայերի շարժական գույքերի, կալվածքների, և ողջ հարստության բացահայտ կողոպուտն ու յուրացումը, որն արդեն իսկ գործադրվում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: «Լքյալ գույքերի մասին» իրավական այս ակտերը ստեղծված էին ոչ թե հայերի իրավունքները պաշտպանելու, այլ զանգվածային թալանը զսպելու և պետական գանձանակը լցնելու նպատակով: Հայկական կոտորածներն ուղեկցվեցին հայերի շարժական և անշարժ գույքերի կողոպուտով, որին մասնակցել են երկրի բնակչության բոլոր խավերը:

Տեր դառնալով հայ ժողովրդի անհատական և հավաքական ունեցվածքին՝ երիտթուրքական իշխանությունները բռնագրավեցին նաև հայերի՝ օսմանյան դրամատներում և ապահովագրական ընկերություններում պահվող ավանդները:

Աճուրդի առարկա էին դարձել ոչ միայն նյութական բարիքները, այլև մարդկային կյանքը: Թուրքական կառավարությունն ահռելի գումարների տեր դարձավ՝ նաև հայ կանանց ու մանուկներին վաճառելով:

Երկիրը հայաթափելուց հետո թուրքական իշխանությունները 1920, 1923, 1927 թվականներին ընդունեցին օրենքներ, որոնք հայերին զրկեցին քաղաքացիությունից և իրենց պապենական երկիրը վերադառնալու իրավունքից: Այս օրենքները թուրքական իշխանություններին հնարավորություն տվեցին տիրանալ հայերի ողջ ունեցվածքին:

Հայերի ունեցվածքի ընդհանուր թալանից բաժին հասավ նաև օտար պետություններին: Լքյալ գույքերի մասն էին կազմում օտար ապահովագրական ընկերություններին հայերի՝ ոսկեդրամով վճարված գումարները: Այս ապահովագրական ընկերությունները հայերի նկատմամբ իրենց ստանձնած ֆինանսական պարտավորությունները չիրականացնելով՝ յուրացրին նրանց գումարները: Հայերի հետ նույն կերպ վարվեցին նաև Օսմանյան կայսրությունում գործած օտար դրամատները:

Այսօրվա թուրքական տնտեսությունը հենված է հայերից բռնագրավված ունեցվածքի վրա:

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԱՆ, ԴԱՐԻ ԿՈՂՈՊՈՒՏԸ. ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1914-1923 ԹԹ., ԵՐԵՎԱՆ, 2013, էջ 163-165:

ԴՐՕՇԱԿ

Գարունը
Ախթամար կղզում